ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2018

Բովանդակություն

1. Հանցավորության ընդհանուր վիճակը, կառուցվածքը, շարժընթացը, հանցագործությունների բացահայտման վիճակը 3
2. Հետքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.....21
3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ.....53
4. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ.....59
5. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ 75
6. Պետական շահերի պաշտպանության ոլորտ.....83
7. Միջազգային-իրավական համագործակցության ոլորտ 87
8. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման ոլորտ.....96
9. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ.....103
10. Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման ոլորտ.....116

1.Հանցավորության վիճակը, կառուցվածքը, շարժընթացը, հանցագործությունների բացահայտման վիճակը

2017 թվականի ընթացքում Հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 20.285 դեպք (2016թ.՝ 18.764), որոնցից 10.220-ը՝ Երևան քաղաքում:

Հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է, որ թեև ընդհանուր հանցավորության քանակական ցուցանիշն աճել է, սակայն առանձին հանցատեսակներով, հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով, արձանագրվել է հանցավորության մակարդակի էական նվազում:

Այսպես.

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 1521-ով կամ 8.1%-ով: Դրան զուգահեռ՝ առանձնապես ծանր հանցագործության դեպքերը նվազել են 33-ով կամ 16.7%-ով (198-165), իսկ ծանր հանցագործության դեպքերը՝ 352-ով կամ 11.4%-ով (3081-2729): Միաժամանակ, միջին ծանրության հանցագործության դեպքերն աճել են 284-ով (4728-5012) կամ 6%-ով, իսկ ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքերը՝ 1622-ով (10.757-12.379) կամ 15%-ով:

Փաստորեն, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները նվազել են 385-ով կամ 13.3%-ով, իսկ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության դեպքերն աճել են 1906-ով կամ 12.3 %-ով:

Հարկ է արձանագրել նաև, որ նշված ոչ մեծ ծանրության հանցագործությունների ճնշող մեծամասնությունը մասնավոր մեղադրանքի դեպքեր են:

Տարեթիվը	Հանցագործության դեպքերի ընդհանուր թիվը	ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքեր	միջին ծանրության հանցագործության դեպքեր	ծանր հանցագործության դեպքեր	առանձնապես ծանր հանցագործության դեպքեր
2016	18.764	10.757	4728	3081	198
2017	20.285	12.379	5012	2729	165
2017	**+1521**	**+1622**	**+284**	**-352**	**-33**
աճը	**+8,1%**	**+15.1%**	**+6%**	**-11.4%**	**-16.7%**

Փաստորեն, եթե 2016թ. առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցագործությունների 1.05%-ը, ապա 2017թ.՝ ընդամենը 0.80%-ը: Ծանր հանցագործությունները 2016թ. կազմել են ընդհանուր հանցագործությունների 16.4%-ը, իսկ 2017թ.՝ 13.5%-ը:

2016 թվական **2017 թվական**



2007-2017 թվականների հանցավորության կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ընդհանուր հանցագործությունների կազմում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշիռն արտահայտող միջին տարեկան տոկոսային ցուցանիշը կազմել է 27.0%: Մինչդեռ, 2017թ. ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցագործությունների ընդամենը 14%-ը:



Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ 2007 թվականից սկսած նման ցուցանիշ գրանցվել է առաջին անգամ, որն այդ տարիների միջին տարեկան ցուցանիշի գրեթե կեսն է, իսկ դրան մոտ ցուցանիշ՝ 17.0%, գրանցվել է 2012 և 2016 թվականներին, ինչը, սակայն, 3.0%-ով զիջում է 2017թ. ցուցանիշին:

Կարծում ենք, որ այս թվերը հանցավորության կառուցվածքի այն որակական ցուցանիշներն են, որոնք խոսում են հանցավորության շարժընթացի էապես բարելավման մասին:

Ստորև ներկայացվում է 2007-2017թթ. հանցավորության կառուցվածքը՝ ըստ հանցագործությունների վտանգավորության աստիճանի.

տարեթիվը	Հանցագործությունների ընդհանուր թիվը	Ոչ մեծ ծանրության հանցագործություններ		Միջին ծանրության հանցագործություններ		Ծանր հանցագործություններ		Առանձնապես ծանր հանցագործություններ		Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ	
2007	8428	3513	41,7%	1286	15,2%	3436	40,8%	193	2,3%	3629	43%
2008	9271	3442	37%	1556	17%	4083	44%	190	2%	4273	46%
2009	14339	6740	47%	2182	15,2%	5154	36%	263	1,8%	5417	38%
2010	15477	7664	49,5%	2509	16,2%	5007	32,4%	297	1,9%	5304	34%
2011	16572	8478	51%	3785	23%	3818	23%	491	3%	4309	26%
2012	15776	9420	60%	3656	23%	2544	16%	156	1%	2700	17%
2013	18333	11372	62%	3743	20,4%	3088	16,8%	130	0,7%	3218	18%
2014	17546	9981	57%	4073	23%	3319	19%	173	1%	3492	20%
2015	17043	9185	54%	4455	26%	3238	19%	165	1%	3403	20%
2016	18764	10757	57%	4728	25%	3081	16%	198	1%	3279	17%
2017	20285	12380	61%	5012	24,7%	2729	13,4%	164	0,8%	2893	14%

Ինչպես վերը նշվեց, 2017թ. հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 20.285 դեպք, այսինքն՝ 100.000 բնակչին բաժին է ընկնում 681 դեպք: Պետք է նշել, որ այս ցուցանիշով մեր երկիրը էական դրական պատկեր է ապահովել այնպիսի երկրների շարքում, ինչպիսիք են՝ Ղազախստանի Հանրապետությունը, որտեղ այդ ցուցանիշը 1754 է, Ռուսաստանի Դաշնությունը՝ 1402, Ուկրաինան՝ 1238, Մոլդովան՝ 1003, Բելառուսի Հանրապետությունը՝ 909:

Հանցավորության վիճակի որակական բարելավման պատկերն ավելի ցայտուն է դառնում, երբ վերլուծում ենք հանցավորության վիճակը՝ ըստ կոնկրետ հանցատեսակների:

Այդ վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կազմում էական նվազում է արձանագրվել հանրային մեծ վտանգավորություն ունեցող այնպիսի հանցատեսակներով, ինչպիսիք են՝ սպանությունը, սպանության փորձը, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելը, ավազակությունը, բնակարանային գողությունը:

Առանձնապես ծանր հանցագործություններից հատկանշական է սպանությունների թվի էական նվազումը. 2017 թվականին գրանցված սպանության դեպքերը նվազել են 17-ով կամ 25.8%-ով (66-49): Ընդ որում, վերջին 11 տարիներին, որպես կանոն, նկատվել է սպանությունների թվի կայուն նվազում՝ 2007թ.-ին՝ 69, 2017թ.-ին՝ 49:

Պետք է նշել նաև, որ 2017 թվականին սպանության հատկանիշներով հարուցված քրեական գործերից 6-ը՝ անձանց անհետ կորելու դեպքերն են, և, հետևաբար, դեռևս փաստ չէ, որ այդ անձինք դիտավորությամբ, ապօրինաբար զրկվել են կյանքից: Ի դեպ, այդ դեպքերից մեկով հարուցված և վարույթը կասեցված քրեական գործով անհայտ կորածը 2018 թվականի փետրվարի 1-ին հայտնաբերվել և ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին, որի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվել է՝ սպանության դեպքի բացակայության հիմքով:

Նշենք, որ 100.000 բնակչին բաժին է ընկնում սպանության 1.6[1] դեպք:

Համեմատության համար նշենք, որ ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը 2012 թվականին, հավաքագրելով 1995-2011 թթ. աշխարհի շատ երկրների ցուցանիշները, կատարել է վերլուծություն և ամփոփում, որի արդյունքներով դուրս է բերել 100 հազար մարդու հաշվով սպանությունների գործակիցներն աշխարհում, աշխարհամասերում և աշխարհի շատ պետություններում:

Դրանք ներկայացվում են ստորև[2]:

---

[1] 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալը՝ 2986100, վերցվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից: http://www.armstat.am/file/article/sv_12_17r_520.pdf /կետ5.2/:

[2] https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%BF%D0%B8%D1%81%D0%BE%D0%BA_%D1%81%D1%82%D1%80%D0%B0%D0%BD_%D0%BF%D0%BE_%D1%83%D1%80%D0%BE%D0%B2%D0%BD%D1%8E_%D1%83%D0%BC%D1%8B%D1%88%D0%BB%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D1%85_%D1%83%D0%B1%D0%B8%D0%B9%D1%81%D1%82%D0%B2#%D0%A3%D0%BC%D1%8B%D1%88%D0%BB%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B5_%D1%83%D0%B1%D0%B8%D0%B9%D1%81%D1%82%D0%B2%D0%B0_%D0%B2_%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8_%D0%BF%D0%BE_%D0%B3%D0%BE%D0%B4%D0%B0%D0%BC

100 հազար մարդու հաշվով սպանությունների գործակիցը աշխարհում, աշխարհամասերում և որոշ պետություններում		
Տարածքը	*Սպանությունների ընդհանուր թիվը*	***Գործակիցը***
Աշխարհ	*466078*	***6,9***
Աֆրիկա	*169105*	***17,0***
Ամերիկա	*144648*	***15,4***
Ասիա	*127120*	***3,1***
Եվրոպա	*24025*	***3,5***
Օվկիանիա	*1180*	***2,9***
ԱՄՆ	*14748*	***4,8***
ՌԴ	*14574*	***10,2***

Թեև ցուցանիշները համեմատության համար մեթոդական առումով կարող են տեղին չլինել, նկատի ունենալով ժամանակահատվածների տարբերությունը, սակայն ընդհանուր պատկերացում կարող են տալ:

1995-2017թթ. նույն ցուցանիշը ՀՀ-ում ներկայացնենք ստորև.

Տարեթիվը	*1995-2011թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների թիվը՝ ըստ ՀՀ*	*1995-2011թթ. բնակչության թիվը ՀՀ-ում*[3]	*Գործակիցը 100 հազար*

[3] 1995-2011թթ. մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները վերցվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից: http://www.armstat.am/am/?nid=82&id=1991 Մաս 1: Ամփոփում, էջ 22:

	ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների	*/հազար մարդ/*	*մարդու հաշվով*
1995 թ.	*116*	*3260.3*	*3,6*
1996 թ.	*114*	*3248.8*	*3,5*
1997 թ.	*100*	*3246.0*	*3,1*
1998 թ.	*93*	*3238.2*	*2,9*
1999 թ.	*90*	*3232.1*	*2,8*
2000 թ.	*91*	*3226.9*	*2,8*
2001 թ.	*88*	*3213.0*	*2,7*
2002 թ.	*69*	*3208.3*	*2,2*
2003 թ.	*76*	*3191.2*	*2,4*
2004 թ.	*73*	*3173.8*	*2,3*
2005 թ.	*53*	*3156.0*	*1,7*
2006 թ.	*72*	*3136.8*	*2,3*
2007 թ.	*69*	*3117.4*	*2,2*
2008 թ.	*78*	*3097.3*	*2,5*
2009 թ.	*68*	*3076.8*	*2,2*
2010 թ.	*41*	*3055.2*	***1,3***
2011 թ.	*60*	*3018.9*	*2*
2012թ.	***50***	***3021.4***	***1,6***
2013թ.	***48***	***3026.9***	***1,6***
2014թ.	***53***	***3017.1***	***1,7***
2015թ.	***52***	***3010.6***	***1,7***
2016թ.	***66***	***2998.6***	***2,2***
Տարեկան միջին՝ ***առանց 2010-2016թթ. տվյալների հաշվառման***	*79.5*	*3170.4*	*2,5*
Տարեկան միջին	***73.6***	***3135.1***	***2.3***
2017թ.	*49*	*2986.1*	*1,6*

1995-**2016թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների միջին գործակիցը 100.000 բնակչի հաշվով կազմել է 2.3**: 2017 թվականին ՀՀ-ում այդ գործակիցն, ինչպես նշվեց, ընդամենը 1.6 է:

Հաշվետու ժամանակահատվածում 13-ով կամ 36%-ով նվազել են նաև սպանության փորձի դեպքերը (36-23): Ընդ որում, այս հանցատեսակով վերջին 10 տարվա ամենացածր ցուցանիշն արձանագրվել է հաշվետու ժամանակահատվածում:

Դրական դինամիկա է արձանագրվել նաև առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հանցատեսակով. դեպքերը նվազել են 6-ով կամ 3 %-ով /200-194/:

Ավազակության դեպքերը նվազել են 7-ով կամ 13%-ով /53-46/: Ընդ որում, այս հանցատեսակով ևս արձանագրվել է վերջին 10 տարվա ամենացածր ցուցանիշը՝ պահպանելով այդ ժամանակահատվածի կայուն նվազման միտումը:

Բնակարանային գողության դեպքերը նվազել են 361-ով կամ 28,9 %-ով (1250-889):

Նշենք, որ 2014 թվականից սկսած արձանագրվել է բնակարանային գողությունների թվի կայուն նվազման միտում՝ 73-ով, ապա՝ 119-ով, իսկ 2017 թվականին 361-ով (1442-1369-1250-889): Վերջին 11 տարիներին գրանցվել է բնակարանային գողությունների ամենացածր թիվը:

Նախորդ տարվա համեմատ բնակարանային գողությունների թվի շուրջ 29% նվազումը և ընդհանրապես դրանց կայուն նվազման միտումը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով:

Թեև բնակարան ապօրինի մուտք գործելով գողության դեպքերի նվազման պատճառների թվում բացառված չէ բացասական հանգամանքը՝ դեպքերի չգրանցումը, սակայն փաստենք, որ 2017 թվականին այդ դեպքերի նվազումն ունի առավելապես դրական, քան թե բացասական պատճառներ: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն, որ 2017 թվականի ընթացքում ՀՀ դատախազության կողմից զգալի աշխատանք է կատարվել բնակարան ապօրինի մուտք գործելով գողության դեպքերի դեմ տարվող պայքարի ուղղությամբ:

Այսպես.

ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում քննարկվել է 2016 թվականի ընթացքում բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության դեպքերով (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետ) հարուցված քրեական գործերի նախաքննության օրինականության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության, դատավարական ղեկավարման, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանության վիճակը: ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ առանձնահատուկ ուշադրության է արժանացել արձանագրված դեպքերի կրիմինոլոգիական վերլուծության արդյունքներով այդ հանցատեսակի կանխարգելման խնդիրների բացահայտումը, այդ ուղղությամբ աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

Մասնավորապես, ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևան քաղաքում գողությունների մեծ մասը կատարվել է բազմաբնակարան շենքերի բնակարաններից՝ պայմանավորված այդպիսի շենքերի գերակշռությամբ: Մարզերում նման հանցագործությունների մեծ մասը կատարվել է առանձնատներից: 45%-ից ավելի դեպքերում բնակարան ապօրինի մուտք գործելով գողությունները կատարվել են գիշերային ժամերին՝ 22^{00}-ից 07^{00}-ն ընկած ժամանակահատվածում:

Վերլուծության արդյունքները նաև ցույց են տվել, որ գերակշիռ մաս են կազմում այն բազմաբնակարան շենքերի բնակարաններ ապօրինի մուտք գործելով կատարված գողությունները, որոնց մուտքի դռները բացակայել են կամ հնամաշ են, հագեցած չեն ժամանակակից, կոդավորվող փականով, շքամուտքերում բացակայում է լուսավորությունը, գերակշիռ դեպքերում՝ նաև տեսաձայնագրող սարքերը: Մինչդեռ, շքամուտքի դուռը կոդավորված փականով համալրելը բազմաբնակարան շենք անձի ֆիզիկական ներթափանցումը կանխելու երաշխիք է, իսկ տեսաձայնագրող սարքի և լուսավորության առկայությունը կարող է էական կանխարգելիչ նշանակություն ունենալ բազմաբնակարան շենքի բնակարաններից գողության դեպքերի համար, ինչպես նաև նպաստել գողությունից հետո հանցագործությունն արագ բացահայտելուն:

Քննարկման արդյունքներով Հայաստանի Հանարապետության գլխավոր դատախազը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին և Երևանի քաղաքապետին առաջարկել է ՀՀ ԿԱ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ներգրավմամբ, հնարավոր սեղմ ժամկետում քննարկել Երևանի վարչական տարածքում, մարզային բնակավայրերում գտնվող բազմաբնակարան շենքերի մուտքերն անվտանգության վերոնշյալ միջոցներով կահավորելու հարցը և այդ ուղղությամբ ձեռնարկել գործուն միջոցներ:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին հասցեագրված գրության արդյունքում ՀՀ մարզերի համայնքների բազմաբնակարան շենքերի մուտքերից 61-ի դռներին տեղադրվել են հատուկ, կոդավորվող փականներ, ևս 4 մուտքի 18 դռներին այդպիսի փականներ կտեղադրվեն առաջիկայում, բազմաբնակարան շենքերի 102 մուտքերին տեղադրվել են մետաղական դռներ, 9 համայնքում բազմաբնակարան շենքերի մուտքերն ապահովվել են լուսավորությամբ: Համաձայն նախարարի գրության՝ նշված աշխատանքները 2018թ. ևս շարունակական բնույթ են կրելու:

ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից նույնպես տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին և ՀՀ ոստիկանության ու քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներին հասցեագրվել են նույնաբովանդակ գրություններ:

ՀՀ ոստիկանապետին հասցեագրված գրությամբ ՀՀ գլխավոր դատախազը նաև ուշադրություն է հրավիրել այն հանգամանքին, որ անհրաժեշտ է ավելի ուժեղացնել ոստիկանության ծառայությունների, այդ թվում՝ պարեկապահակային ծառայության աշխատանքների ինտենսիվությունը՝ կապված բնակարանային գողության կատարման համար առավել կրիմինոգեն վայր հանդիսացող ամառանոցային տարածքները, ինչպես նաև բնակարանային գողության կամ համասեռ հանցագործության կատարման համար նախկինում դատված անձանց մշտապես օպերատիվ տեսադաշտում պահելու հետ:

Կարող ենք արձանագրել, որ հանրապետությունում համայնքները ներկայումս բերվում են տեխնիկապես հագեցված այնպիսի վիճակի (այդ թվում՝ ոստիկանության հենակետերով, տեսանկարահանող սարքերով և այլն), որը հասարակության՝ հանցավոր հակում ունեցող շերտի մեջ անխուսափելիորեն բարձրացնելու է մերկացվելու վտանգը, ինչն էլ նպաստում է բնակարանային գողությունների դեպքերի նվազմանը:

Վերը նշված հանցատեսակներով դեպքերի նվազմանը զուգահեռ 2017թ. աճել են անձնական ունեցվածքի գողության (բացի բնակարանայինից, 293-ով կամ 4.9%-ով), խարդախության (94-ով կամ 9.8%-ով), յուրացման (42-ով կամ 20.7%-ով) դեպքերը (293-ով կամ 4,9%-ով):

2017թ. ընթացքում հանրապետությունում 13-ով կամ 20%-ով նվազել են հրազենի կամ ռազմամթերքի գործադրմամբ հանցագործության դեպքերը. եթե 2016 թվականին արձանագրվել է այդպիսի 65, ապա 2017 թվականին՝ ընդամենը 52 դեպք: Ընդ որում, վերջին 10 տարիներին նկատելիորեն նվազել են հրազենի կամ ռազմամթերքի գործադրմամբ կատարված հանցագործությունները՝ 2007թ.-ին՝ 106, 2017թ.-ին՝ 52՝ կազմելով այդ տարիների ամենադրական ցուցանիշը:

Ստորև ներկայացվում է 2007-2017թթ. սպանության, սպանության փորձի, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու, ավազակության, ինչպես նաև հրազենի կամ ռազմամթերքի գործադրմամբ հանցագործությունների վերաբերյալ աղյուսակը, ինչպես նաև ընդհանուր հանցավորության և նշված հանցագործությունների դինամիկայի գրաֆիկական պատկերները, որոնցից պարզ է, որ հանցագործությունների քանակական ցուցանիշն արտացոլող գծապատկերն ունի աճող, իսկ նշված հանցագործությունների դեպքում՝ նվազող աստիճանավորման ընդհանուր տեսք.

	տարեթիվը	**Հանցագործությունների ընդհանուր թիվը**	**Հրազենի գործադրմամբ հանցագործություններ**	**Սպանություն**	**Սպանության փորձ**	**Դիտ. առողջ. ծանր վնաս**	**ավազակություն**	**Բնակարանային գողություններ**
1.	2007	8428	106	69	28	185	76	802
2.	2008	9271	84	78	30	215	126	1009
3.	2009	14339	100	68	29	181	151	988
4.	2010	15477	66	41	27	167	107	1156
5.	2011	16572	60	60	29	170	106	901
6.	2012	15776	63	50	25	170	63	1054
7.	2013	18333	66	48	25	186	73	1323
8.	2014	17546	68	53	28	216	69	1442
9.	2015	17043	69	52	35	173	54	1369
10.	2016	18764	62	66	36	200	53	1250
11.	2017	20285	52	49	23	194	46	889





Փաստենք, որ հրազենի կամ ռազմամթերքի գործադրմամբ կատարված հանցագործությունների թվի նվազումը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով: Այդպիսի հանգամանքներ են հանցագործությունների բացահայտման ցուցանիշների բարելավումը և հանրային մեծ վտանգավորություն ունեցող՝ վերը նշված հանցատեսակներով համաչափ պատժողական քաղաքականությունը, որոնք չեզոքացնում են հասարակության անդամների մոտ անպատժելիության զգացումը և ստեղծում պատասխանատվության անխուսափելիության մթնոլորտ, ունեն նախականխիչ նշանակություն:

Օրինակ՝ որոշակի կայուն պատժողական քաղաքականություն է ձևավորվել զենքով, այդ թվում՝ սառը, անձի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերում, ըստ որի՝ նշված դեպքերում պատիժը պայմանականորեն չի կիրառվում բացառիկ դեպքերում /հիմնականում ամբաստանյալի՝ անչափահաս լինելու/: Դա նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման /ԵՇԴ/014301/13/ պահանջի կիրառման հետևանքն է, թեև մինչև այդ որոշումն էլ դատախազները, պատիժ միջնորդելիս, արդեն իսկ առաջնորդվում էին հիշյալ կանոնով:

Նշենք հրազենի կամ ռազմամթերքի գործադրմամբ հանցագործության դեպքերի նվազման ևս մեկ պատճառ. 2016 թվականի համեմատ, հաշվետու ժամանակահատվածում աճել են լատենտայնության բարձր աստիճան ունեցող՝ հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների դեպքերը. եթե 2016 թվականին այս հանցատեսակով արձանագրվել է 729, ապա 2017 թվականին՝ 858 դեպք, այսինքն՝ 129-ով կամ 17.7%-ով ավելի: Աճին զուգահեռ, այս հանցատեսակով արձանագրված դեպքերի բացահայտման տոկոսը 2017 թվականին թեև աննշան, սակայն բարձրացել է՝ կազմելով 94,2%՝ 2016 թվականին արձանագրված՝ 94,1%-ի դիմաց:

Բանն այն է, որ հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների դեպքերի արձանագրումը, որպես կանոն, կատարվում է հրազենի կամ ռազմամթերքի հայտնաբերման հետևանքով:

Ուստիև լատենտային բնույթ կրող այս հանցատեսակներով դեպքերի աճը նախ խոսում է քրեական հետապնդման մարմինների արդյունավետ աշխատանքի՝ և՛ դեպքերի գրանցման, և՛ բացահայտման առումով, և ապա, որպես դրա հետևանք, ընդհանուր հանցավորության վիճակի բարելավման մասին:

Վերլուծությունը վկայում է, որ հանցագործությունների ընդհանուր թվի աճը, սոցիալական գործոններից բացի, պայմանավորված է նաև լատենտայնության բարձր աստիճան ունեցող հանցագործությունների բացահայտման, գրանցման և հաշվառման աշխատանքների բարելավմամբ, ոստիկանության համապատասխան ծառայությունների հետևողականությամբ, ինչպես նաև կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարման նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության բարձրացմամբ:

Հանցագործությունների բացահայտման և հաշվառման աշխատանքների բարելավման օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ 2017 թվականին նախորդ տարվա համեմատությամբ աճել է լատենտայնության բարձր աստիճան ունեցող այնպիսի հանցատեսակների թիվը, ինչպիսիք են թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները:

Այսպես.

Թմրամիջոցների հետ կապված հանցագործությունները նախորդ տարվա համեմատությամբ աճել են 263-ով կամ 26.1%-ով (1271-1008): Միաժամանակ բացահայտման տոկոսային ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1.3%-ով, ինչն, անխոս, վկայում է հանցագործությունների հաշվառման աշխատանքների բարելավման մասին:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերն աճել են 175-ով (1138-963) կամ 18.2%-ով, իսկ իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը՝ 85-ով (612-527) կամ 16.1%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում խուլիգանության դեպքերով նույնպես աճ է արձանագրվել՝ 202 դեպք (2016թ.՝ 195), այսինքն՝ 2017թ. նշված հանցատեսակով դեպքերն աճել են 7-ով կամ 3.6%-ով, իսկ խուլիգանության դեպքերի բացահայտման 2017թ. ցուցանիշը, 2016թ. արձանագրված ցուցանիշի համեմատ, աճել է՝ կազմելով 89.6%՝ 2016թ. արձանագրված 86,1%-ի դիմաց:

Եթե 2017թ. ընդհանուր առմամբ աճել է ճանապարհատրանսպորտային հանցագործությունների թիվը՝ 272-ով կամ 38,9%-ով, ապա 2016թ. համեմատ, գրեթե նույնն է մնացել մահվան ելքով ավտովթարների արձանագրված քանակը և այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը. եթե 2016թ. արձանագրվել է մահվան ելքով ավտովթարի 175 դեպք, որոնցից նույն ժամանակահատվածում բացահայտվել է 172-ը կամ 98.2%-ը, ապա 2017թ. արձանագրվել է մահվան ելքով ավտովթարի 176 դեպք, որոնցից նույն ժամանակահատվածում բացահայտվել է 173-ը կամ 98.2%-ը:

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների թվի 38.9%-ով աճը, փաստորեն, արձանագրվել է ճանապարհատրանսպորտային այնպիսի դեպքերի հաշվին, որոնք մահվան ելքով չեն ավարտվել. եթե դրանք 2016թ. կազմել են 525, ապա 2017թ.՝ 796-ը (271-ով ավելի):

Այս տեսակի հանցագործությունների վերաբերյալ վիճակագրության նման ցուցանիշը պայմանավորված է 2017 թվականին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված օրենսդրական լրացման հանգամանքով, որը հանցագործության մասին հաղորդումները ստուգելու 10-օրյա ժամկետը ևս մինչև 20 օր երկարացնելու հնարավորություն ընձեռեց:

Ընդ որում՝ ժամկետի երկարացման հնարավորությունն օրենքը կապում է նշանակված փորձաքննության եզրակացությունն ստանալու անհրաժեշտության և առանց դրա հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու հարցը լուծելու անհնարինության հետ:

Մինչև հիշյալ լրացումը, ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ նյութերով, որպես կանոն, օրենքով նախատեսված 10-օրյա ժամկետում այդ նյութերի ընթացքը լուծելու համար պարտադիր փորձաքննությունների եզրակացությունները՝ դատաբժշկական, բացի դրանից նաև՝ դատաավտոտեխնիկական, չէին ստացվում, և, առկա իրավակարգավորումների պայմաններում, ձևավորված պրակտիկայի համաձայն՝ հետաքննության և նախաքննության մարմինները, առանց այդ եզրակացությունները ստանալու, կայացնում էին հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում նաև այն դեպքում, երբ տուժածը բողոք

չէր ներկայացնում: Դա կատարվում էր անմեղության կանխավարկածի սկզբունքի ուժով՝ այն պատճառաբանությամբ, որ բողոքի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործ հարուցելը կարող է մերժվել հանցագործության առկայությունը փաստելուց հետո միայն, իսկ առանց եզրակացությունների դա չէր կարող կատարվել: Նման իրավիճակում քրեական գործ էլ չէր կարող հարուցվել, քանի որ մասնավոր մեղադրանքի դեպքով բացակայում էր դիմողի բողոքը:

Նշված դեպքերում հետագայում ստացվող եզրակացությունների՝ հանցակազմի հատկանիշների առկայությունը հավաստելու դեպքում առաջանում էր արդեն իսկ մերժված նյութերը վերացնելու իրավական անհնարինություն, քանի որ առկա էր քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ բողոքի բացակայությունը, և տվյալ դեպքը ՀՀ ոստիկանությունում, փաստորեն, չէր հաշվառվում:

Նշված օրենսդրական լրացումից հետո հաղորդման ստուգման երկարացված ժամկետի ընթացքում հնարավոր է լինում ստանալ փորձաքննությունների եզրակացությունները և դրանցով հանցակազմի առկայությունը փաստելու դեպքերում, արդեն բողոքի բացակայության պայմաններում քրեական գործ հարուցելը մերժել նշված, այլ ոչ՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ դեպքը հաշվառել ՀՀ ոստիկանությունում:

Արձանագրենք, որ 2017թ. գրանցված հանցագործություններից ամենամեծ թիվը, ինչպես և նախորդ տարի, կազմել են անձնական գույքի գողության դեպքերը՝ 5909 կամ հանցագործությունների ընդհանուր թվի մոտ 30.0%-ը:

Նշենք, որ 2016 թվականի համեմատ, 2017 թվականին աճ է արձանագրվել անչափահասների հանցավորության ցուցանիշում. եթե 2016 թվականին արձանագրվել է անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության 375 դեպք, ապա 2017թ. արձանագրվել է նման 403 դեպք, այսինքն՝ անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության դեպքերը 2017թ. ավելացել են 28-ով կամ 7,5%-ով, ինչպիսի հանգամանքը կարող է թվալ մտահոգիչ, հատկապես ՀՀ ոստիկանության կողմից անչափահասների հետ տարվող աշխատանքի՝ ներկայացվող մեծ ծավալի ֆոնի վրա: Սակայն անչափահասների հանցավորության կառուցվածքի վերլուծությունը թույլ է տալիս փաստելու, որ արձանագրվել է այդ ոլորտի հանցավորության վիճակի բարելավում:

Այսպես, հատկանշական է, որ 2017թ. 10-ով կամ 2.8%-ով նվազել է հանցանք կատարած անչափահասների թիվը (351-341):

Անչափահասների հանցավորության աճը տեղի է ունեցել Երևան քաղաքում արձանագրված հանցագործությունների աճի հաշվին, իսկ ՀՀ մարզերում արձանագրվել է անչափահասների կողմից կատարված հանցագործությունների նվազում: Եթե 2016 թվականին Երևան քաղաքում արձանագրվել է անչափահասի կողմից կատարված 170,

ապա 2017 թվականին՝ 227 դեպք կամ 57-ով ավելի: Նախորդ տարի մարզերում կատարված 205 դեպքի փոխարեն 2017 թվականին կատարվել է 176-ը կամ 29-ով պակաս:

Ընդ որում, 55-ով աճել են գողության (հիմնականում՝ զգալի չափի գողության մասնավոր մեղադրանքի դեպքերը, բազմադրվագ գողության դեպքերը) դեպքերը, ինչը պայմանավորված է նաև այդ տեսակի հանցագործության դեպքերի գրանցման աշխատանքների բարելավմամբ:

Մյուս հանցատեսակներով հիմնականում արձանագրվել է նվազում:

Կտրուկ նվազում է արձանագրվել անչափահասների կողմից կատարված ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով: Այսպես՝ եթե 2016թ. գրանցվել է անչափահասների կողմից կատարված սպանության 5 դեպք, ապա 2017թ. նման որևէ դեպք չի արձանագրվել:

Անչափահասների կողմից առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերը նվազել են 2-ով (12-10), նույնքան նվազել են նաև կողոպուտի դեպքերը (7-5):

Անչափահասների մասնակցությամբ ավազակության դեպք չի արձանագրվել (նախորդ տարի նույնպես):

5-ով նվազել են դպրոցներում և դպրոցներին հարակից տարածքներում անչափահասների կողմից կատարված հանցագործության դեպքերը (6-1), ինչպիսի հանգամանքը, ինչ խոսք, պայմանավորված է հատկապես դպրոցներում անչափահասների գործերով դպրոցական տեսուչների ամենօրյա աշխատանքով:

Անչափահասների վերաբերյալ հանցագործության դեպքերով դատախազական աշխատանքի ընթացքում կարևորվել է հանցանքի կատարմանը նպաստող պայմանները պարզելու հանգամանքը: Օրինակ՝ 2017թ. հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու նպատակով ներկայացված 187 միջնորդագրից 20-ը կամ 11%-ը եղել է անչափահասների վերաբերյալ նյութերով կամ քրեական գործերով (2016թ.՝ 0):

ՀՀ-ում հանցագործությունների դեպքերի աճին զուգընթաց՝ աճ է արձանագրվել հանցագործությունների բացահայտման ցուցանիշներում: Այն դեպքում, երբ 2016թ. հանցագործությունների բացահայտման ցուցանիշը եղել է 78.5%, 2017թ. այն կազմել է 83.3%՝ 4.8%-ով ավելի: 2017 թվականին չբացահայտված հանցագործությունների թիվը նվազել է. գրանցված հանցագործություններից չի բացահայտվել 3390-ը կամ 16.7%-ը: Նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է 21.5%:

2729 ծանր հանցագործությունից բացահայտվել է 1638-ը կամ 60%-ը, այն դեպքում, երբ 2016 թվականին այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 54.2%:

Միջին ծանրության 5012 հանցագործությունից բացահայտվել է 3552-ը կամ 70.9%-ը, այն դեպքում, երբ 2016 թվականին այս հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 66.6%:

Հաշվետու ժամանակահատվածում 4.5%-ով նվազել է առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը. արձանագրված առանձնապես ծանր 165 հանցագործությունից բացահայտվել է 136-ը կամ 82.4%-ը /նախորդ տարի՝ 198-ից 172-ը կամ 86.9 %-ը/:

Հաշվետու ժամանակահատվածում աճ է արձանագրվել **մարդու դեմ** ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշում 2017 թվականի բացահայտման տոկոսային ցուցանիշը կազմել է 96.5, նախորդ տարվա 95.7-ի փոխարեն /0.8%-ով ավելի/:

Չնայած դրան՝ նվազել են սպանության և սպանության փորձի բացահայտման ցուցանիշները՝ կազմելով համապատասխանաբար՝ 74.2% և 91.3%, նախորդ տարվա 75.8%-ի և 94.4%-ի դիմաց:

2017 թվականի ընթացքում բարելավվել է առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի բացահայտման ցուցանիշը. եթե 2016 թվականին արձանագրված 200 դեպքից բացահայտվել էր 161-ը կամ 80.5%-ը, ապա 2017 թվականի ընթացքում՝ 194 դեպքից 167-ը կամ 86.1%-ը:

Հասարակական անվտանգության և հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործության 3650 դեպքից բացահայտվել է 3243-ը կամ 88.8%-ը՝ **1**%-ով ավելի, քան 2016թ. (87.8%):

Ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերի 272-ով կամ 38.9%-ով աճին /700-972/ զուգահեռ բարձրացել է բացահայտման տոկոսային ցուցանիշը՝ կազմելով 98.3%՝ նախորդ տարվա 95,7%-ի փոխարեն:

Բացահայտման ցուցանիշի բարելավմանը, այլ հանգամանքների հետ մեկտեղ, կարող է նպաստած լինել տարեց տարի տեսախցիկների ավելացումը:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների դեպքերի 263-ով կամ 26.1%-ով աճին զուգահեռ նվազում է արձանագրվել բացահայտման ցուցանիշում՝ կազմելով 80%՝ նախորդ տարվա 81.3%-ի դիմաց:

Լատենտային բնույթ կրող այս հանցատեսակների հետ կապված նման ցուցանիշները, որոնք այլ հանցատեսակների համար կարող են բացասական համարվել, պետք է գնահատել դրական և հանցագործության դեպքերի գրանցման աշխատանքների բարելավման հետևանք:

Փաստենք նաև, որ թմրամիջոցների հետ կապված հանցագործություններից իրացման նպատակով կատարված դեպքերը նույնպես աճել են՝ կազմելով 612 կամ 16,1%-ով ավելի (2016թ.՝ 527): Դրան զուգահեռ աճել է նաև այս հանցատեսակների բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 66.3%՝ նախորդ տարվա 65.7%-ի փոխարեն:

Դրական դինամիկա է արձանագրվել **սեփականության դեմ** ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշում. արձանագրված 8102 դեպքից բացահայտվել է 5603-ը կամ 69,2%-ը կամ **9,6** %-ով ավելի, քան 2016թ. /59,6%/:

Բնակարանային գողության դեպքերի նվազմանը զուգահեռ աճել են բացահայտման ցուցանիշները. արձանագրված 889 դեպքից բացահայտվել է 302-ը կամ 34%-ը: Նախորդ տարի 1250 դեպքից բացահայտվել է 412-ը կամ 33%-ը:

2017թ. բացահայտման ցուցանիշի աճ է արձանագրվել նաև անձնական ունեցվածքի հափշտակության դրսևորումներից՝ ավազակության, կողոպուտի, գողության դեպքերով:

Այսպես, եթե 2016թ. բացահայտվել է նույն ժամանակահատվածում արձանագրված՝ ավազակության դեպքերի 56.6%-ը, կողոպուտի դեպքերի 53,7%-ը, գողության դեպքերի 53.1%-ը, ապա 2017թ. բացահայտվել է նույն ժամանակահատվածում արձանագրված՝ ավազակության դեպքերի 69.5%-ը, կողոպուտի դեպքերի 70.8%-ը, գողության դեպքերի 63.3%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում **տնտեսական գործունեության դեմ** ուղղված հանցագործության 553 դեպքից բացահայտվել է 454-ը կամ 82.1%-ը՝ **12.5** %-ով ավելի, քան 2016թ. /69,6%/, պետական ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործության 2956 դեպքից բացահայտվել է 2801-ը կամ 94,8%-ը՝ տոկոսային նույն ցուցանիշը գրանցվել է 2016թ., այլ տեսակի հանցագործության 155 դեպքից բացահայտվել է 97-ը կամ 62,2%-ը՝ **0,9** %-ով պակաս, քան 2016թ. /61,7%/:

Փաստենք, որ ընդհանուր հանցագործությունների բացահայտման ցուցանիշների բարելավումը դեռևս բավարար չենք համարում իրավիճակը դրական գնահատելու համար, ու ձեռնարկվող աշխատանքներն, ինչ խոսք, բարելավման կարիք ունեն:

Հայտնի է, որ հանցագործությունների չբացահայտման պատճառը և դրան հակառակ՝ բացահայտման գրավականը անհետաձգելի քննչական և օպերատիվ-հետախուզական գործողությունների ժամանակին ու պատշաճ կատարումն է: Թեև հաշվետու ժամանակահատվածում հանցագործությունների բացահայտման տոկոսային ցուցանիշը աճել է, սակայն, կարծում ենք, այդ ցուցանիշը կարող էր շատ ավելի բարելավվել ապացուցման գործընթացի որոշ թերությունները վերացնելու դեպքում:

Այս կապակցությամբ նշենք, որ դատախազական աշխատանքի ընթացքում վեր են հանվել քրեական գործերի քննության մի շարք ընդհանուր թերություններ՝ կապված անհետաձգելի համարվող գործողությունները ժամանակին չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ապացույցների ոչ պատշաճ հավաքման և ստուգման հետ, որոնք բացասաբար են ազդել գործերի ելքի վրա, և որոնց բացառումը կարող է էականորեն դրական ազդեցություն ունենալ հանցագործության դեպքերի բացահայտման ցուցանիշի վրա:

Մասնավորապես՝ ՀՀ գլխավոր դատախազությունում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով քննվող քրեական գործերի քննարկումների և ստուգման ընթացքում պարզվել է, որ դեպքի վայրի զննության ընթացքում հաճախ չեն արձանագրվում կարևոր ապացույցների վերաբերյալ տվյալներ, օրինակ՝ տեսախցիկների առկայությունը, բացի մատնահետքերից, որպես կանոն, մարդու հետքերի այլ նմուշներ փնտրելուն ուղղված

գործողություններ չեն կատարվում, լուսանկարում կամ չի կատարվում կամ կատարվում է՝ առանց կրիմինալիստիկական կանոնների պահպանման: Դեպքի վայրում գտնվող ականատեսներին ժամանակին չեն հրավիրում հարցաքննության, իսկ հետո դժվարանում է նրանց կամ նրանց գտնվելու տեղի պարզումը:

Այս կապակցությամբ դատախազներին հանձնարարվել է ավելի հետևողական լինել հետաքննության և նախաքննության մարմինների կողմից համապատասխան գործողությունները ժամանակին, որակյալ և պլանավորված իրականացնելն ապահովելու և նմանատիպ իրավիճակները բացառելու հարցում:

Նշենք, որ հաշվետու ժամանակահատվածի ողջ ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են օպերատիվ խորհրդակցություններ՝ կոնկրետ քրեական գործերով, հիմնականում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման կամ բացահայտված հանցագործություններով ապացույցների հավաքման նպատակով: Այդ ընթացքում վարկածների առաջ քաշումը, օպերատիվ-հետախուզական և քննչական համագործակցված աշխատանքի տակտիկայի համատեղ քննարկումը, մշակումն ու պլանավորումը, մի շարք դեպքերում, կարճ ժամանակ անց տվել են իրենց դրական արդյունքները. բացահայտվել են հանցագործություններ, ձեռք բերվել անհրաժեշտ ապացույցներ, ինչի հավանականությունը որոշ դեպքերում, ի սկզբանե, եղել է ցածր:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ ենք համարում նշել նաև, որ 2017թ. ընթացքում բացահայտվել է նախկին տարիներին կատարված հանցագործությունների 317 դեպք՝ 2016թ. բացահայտված 224 դեպքի դիմաց: Փաստորեն, 2016թ. համեմատ, 2017թ. նշված ցուցանիշն ավելացել է 85-ով կամ 27.5%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում կարևորվել է հանցավոր խմբավորումների, խմբերի անդամների բացահայտումը, հանցագործությունների նախականխումն ու կանխումը՝ նախապատրաստության փուլում:

Նշենք, որ 2016 թվականի համեմատությամբ 54-ով կամ 10.0%-ով նվազել են հանցագործությունը խմբի կողմից կատարելու դեպքերը (542-488): Միևնույն ժամանակ նվազումը պայմանավորված չէ խմբերի բացահայտման աշխատանքի վատթարացմամբ:

2017թ. միայն ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից հսկողություն է իրականացվել մի խումբ անձանց, կազմակերպված խմբի կողմից նույն ժամանակահատվածում կատարված հանցագործությունների վերաբերյալ 25 քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ: Նշված գործերից 11-ը՝ 41 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Փաստենք նաև, որ 2017 թվականին միայն ՀՀ գլխավոր դատախազության նշված վարչության դատախազների կողմից հսկողություն է իրականացվել նույն ժամանակահատվածում հանցագործության նախապատրաստության դեպքերի առթիվ հարուցված 6 քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ:

Նշված գործերից 1-ը՝ 1 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 3 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է, 2 քրեական գործի վարույթը կասեցվել է: Դատարան ուղարկված քրեական գործով անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված է եղել կալանավորումը: Նախաքննության փուլում գտնվող 3 քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվել է 5 անձ, որոնցից 4-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, 1-ի նկատմամբ՝ գրավը:

Փաստորեն՝ նույնքան հանցագործություն կանխվել է հենց նախապատրաստության փուլում, ինչպիսի հանգամանքը բացառիկ կարևորություն ունի հանցավորության վիճակի վերահսկելիության մակարդակը գնահատելիս:

Ամփոփելով արձանագրենք, որ հանցավորության վիճակը ՀՀ-ում կայուն վերահսկելի է, իսկ հանցավորության քանակական և որակական ցուցանիշների բարելավումը, ինչ խոսք, քրեական հետապնդման մարմինների՝ հետաքննության մարմին – քննիչ - դատախազ փոխհամագործակցված արդյունավետ աշխատանքի արդյունք:

2. Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

2017 թվականի ընթացքում հանրապետությունում նախապատրաստվել է 40.611 նյութ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 39.078-ի դիմաց: Փաստորեն՝ դատախազական հսկողության առարկա կազմող նյութերի թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 1533-ով, ինչը կարելի է պայմանավորել և՛ 2017թ. հանրապետությունում արձանագրված հանցագործության դեպքերի թվի աճով, և՛ դեպքերի ստուգումը հանցագործությունների ու պատահարների մասին ստուգման կարիք ունեցող տեղեկությունների, ահազանգերի գրանցման թիվ 2 մատյանում անհարկի չգրանցելով, ինչպես նաև հանցագործության դեպքերն առհասարակ գրանցելու հարցում դատախազության կողմից դրսևորած հետևողականությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում նախապատրաստված 40.611 ավարտված նյութից 27.758-ով կամ 68.4%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից արդարացման հիմքով՝ 20.785, ոչ արդարացման հիմքով՝ 6973:

Համեմատության համար նշենք, որ 2016թ. նախապատրաստված 39.078 ավարտված նյութից 25.962-ով կամ 66.4%-ով է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, որոնցից արդարացման հիմքով՝ 19.749, ոչ արդարացման հիմքով՝ 6213:

2017թ. ընթացքում նախապատրաստված 40.611 նյութից 11.679-ով կամ 28.8%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 286-ը կամ 2.4%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում: Նշված 286 քրեական գործից 31-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի, 27-ը՝ անմիջական վերադաս դատախազի, 228-ը՝ հսկող դատախազների կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2016 թվականին նախապատրաստված 39.078 նյութերից քրեական գործ է հարուցվել 11.984-ով կամ 30.7%-ով, որոնցից 353-ը կամ 2.9%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում, այդ թվում 17-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացվելու արդյունքում 2017թ. հարուցված հիշյալ 286 քրեական գործից 10-ը կամ 3.5%-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 3-ը կամ 1.04%-ն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու հարցը քննելու, 5-ը կամ 1,7%-ը միացվել է այլ գործերի, 214-ով կամ 74.8%-ով վարույթը կարճվել է, 12-ով կամ 4.2%-ով՝ կասեցվել, 42-ով կամ 14.7%-ով նախաքննությունը շարունակվել է 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Նշենք նաև, որ 2016 թվականին վերացվել է քրեական գործ հարուցելու մասին 14, իսկ 2017 թվականին՝ 13 որոշում:

2016թ. համեմատ, 2017թ. նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելու մասին որոշումների քանակը նվազել է 305-ով (11.984-11.679) կամ 2.6%-ով: 67-ով կամ 19%-ով նվազել են նաև քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները վերացնելու դեպքերը (353-286), դրան հակառակ՝ 1796-ով կամ 6.9%-ով (25.962-27.758) աճել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների թիվը, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ ոչ մեծ ծանրության մասնավոր մեղադրանքի դեպքերի հաշվառման աշխատանքների բարելավմամբ:

Ինչպես նշվեց 2017 թվականին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված օրենսդրական լրացմամբ նյութերի նախապատրաստման 10-օրյա ժամկետը մինչև 20 օր երկարացնելու հնարավորություն ընձեռնվեց:

Կարծում ենք՝ վերոհիշյալ օրենսդրական լրացումը հիմնականում հանդիսացավ պատճառ՝ մի կողմից քրեական գործ հարուցելը անհիմն չմերժելու, մյուս կողմից՝ անհիմն կերպով քրեական գործ չհարուցելու համար, և նաև հենց սրանով է պայմանավորված 2017թ. արձանագրված՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների ավելացումը 6.9%-ով կամ քրեական գործ հարուցելու, ինչպես նաև քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին որոշումների նվազումը համապատասխանաբար 2.6%-ով և 19%-ով:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու դեպքերի նվազումը, իհարկե, կարող ենք պայմանավորել նաև դատախազության և քրեական հետապնդման մյուս մարմինների առավել համաձայնեցված փոխհամագործակցությամբ, մինչև վերջնական որոշում կայացնելը նախապատրաստված նյութերը դատախազի կողմից ստուգվելու հանգամանքով:

Դրա հետ մեկտեղ, ուշադրության է արժանի այն, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու արդյունքում 13 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու հարցը քննելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան:

Փաստորեն, **13 դեպքում** քրեական դատավարության խնդիրներն իրագործվել են բացառապես դատախազի հետևողականության և դատախազական պատշաճ հսկողության շնորհիվ:

Հետաքննիչի կամ քննիչի՝ մի դեպքում անտարբեր, մյուս դեպքում՝ ոչ արհեստավարժ մոտեցումը, երբ քրեական գործ հարուցելը մերժելու անհրաժեշտության մասին դիրքորոշումը ոչ միայն հիմնավոր չի համարվում, այլ նաև ապացուցվում է հակառակը՝ այն, որ քրեական գործ հարուցելու հիմքեր առկա են, ավելին՝ առկա է հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու և մեղադրական դատավճիռ կայացվելու փաստ, ունեցել է համապատասխան արձագանք՝ դատախազները

ցուցաբերված անփույթ վերաբերմունքի մասին տեղեկացրել են տվյալ հետաքննիչի կամ քննիչի վերադասին՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար:

67-ով կամ 19%-ով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները վերացնելու դեպքերի նվազումը խոսում է օրինական որոշումների նույնքան ավելացման մասին:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների դեմ դատավարության մասնակիցների բողոքների վիճակագրական տվյալները նույնպես վկայում են այն մասին, վերջիններիս կողմից օրինական համարված որոշումների տոկոսային ցուցանիշներն աճել են: Այսպես՝ 2017թ. ընթացքում վարույթի մասնակիցների կողմից բողոքարկվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին 655 որոշում (դատական կարգով և վերադաս դատախազին), նախորդ տարվա համեմատ 562-ով կամ 46.2%-ով պակաս (2016թ.՝ 1217), որից 51-ի դեմ ներկայացված բողոքը բավարարվել է, որը նախորդ տարվա բավարարված բողոքներից 23-ով կամ 31.1%-ով պակաս է:

2016թ. համեմատությամբ վարույթի մասնակիցների կողմից նշված որոշումների դեմ բերված բողոքների թվի կտրուկ նվազումը, ինչ խոսք, պայմանավորված է քրեական գործի հարուցման փուլի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության բարձրացմամբ, ինչպես նաև քրեական հետապնդման մյուս մարմինների կողմից նյութերի պատշաճ նախապատրաստմամբ:

2017թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել 17.708 քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ (2016թ.՝ 18.479), որոնցից 4356-ով վարույթը կարճվել է (2016թ.՝ 4658), այդ թվում՝ արդարացման հիմքով՝ 2430 (2016թ.՝ 2843), ոչ արդարացման հիմքով՝ 1926 (2016թ.՝ 1815): 2686 քրեական գործ՝ 3447 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2016թ.՝ 2761 քրեական գործ՝ 3534 անձի վերաբերյալ), իսկ 61 քրեական գործ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ (2016թ.՝ 49): 5635 քրեական գործով վարույթները կասեցվել են (2016թ.՝ 6237), այդ թվում՝ 779-ը անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով (2016թ.՝ 616), 1679 քրեական գործ միացվել է (2016թ.՝ 1219), 898 քրեական գործ ուղարկվել է քրեական հետապնդում իրականացնող այլ մարմին (2016թ.՝ 1045), քրեական գործ հարուցելու մասին 5 որոշում վերացվել է դատախազի կողմից (2016թ.՝ 2), 2388 քրեական գործ մնացել է անավարտ և փոխանցվել հաջորդ տարի (2016թ.՝ 2508):

2017 թվականին դատախազական հսկողության առարկա հանդիսացած քրեական գործերի թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 767-ով կամ 4.1%-ով: Չնայած այն հանգամանքին, որ հանրապետությունում աճել են հանցագործության ընդհանուր դեպքերը, սակայն 2016թ. համեմատությամբ 2017թ. մերժված նյութերի թիվն աճել է (պատճառները

վերևում արդեն նշվել են), ինչով էլ պայմանավորված է դատախազական հսկողության առարկա հանդիսացած քրեական գործերի թվի նվազումը:

Նշենք, որ 2017թ. ընթացքում ՀՀ-ում քրեական գործ հարուցելու մասին կայացվել է 11.679 որոշում, որոնցից 423-ը՝ դատախազների, այդ թվում՝ 31-ը ՀՀ գլխավոր դատախազի կողմից: Նախորդ տարի հարուցված 11.984 քրեական գործից 429-ն է հարուցվել դատախազների կողմից, որոնցից 17-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազի որոշմամբ կարճվել է 38 քրեական գործով վարույթ (2016թ.՝ 24), որոնցից 10-ը՝ արդարացնող հիմքով (2016թ.՝ 17):

2017թ. ընթացքում դատախազների կողմից ստուգվել է վարույթը կարճելու մասին 7821 որոշման օրինականություն: 2017 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 271 որոշում կամ ստուգված որոշումների 3.5%-ը, որոնցից 29-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 37 որոշում՝ 48 անձի նկատմամբ, որոնցից 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 23 որոշում՝ 25 կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, որոնցից 4-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2016 թվականին ստուգվել է վարույթը կարճելու մասին 6271 որոշման օրինականությունը: 2016 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 435 որոշում կամ ստուգված որոշումների 7%-ը, որոնցից 51-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
2. քրեական հետապնդում չիրականացնելու մասին 33 որոշում, որոնցից 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 18 որոշում, որոնցից 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 385 բողոք (2016թ.՝ 929), որոնցից բավարարվել է 48-ը (2016թ.՝ 53) կամ 12.5%-ը (2016թ.՝ 5.7%):

Նույն ժամանակահատվածում քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների դեմ բերվել է 17 բողոք (2016թ.՝ 29): Նշված բողոքներից բավարարվել է 1-ը (2016թ.՝ 1):

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ նույն ժամանակահատվածում բողոք չի բերվել, իսկ 2016 թվականին բերվել է այդպիսի 19 բողոք, որոնք մերժվել են, ինչը վկայում է այն մասին, որ և՛ 2016թ., և՛ 2017թ. կայացված՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները հիմնավոր են եղել:

Փաստենք, որ քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին

որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2017թ. նվազել է 575-ով կամ 58.9%-ով՝ կազմելով 402 բողոք՝ նախորդ տարվա 977-ի դիմաց: Բողոքների բավարավել է 49-ը կամ 12.2%-ը (2016թ.՝ 54 կամ 5.5 %):

Փաստորեն, 2017թ. ստուգվել է վարույթը կարճելու մասին 1550 որոշում ավելի, քան 2016թ., սակայն արդյունքում կայացված վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ որոշումների թիվը նվազել է 164-ով, իսկ ստուգված որոշումների արդյունքում վերացումների տոկոսային ցուցանիշը նվազել է կրկնակի: Այդքանով էլ ավելացել է քրեական գործով վարույթը կարճելու մասին օրինական որոշումների թիվը:

Ի դեպ, 2017թ. ընթացքում վարույթը կարճելու մասին որոշումը վերացված գործերից 14-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 145-ով վարույթը կրկին կարճվել է, 63-ը կասեցվել է, 49-ի նախաքննությունը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ շարունակվել է:

2017թ. ստուգվել է վարույթը կասեցնելու մասին 10.492 որոշման օրինականություն, ինչը 1743-ով կամ 16.6%-ով ավելի է նախորդ տարվա նույն ցուցանիշից (2016թ.՝ 8749):

Հաշվետու ժամանակահատվածում վարույթը կասեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 32 բողոք, որոնք մերժվել են: Նախորդ տարի բերվել է նման 74 բողոք, որոնցից բավարարվել է 9-ը: Նախորդ տարվա համեմատ բողոքների թիվը նվազել է 56.8%-ով:

2017 թվականին ստուգված վարույթը կասեցնելու մասին 10.492 որոշումից 219-ը կամ 2.1%-ը վերացվել է (2016թ.՝ 8749-ից վերացվել է 331-ը կամ 3.8%-ը), փաստորեն բոլորը՝ ոչ բողոքի հիման վրա, դատախազի նախաձեռնությամբ:

Նշված 219 գործից 213-ը կրկին կասեցվել է, 2 քրեական գործով վարույթը կարճվել է, 1 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 3 քրեական գործով նախաքննությունը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ շարունակվել է:

2017թ. քրեական գործով դատախազների կողմից տրվել է 1907 ցուցում (2016թ.՝ 1913), որոնցից 53-ի դեմ ներկայացվել է առարկություն (2016թ.՝ 67), դրանցից բավարարվել է 2-ը (2016թ.՝ 13). կատարման ենթակա ցուցումների թիվը կազմել է 1905 (2016թ.՝ 1900):

Արդյունքում՝ 2017 թվականին՝

1. քրեական գործով վարույթը կասեցնելու մասին վերացվել է 112-ով պակաս որոշում,
2. ստուգված որոշումների թվում քրեական գործերով վարույթը կասեցնելու մասին որոշումների վերացման տոկոսային ցուցանիշը նույնպես նվազել է 1.7-ով (3.8-2.1),
3. քրեական գործով վարույթը կարճելու մասին վերացվել է 164-ով կամ 37.7%-ով պակաս որոշում,
4. քրեական գործով վարույթը կարճելու մասին ստուգված որոշումների թվում վերացումների տոկոսային ցուցանիշը նվազել է կրկնակի (7.0-3.5),
5. քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 575-ով կամ 59.0%-ով պակաս բողոք:

Նման ցուցանիշներն արձանագրվել են նաև օրինականության ամրապնդման նպատակով քրեական գործերով քրեական հետապնդման մարմինների փոխհամագործակցության արդյունավետության բարձրացման շնորհիվ:

Բացի դրանից, 2017թ. մայիսի 30-ի ՍԴՈ-1372 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը, վերահաստատելով 2012թ. հունվարի 24-ի ՍԴՈ-1008 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, որոշակիացրեց նաև, որ «գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողի կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցների՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում»:

ՀՀ Սահմանադրական դատարանի վկայակոչված դիրքորոշումների հիման վրա՝ կարծում ենք, որ քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների օրինականության վիճարկման դեպքերի էական նվազումը, կարող է պայմանավորված լինել նրանով, որ դատավարության մասնակիցները քրեական գործի նյութերին ծանոթանում են մինչև նշված որոշումները կայացնելը, որի պայմաններում նրանք զրկված չեն լրացուցիչ քննչական կամ դատավարական գործողություններ կատարելու միջնորդությամբ հանդես գալու իրավունքից:

Քրեական գործի նյութերին ծանոթ լինելու պայմաններում նման միջնորդություն ներկայացնելու իրավունքը կարող է լինել այն երաշխիքը, որը նվազեցնում է քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման դատական բողոքարկման հեռանկարի հավանականությունը, քանի որ, որպես կանոն, նշված որոշման դատական վիճարկումը պայմանավորված է լինում դատավարության մասնակցի այն դիրքորոշմամբ, որ քրեական գործով նախաքննության ընթացքում գործի հանգամանքների լրիվ ու բազմակողմանի հետազոտում չի իրականացվել:

Այսպիսով, վիճակագրական տվյալները փաստում են քրեական գործերով հետաքննության և նախաքննության օրինականության վիճակի էական բարելավման մասին, ինչը և անմիջականորեն իր ազդեցությունն է ունեցել քրեական հետապնդման մարմինների նկատմամբ դատավարության մասնակիցների վստահության ավելացման վրա: Դա արտահայտվում է հատկապես այդ գործերով կայացված որոշումների վիճարկման վիճակագրական տվյալներում:

Այսպես՝ հաշվետու ժամանակահատվածում.

1. քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 42-ով կամ 56.8%-ով պակաս բողոք,

2. քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների դեմ բերվել է 556-ով կամ 58.0%-ով պակաս բողոք,

3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ որևէ բողոք չի բերվել (2016թ.՝ 19 բողոք),

4. ընդհանուր առմամբ քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2017թ. նվազել է 617-ով կամ 58.7%-ով՝ կազմելով 434 բողոք՝ նախորդ տարվա 1051-ի դիմաց: Բողոքներից բավարավել է 49-ը կամ 11.3%-ը (2016թ.՝՝ 63 կամ 6.0%):

Կարծում ենք՝ նշված որոշումների դեմ բերված բողոքների թվի 58.7%-ով նվազումը խոսում է դատավարության մասնակիցների՝ հիշյալ որոշումների արդարացիության և օրինականության մեջ համոզվածության մասին:

2017թ. ընթացքում դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ չեն հաստատվել 72 քրեական գործով ստացված մեղադրական եզրակացությունները, որոնցից 62-ը ավարտվել է, այդ թվում՝ 53 գործ մեղադրական եզրակացությամբ հետագայում ուղարկվել է դատարան, 1-ն ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին միջնորդությամբ, 8-ով որոշում է կայացվել քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին, այդ թվում՝ 5-ն արդարացման հիմքով: Նշված քրեական գործերից 2-ով վարույթը կասեցվել է, 8-ի նախաքննությունը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ շարունակվել է:

2016թ. ընթացքում դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ չեն հաստատվել 74 քրեական գործով ստացված մեղադրական եզրակացությունները, որոնցից 60-ը ավարտվել է, այդ թվում՝ 47-ը մեղադրական եզրակացությամբ հետագայում ուղարկվել է դատարան, 13-ով որոշում է կայացվել քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին, այդ թվում՝ 6-ն արդարացման հիմքով: Նշված քրեական գործերից 14-ի նախաքննությունը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ շարունակվել է:

Փաստորեն, 2017 թվականին 5 դեպքով քննիչը համարել է, որ ապացույցները բավարար են անձին դատի տալու համար, սակայն դատախազի կողմից չի հաստատվել մեղադրական եզրակացությունը, և քրեական հետապնդումը դադարեցվել է:

2017թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների կողմից, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացված դատական ակտերի դեմ, բերվել է 77 վճռաբեկ բողոք:

Այդ բողոքներից 58-ը կամ 75.0%-ը ՀՀ Վճռաբեկ դատարանի վարույթ չի ընդունվել, 15-ը կամ 19.0%-ն ընդունվել է վարույթ, այդ թվում՝ 11-ը կամ 14.0%-ն բավարարվել է, 4-ով կամ 5.0%-ով որոշում դեռևս կայացված չէ:

2018թ. հունվարի 1-ի դրությամբ նշված 77 վճռաբեկ բողոքից 4-ի կամ 5.0%-ի՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի վարույթ ընդունելու հարցով դեռևս որոշում կայացված չի եղել:

2017թ. դատախազների կողմից համապատասխան իրավաբանական կամ պաշտոնատար անձին հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացվել է 187 միջնորդագիր կամ հաղորդում (ինչպես վերը նշվել է 20-ը կամ 11.0%-ը՝ անչափահասների վերաբերյալ նյութերով կամ քրեական գործերով), որոնցով ստացվել են պատասխաններ՝ դրանց առարկա կազմող հարցերի քննարկման և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու վերաբերյալ:

Նախորդ տարի ներկայացվել է 96 մինջնորդագիր, այսինքն 2016թ. համեմատությամբ 2017թ. ներկայացված միջնորդագրերի թիվը գրեթե կրկնակի ավելացել է, ինչը խոսում է հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և վերացնելու՝ պարտականությունը կատարելու հարցում դատախազների հետևողականության բարձրացման մասին:

Համապատասխան մարմինների ղեկավար անձնակազմի ուշադրությունն առանձին գործերով նախաքննության և հետաքննության, օպերատիվ-հետախուզական աշխատանքների ընթացքում արձանագրված էական խնդիրների, բացթողումների, սխալների վրա հրավիրելու, դրանք վերացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու նպատակով, 2017թ. ընթացքում հետաքննության և նախաքննության մարմինների աշխատակիցների նկատմամբ ծառայողական քննություններ անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է ընդհանուր առմամբ 223 միջնորդություն, որոնցից 127-ը՝ նախաքննության մարմնի, 96-ը՝ հետաքննության մարմնի աշխատակցի վերաբերյալ: 91 անձ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից 18-ը՝ նախաքննության, 73-ը՝ հետաքննության մարմնի աշխատակից: Նախաքննության մարմնի 1 և հետաքննության մարմնի 6 աշխատակից ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

30 անձի վերաբերյալ հարցը քննարկվել է օպերատիվ խորհրդակցություններում (12-ը նախաքննության, 18-ը՝ հետաքննության մարմնի աշխատակից): 65 անձի վերաբերյալ վարույթներ չեն հարուցվել, որոնցից 54-ը նախաքննության, 11-ը՝ հետաքննության մարմնի աշխատակցի վերաբերյալ:

Նախաքննության մարմնի 22 և հետաքննության մարմնի 11 աշխատակցի վերաբերյալ ծառայողական ուսումնասիրությունները գտնվում են ընթացքի մեջ:

Քրեական գործերով դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության իրենց գործառույթների իրականացման ընթացքում դատախազների կողմից 2017թ. ձեռք են

բերվել քննիչների կողմից՝ իրենց ծառայողական գործունեության հետ կապված առերևույթ հանցագործության մասին տվյալներ, որոնցով քննված 5 քրեական գործ՝ 5 քննիչների վերաբերյալ, ուղարկվել է դատարան:

Նույն գործառույթների իրականացման շրջանակներում դատախազների կողմից հայտնաբերված՝ հետաքննության մարմինների պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական գործունեության հետ կապված առերևույթ հանցագործության դեպքերի առթիվ 2017թ. ընթացքում քննվել է 5 քրեական գործ, որոնցից մեկը՝ երեք անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2017թ. դատախազի կողմից ձերբակալումից ազատվել է 8 անձ, ձերբակալման իրավաչափությունը դատական կարգով վիճարկվել է 42 դեպքով, որոնցից 22-ի դեպքում ձերբակալման իրավաչափության դեմ բողոքը դատարանի կողմից մերժվել է, 20-ի դեպքում՝ բավարարվել:

2017թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 986 միջնորդություն, որից բավարարվել է 912-ը կամ 92.5%-ը, մերժվել՝ 74-ը կամ 7.5%-ը: Ներկայացված միջնորդություններից 118-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ: 47.0%-ը բավարարվել է 2017թ. 1-ին, 53%-ը՝ 2-րդ կիսամյակում: Մերժվածներից 56.7%-ով որոշումը կայացվել է 2017թ. 1-ին, 43.3%-ով՝ 2017թ. 2-րդ կիսամյակում:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 2017թ. ընթացքում ներկայացված միջնորդությունների 12.9%-ի դեպքում կիրառվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Գրավ կիրառելու վերաբերյալ որոշումների 51.6 %-ը կայացվել է 2017թ. 1-ին, 48.4%-ը՝ 2-րդ կիսամյակում:

Համեմատության համար նշենք, որ 2016թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1166 միջնորդություն, որոնցից բավարարվել է 1054-ը, մերժվել է 112-ը: 114-ի դեպքում ընտրվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 2016թ. ընթացքում ներկայացված միջնորդությունների 90.4%-ը բավարարվել է, 9.6%-ը՝ մերժվել: 10.8%-ի դեպքում կիրառվել է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ:

Այսպիսով, 2016 թվականի համեմատ, 2017 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը 180-ով կամ 15.4%-ով նվազել է:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների բավարարման տոկոսային ցուցանիշն աճել է 2.1%-ով (92.5-90.4):

2017թ. ընթացքում կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու դեպքերը աճել են 4-ով կամ 3.5%-ով:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2017թ. ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների նվազումը ու դրանց բավարարման ցուցանիշի տոկոսային աճն ուղղակիորեն կապված է Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության և իրավաչափության միասնական չափանիշներ սահմանելու և կիրառելու հետ:

Այսպես.

2017թ. հուլիսի 3-ին դատախազության օրվան նվիրված հանդիսավոր նիստում Հանրապետության Նախագահի կողմից իրավապահ գործունեության ընթացքում ազատության և անձեռնմխելիության հիմնարար կոնվենցիոնալ իրավունքների ապահովման առանձնահատուկ կարևորությունն ընդգծելուց հետո, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել և վեր են հանվել այս ոլորտում առկա գործնական խնդիրներն ու առաջարկվել հստակ լուծումներ:

Ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ապահովման չափանիշների վերաբերյալ ՄԻԵԴ-ի ձևավորած նախադեպային իրավունքը և ներպետական իրավական կարգավորումները:

Հատուկ ուշադրության և վերլուծության են արժանացել Հայաստանի դեմ գործերով ՄԻԵԴ-ի վճիռներում արձանագրված իրավիճակներն ու խախտումները՝ փաստելով, որ դրանք հետևանք են նաև կալանավորման հիմքերի պարզմանն ու հիմնավորմանն ուղղված բավարար միջոցներ չձեռնարկելու, ինչպես նաև անհետևողականության կամ չիմացության պատճառով խափանման միջոց կալանավորում կիրառելու բավարար հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քննիչի կողմից դրանք միջնորդության մեջ չարտացոլելու և չվերլուծելու:

Աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում, որի արդյունքում ընդունված որոշմամբ հստակ սահմանվել են նախքան կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելը, դրա հիմնավորվածությունն ապահովելու նպատակով ձեռնարկվելիք պարտադիր դատավարական և օպերատիվ-հետախուզական միջոցառումները: Դատախազներին հանձնարարվել է նաև ապահովել, որպեսզի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունները բովանդակեն գործի քննությունն ապահովելու ուղղությամբ քննության մարմնի դրսևորած պատշաճ

ջանասիրությունը հիմնավորելու համար անհրաժեշտ տեղեկատվություն՝ ցույց տալով արդեն իսկ կատարված քննչական և այլ դատավարական գործողությունների ծավալը, ինչպես նաև ներկայացնելով տվյալներ կատարվելիք գործողությունների մասին, հիմնավորելով, որ դրանք ավելի վաղ չէին կարող կատարվել:

Պետք է փաստել, որ վերը նշված չափանիշների սահմանումն ու կիրառումը նպաստել է նաև նրան, որ կալանքի տակ գտնվող մեղադրյալների վերաբերյալ քրեական գործերի նախաքննությունն ավարտվել է ավելի սեղմ ժամկետներում:

Այսպես, եթե 2016թ. նման քրեական գործերի 35%-ն է քննվել մինչև երկու ամիս ժամկետում, ապա 2017թ.՝ 38%-ը, եթե 2016թ. ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով նման քրեական գործերի 30%-ն է քննվել մինչև երկու ամիս ժամկետում, ապա 2017թ.՝ 35%-ը, եթե 2016թ. միջին և ոչ մեծ ծանրության նման քրեական գործերի 47%-ն է քննվել մինչև երկու ամիս ժամկետում, ապա 2017թ.՝ 51%-ը: Եթե 2016թ միջին և ոչ մեծ ծանրության նման քրեական գործերի 75%-ն է քննվել մինչև չորս ամիս ժամկետում, ապա 2017թ.՝ 84%-ը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման համաձայն՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն դատարան կարող է հարուցվել դատախազի կամ քննիչի կողմից: Նույն հոդվածի 5-րդ մասը նախատեսում է միջնորդության քննարկման արդյունքում կայացված որոշումը դատարանի կողմից միջնորդություն հարուցած անձին հանձնելու պարտականություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասը քրեական հետապնդման մարմիններից միայն դատախազին է իրավունք վերապահում վերաքննիչ բողոք բերելու միջնորդության քննարկման արդյունքում դատարանի կայացրած որոշման դեմ:

Այն դեպքում, երբ միջնորդությունը դատարան է ներկայացրել քննիչը, կայացված որոշման մասին դատախազին իրազեկելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հատուկ կարգավորում չի նախատեսում, որի արդյունքում, իրավակիրառ պրակտիկայում իրավիճակին տրված մեկնաբանության պայմաններում, դատախազը՝ որպես քրեական հետապնդման մարմին, զրկված է լինում միջնորդության քննարկման արդյունքում կայացված որոշումը ժամկետում ստանալու և այն բողոքարկելու իր բացառիկ լիազորությունն իրացնելու իրավական հնարավորությունից:

Բացի դրանից, դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունների քննարկման կարգը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասը դատախազին իրավունք է վերապահում հետ վերցնելու ներկայացված միջնորդությունը, մինչդեռ նույն օրենսգիրքը չի նախատեսում

միջնորդությունը դատարան ներկայացնելու մասին քննիչի կողմից դատախազին իրազեկելու պարտականություն:

Օրենսդրական բացը լրացնելու՝ դատախազի լիազորության իրականացման իրավական անհնարինության վերացման նպատակով ՀՀ Վճռաբեկ դատարան բերվել է համապատասխան բողոք, որը վարույթ չի ընդունվել:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2017 թվականի մարտի 7-ին ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով վիճարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականությունը, այն հիմնավորմամբ, որ դրանք չեն ապահովում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություններով դատարանի որոշումների անմիջական ուղարկումը բողոքարկման սուբյեկտ դատախազին: Նշված որոշումների՝ դատախազի կողմից քննիչից ստանալը կախվածության մեջ է դնում դատախազի՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատական բողոքարկման իրավունքի իրացումը քննիչի հայեցողությունից, և բողոքարկման նման մեխանիզմը լիրաժեքորեն չի կարող ապահովել դատախազի կողմից ՀՀ Սահմանադրությամբ սահմանված դատական ակտերի բողոքարկման լիազորության իրականացումը:

ՀՀ Սահմանադրական դատարանը՝ ՀՀ գլխավոր դատախազի դիմումի քննության արդյունքում 2017 թվականի հունիսի 13-ի ՍԴՈ-1373 որոշմամբ արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում ընթացակարգային նորմերին չպետք է ցուցաբերվի ձևական մոտեցում, ինչի միջոցով հնարավոր կլինի տվյալ իրավահարաբերություններում ապահովել անձի շահերի դատական պաշտպանությունը և կանխել իրավական անվտանգության հնարավոր սպառնալիքները:

ՀՀ Սահմանադրական դատարանը նշված որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ մինչև օրենսդրական համարժեք փոփոխությունները, վեճի առարկա խնդրին լուծում կարող է տրվել նաև առկա իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման և դրան համարժեք իրավակիրառական պրակտիկա ձևավորելու շրջանակներում: ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորությունների իրացմանն ուղղված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումների արդյունավետ իրացման և իրավունքի գերակայության երաշխավորման շահերը պահանջում են, որ՝

- քննիչը դատարան ներկայացնելուց առաջ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության մասին պետք է իրազեկի հսկող դատախազին,

- կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշման մասին պետք է պատշաճ ձևով իրազեկվի նաև դատախազը:

Պետք է ընդգծել, որ դատախազության կողմից հետևողականություն է դրսևորվել ոչ միայն կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ անհիմն միջնորդություններ ներկայացնելուց ձեռնպահ մնալու, իսկ ներկայացված միջնորդությունները հետ վերցնելու, այլ նաև ցանկացած անաչառ դիտորդի համար ակնհայտ հիմնավոր միջնորդություններն անհիմն մերժելու դեպքերում որոշումը ոչ միայն բողոքարկելու, այլև նման իրավիճակները նախականխելու նպատակով իրավական բոլոր հնարավորություններն օգտագործելով միջոցներ ձեռնարկելու հարցում:

Մասնավորապես, ՀՀ քննչական կոմիտեի մարզային քննչական վարչություններից մեկում ծանր հանցագործության կատարման համար որպես մեղադրյալ ներգրավված անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից չէր բավարարվել, այն պայմաններում, երբ դատարանին էին ներկայացվել օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ակնհայտ և հիմնավոր ապացույցներ՝ մեղադրյալի կողմից սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր հանցագործության տուժողի նկատմամբ ինչպես անձամբ, այնպես էլ միջնորդավորված կերպով ապօրինի ազդեցություն, այդ թվում՝ սպառնալիքի միջոցով, գործադրելու վերաբերյալ:

Թեև առաջին ատյանի դատարանի նման որոշումը բողոքարկվել է, իսկ վերաքննիչ քրեական դատարանն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով փաստել որոշման անօրինականությունը և դատախազի վերաքննիչ բողոքը բավարարելու վերաբերյալ հիմնավորումներում առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը համարել անընդունելի, սակայն արդյունքում ծանր հանցանքի կատարման համար մեղադրվողը տևական ժամանակ անհիմն մնացել է ազատության մեջ՝ իրական հնարավորություն ստանալով շարունակելու դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով քննությանը խոչընդոտելու վարքագիծը:

ՀՀ դատախազության՝ տվյալ քրեական գործի կոնկրետ փաստական տվյալների հիման վրա ձևավորված համոզմամբ՝ առաջին ատյանի դատարանն այս դեպքում թույլ էր տվել դատավարական նորմի այնպիսի խախտում, որի առկայությունը չէր կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով: Ուստի, ՀՀ դատական օրենսգրքի իրավակարգավորումների հիման վրա, դատավորի կողմից նման որոշման կայացումը համարելով արդարադատություն իրականացնելիս դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման դրսևորում, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու

նպատակահարմարության հարցը քննարկելու վերաբերյալ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նախագահին ներկայացվել է միջնորդություն:

2017 թ. դատախազական աշխատանքի կարևոր առաջնահերթություններից է եղել հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության բարձրացումը:

2017թ. մայիսին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որն աննախադեպ ծավալով և խորությամբ ուսումնասիրել է 2000-2016թթ. հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման արդյունավետության վիճակը:

Շուրջ 5 ամսվա ընթացքում ուսումնասիրվել և ամփոփվել է 2000-2016 թվականների ընթացքում հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության վիճակը: Նման մեծ ծավալի ուսումնասիրություն հանրապետությունում կատարվել է առաջին անգամ. ուսումնասիրվել է շուրջ 14 350 հետախուզական գործ և կազմվել հետախուզական աշխատանքների օրինականության վերաբերյալ նույնքան եզրակացություն: Ըստ անհրաժեշտության ուսումնասիրվել են նաև քրեական գործեր:

Ուսումնասիրության արդյունքներն ամփոփվել և քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության ներկայացուցիչները: Քննարկման արդյունքներով՝

Քրեական և հետախուզական գործերով հայտնաբերված էական բնույթի այն խախտումներով, որոնցով վարույթն իրականացրած մարմինների գործողությունները սահմանված կարգով ստուգելու և քրեաիրավական գնահատական տալու անհրաժեշտություն է առաջացել, հարուցվել է 4 քրեական գործ, որոնք ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ նախաքննություն կատարելու:

Այն խախտումներով, որոնցով քրեական գործ հարուցելու հիմքերը բացակայել են (անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով սահմանված վաղեմության ժամկետները) կամ առկա է եղել քրեադատավարական արգելք, ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդություններ են հասցեագրվել վարույթն իրականացրած մարմինների վերադաս մարմիններին՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահին (89 քրեական գործով), ՀՀ ոստիկանության պետին (115 քրեական գործով), ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության պետին (5 քրեական գործով): ՀՀ դատախազության նախկին քննիչների գործողություններին առնչվող խախտումների վերաբերյալ ծառայողական ուսումնասիրությունն (37 քրեական գործով) անցկացվել է ՀՀ

դատախազությունում, իսկ արդյունքները քննարկվել և ամփոփվել են օպերատիվ խորհրդակցությունում:

ՀՀ տարածքում ՀՀ ոստիկանության կողմից հետախուզման փաստացի իրականացման իրական վիճակը վեր հանելու, հետախուզական աշխատանքները, դրանց իրականացման մեթոդիկան ու տակտիկան իրական գնահատելու, խախտումները բացառելու, հետախուզական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ լուծումներ առաջ քաշելու նպատակով ուսումնասիրություն կատարելու և արդյունքների մասին ՀՀ դատախազությանը հայտնելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետին ուղարկվել է գրություն:

ՀՀ պաշտպանության նախարարության Ռազմական ոստիկանության ստորաբաժանումների կողմից վարվող հետախուզական գործերը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանձնվել են ՀՀ ոստիկանությանը:

ՀՀ դատախազության կողմից մշակվել են մի շարք իրավական ակտերում, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման կարգը սահմանող համապատասխան ենթաօրենսդրական ակտում, ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի 1037-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծեր:

Կոնկրետ առաջարկներ ներառող գրություններ են ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին, ՀՀ ոստիկանության պետին՝ հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման արդյունավետությունը բարձրացնելու, խախտումների պատճառները վեր հանելու, դրանք վերացնելու և հետագայում բացառելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Այդ նպատակով առաջարկվել է նաև որոշ իրավական ակտերում նախաձեռնել փոփոխություններ, հետախուզում հայտարարելու և իրականացնելու գործընթացը պատշաճ կանոնակարգելու, գործող կարգավորումների պահանջները պատշաճ կատարելու ուղղությամբ ձեռնարկել գործուն միջոցներ:

Հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին տրվել են կոնկրետ հանձնարարականներ:

Ի թիվս այլնի՝ հանձնարարվել է նաև կիսամյակը մեկ անգամ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում հաշվառված հետախուզվողների տվյալները համեմատել փաստացի հետախուզման մեջ գտնվող անձանց վերաբերյալ քննչական մարմիններում առկա տվյալների հետ, անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում ձեռնարկել դատախազական ներգործության միջոցներ՝ առկա թերությունների պատճառները պարզելու և վերացնելու ուղղությամբ:

Բացի դրանից, հանձնարարվել է նույն պարբերականությամբ ուսումնասիրել հետախուզվողների հայտնաբերման ուղղությամբ կոնկրետ տարածքներում ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատանքի վիճակը: Այդ աշխատանքում տեղ գտած թերություններ, բացթողումներ հայտնաբերելիս, ինչպես նաև հետախուզական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, միջնորդագրեր ներկայացնել ոստիկանությանը:

ՀՀ գլխավոր դատախազությունում հետաքննության և նախաքննության մարմինների ներկայացուցիչների հետ համատեղ կազմակերպվել է քննարկում՝ հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման արդյունավետությունը բարձրացնելու համար ոլորտը պատշաճ իրավական կարգավորման ենթարկելու նպատակով:

Ի կատարումն վերը նշված գրությունների՝

- ՀՀ քննչական կոմիտեի նախագահի պաշտոնակատարի կողմից ՀՀ քննչական կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմինների և ստորաբաժանումների պետերին 2018 թվականի հունվարի 10-ին տրվել է «Նախաքննության ընթացքում մեղադրյալի նկատմամբ հետախուզում հայտարարելու, դատախազի սանկցիայով ընտրված խափանման միջոց կալանքը դատարանի որոշմամբ վերահաստատելու, հետախուզման մեջ գտնվող մեղադրյալների արարքները գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու, ինչպես նաև վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու գործընթացը կանոնակարգելու մասին» թիվ 1-Լ հանձնարարականը:
- ՀՀ ոստիկանության պետի կողմից 2017 թվականի նոյեմբերի 7-ին արձակվել է «Հետախուզական աշխատանքների նկատմամբ իրականացվող հսկողության կատարելագործման մասին» թիվ 3055-Ա հրամանը:
- ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի կողմից 2017 թվականի նոյեմբերի 7-ին տրվել է «Հետախուզվող անձանց հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու մասին» թիվ 20-Ց ցուցումը:

Նշված հրամանը և ցուցումը կոչված են լրացնելու ոլորտի այն իրավական բացերը, որոնք հնարավորություն են տվել թույլ տալու հայտնաբերված խախտումների զգալի մասը:

- Ծառայողական քննություն անցկացնելու նպատակով ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի 28.11.2017թ. հրամանով ստեղծվել է ծառայողական քննություն իրականացնող խումբ:

Այս ոլորտում կատարվող աշխատանքները կրելու են շարունակական բնույթ՝ ինչպես համապատասխան գործընթացը, այնպես էլ այն կարգավորող իրավական ակտերը կատարելագործելու, տարբեր պետական մարմինների համագործակցված աշխատանքին նպաստելու ուղղությամբ, ինչը կստեղծի բոլոր փաստական և իրավական հիմքերը՝

խախտումներն ու բացթողումները նվազագույնի հասցնելու, իսկ լավագույն արդյունքի դեպքում, ինչու չէ, նաև բացառելու:

Ներկայումս ՀՀ գլխավոր դատախազությունում շարունակվում է դատից և պատժից խուսափող ամբաստանյալների և դատապարտյալների հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության վիճակի ուսումնասիրությունը:

Ինչ վերաբերում է հաշվետու ժամանակահատվածում հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության վիճակին, ապա նշեմ, որ 2017թ. հետախուզվել է 15.259 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1834-ը կամ 12 %-ը:

2016 թվականի համեմատությամբ 2017 թվականին հետախուզվողների թիվն ավելացել է 906-ով կամ 6.3 %-ով: Հետախուզվողների հայտնաբերման քանակական ցուցանիշը բարելավվել է 179-ով, իսկ տոկոսայինը՝ 0,5-ով:

Ընդհանուր հանցատեսակների մեջ, ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների գերակշիռ թիվը հաշվի առնելով, նույն տվյալները ներկայացվում են առանց նշված հոդվածով հետախուզվողների տվյալների: Այսպես՝

2016 թվականին հետախուզվել է 2959 մեղադրյալ, որից հայտնաբերվել է 1002-ը կամ 33.86%-ը:

2017 թվականին հետախուզվել է 3407 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1152-ը կամ 33.81%-ը:

Փաստորեն՝ 2016 թվականի համեմատությամբ 2017 թվականին հետախուզվողների թիվը, առանց ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների, ավելացել է 448-ով:

2016 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվել է 11.394 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 653-ը կամ 5.73%-ը:

2017 թվականին նշված հոդվածով հետախուզվել է 11.852 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 682-ը կամ 5.75 %-ը:

Փաստորեն՝ 2016 թվականի համեմատությամբ 2017 թվականին հետախուզվողների հայտնաբերման քանակական ցուցանիշն ավելացել է 150-ով, սակայն տոկոսային ցուցանիշը նվազել է 0.05-ով:

2016 թվականին 2017 թվականի համեմատությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների թիվն ավելացել է 458-ով (4.0%-ով), հայտնաբերման քանակական ցուցանիշն ավելացել է 29-ով, իսկ տոկոսային ցուցանիշը՝ 0.02-ով:

Այսպիսով, 2018թ. հունվարի 1-ի դրությամբ հետախուզման մեջ է գտնվել 13.425 մեղադրյալ, որոնցից 11.170-ը հետախուզվում է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ, իսկ 2255-ը՝ այլ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարելու համար:

Հետախուզվողների թվի ավելացումը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված է ՀՀ գլխավոր դատախազությունում 2017թ. կատարված ուսումնասիրությամբ, որի արդյունքում վեր է հանվել 112 այնպիսի դեպք, երբ անձանց նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին որոշում կայացված լինելու պայմաններում, փաստացի հետախուզում չի իրականացվել: Դրանցից 109-ով վարույթները վերսկսվել են, և 36-ով մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով վարույթը կասեցված քրեական գործերով նշված ուսումնասիրության ընթացքում հետախուզվողներին հայտնաբերելու նպատակով կոնկրետ գործողություններ կատարելու վերաբերյալ նախաքննական մարմիններին տրվել է 61 ցուցում, որոնցից 7-ի արդյունքում հետախուզվող անձինք հայտնաբերվել են:

Տարի	***Հետախուզվել են***			***Հայտնաբերվել են***			
	ՀՀ քր. օր. 327 հոդ.	*ՀՀ քր. օր. այլ հոդվ.*	*Ընդ. տարվա ընթացքում*	*ՀՀ քր. օր. 327 հոդ.*	*ՀՀ քր. օր. այլ հոդվ.*	*Ընդ.*	*Հայտն. %-ը*
2016	11394	2959	14353	653	1002	1655	11.53
2017	11852	3407	15259	682	1152	1834	12

Հաշվետու ժամանակահատվածում կարևորվել է նաև հանրապետությունում տնային մահացությունների դեպքերով հաղորդումների գրանցման պրակտիկայի և ոլորտի իրավական կարգավորումների ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Տնային մահացությունների դեպքերով ուսումնասիրության արդյունքները փաստել են, որ քրեական վարույթի շրջանակներում ստուգում պահանջող որոշ դեպքեր դուրս են մնում իրավապահ մարմինների տեսադաշտից:

Ախտաբանաանատոմիական հաստատությունում դիահերձումն իրականացնող լիցենզավորված մասնագետները դատաբժշկական բնագավառի մասնագետներ չեն և չեն կարող դիահերձման արդյունքում անհրաժեշտ արդյունավետությամբ հայտնաբերել ենթադրյալ հանցագործության մասին վկայող հետքեր: Չնայած ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգով որոշակի առումով նախատեսված է հերձման ընթացքում առերևույթ հանցագործության հետքեր հայտնաբերելիս համապատասխան միջոցների ձեռնարկման ընթացակարգ, սակայն

ոլորտը կարգավորող նորմերի կիրառումը լիարժեք չի ապահովում դիահերձման ընթացքում հանցագործությունների հետքերի հայտնաբերման անհրաժեշտ պայմաններ:

Ավելին, ուսումնասիրությամբ պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության ոչ բոլոր տարածքներում են ապահովված ախտաբանաանատոմիական հերձումների համար անհրաժեշտ պայմաններ: Բացի դրանից, թեև տվյալ կարգը չի նախատեսում հերձումից մասնակի հրաժարման հնարավորություն, սակայն գործնականում պարզվել են նման դեպքեր: Մասնավորապես՝ արձանագրվել է դեպք, երբ հարազատի դիմումի հիման վրա չի հերձվել դիակի գլուխը, ինչը հետագայում խոչընդոտ է առաջացրել քրեական վարույթի ընթացքում դեպքի իրական հանգամանքները պարզելու հարցում: Արդյունքում ձեռք չի բերվել գործի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցը, առանց որի չի կարող հաստատված համարվել մահվան պատճառը, առողջությանը հասցված վնասի ծանրության աստիճանը և պատճառման մեխանիզմը: Ներկայիս կարգավորման պայմաններում մահվան փաստը հաստատող հաստատությունը կամ դիակային բրիգադը Հայաստանի Հանրապետության ոչ բոլոր տարածքներում են հագեցված համապատասխան ձեռնահաս մասնագետով և սարքավորումներով:

Ելնելով ուսումնասիրությամբ ի հայտ բերված այս հիմնահարցերից և հաշվի առնելով ընտանեկան բռնությունների լատենտայնության հավանականությունը՝ ՀՀ գլխավոր դատախազը մի քանի գործնական առաջարկ է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարին:

Մասնավորապես՝ առաջարկվել է միջոցներ ձեռնարկել տանը, ստացիոնար պայմաններում մահվան, բուժհաստատություն դիակ տեղափոխելու դեպքերում մահվան հաստատումը միայն համապատասխան մասնագետների կողմից իրականացնելու ուղղությամբ, մշակել մարդու մահվան փաստի հավաստման արձանագրության միասնական՝ համապատասխան բժշկական և անհրաժեշտ այլ տվյալներ ներառող ձև, արգելել առանց այդ արձանագրության լրացման դիակի ախտաբանաանատոմիական հետազոտության իրականացումը և/կամ մահվան վերաբերյալ բժշկական վկայագիր տալը: Իսկ տնային մահացությունների այն դեպքերում, երբ ախտորոշումը հայտնի չէ և չկան վերջին մեկ ամսվա ընթացքում տվյալ անձի հետազոտման, բուժման կամ ախտորոշման վերաբերյալ բժշկական փաստաթղթեր, ինչպես նաև երբ դիակի վրա առկա են մարմնական վնասվածքների տեսանելի հետքեր, պարտավորեցնել համապատասխան բուժաշխատողին՝ ահազանգել իրավապահ մարմիններին: Առաջարկվել է նաև սահմանել դիակի գտնվելու վայրում բուժզննումն իրականացնող բուժաշխատակցի կողմից դիակի հերձման ուղեգրման գործողությունների հաջորդական քայլերի վերաբերյալ հստակ չափանիշներ՝ ներառյալ սահմանելով, թե տնային և ստացիոնար պայմաններում մահերի ո՞ր դեպքերում կարող է դիակը չենթարկվել դիահերձման, ո՞ր դեպքերում պետք է իրականացնել ախտաբանաանատոմիական և ո՞ր դեպքերում՝ դատաբժշկական հետազոտություն

/հերձում/: Իսկ էլեկտրոնային բժշկության ներդրման դեպքում սահմանել շտապօգնության բրիգադի կամ տեղամասային բժշկի կողմից համապատասխան բուժհաստատության միջոցով էլեկտրոնային բազայից մահացածի վերաբերյալ բժշկական լիարժեք տեղեկություն ստանալու կարգ:

Հաշվի առնելով խնդրի բացառիկ կարևորությունը և իրավաչափ լուծումների անհետաձգելիությունը՝ ՀՀ դատախազությունը պատրաստակամություն է հայտնել ակտիվորեն մասնակցելու նշված առաջարկությունների շահագրգիռ, բազմակողմ քննարկումներին և ներգրավվելու համապատասխան իրավական ակտերի մշակման աշխատանքներում:

2017թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից հատկապես ակտիվացել են ապօրինի ծառահատումների դեպքերի նախականխման, կանխման, այդ դեպքերով քննության արդյունավետության բարձրացմանն ուղղությամբ տարվող աշխատանքները, որի արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազն ապօրինի անտառահատումների և այդ ոլորտում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի հիմնահարցերի շուրջ 19.07.2017թ. աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների և անտառային ֆոնդեր ունեցող մարզերի դատախազների մասնակցությամբ:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են ապօրինի անտառահատումների կանխարգելմանը, հանցագործությունների բացահայտմանը, հարուցված քրեական գործերով օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննությանը, պետությանը հասցված վնասի ամբողջական վերականգնմանը, ապօրինի ծառահատումների կոռուպցիոն սխեմաներում ներգրավված անձանց ամբողջական շրջանակի բացահայտմանը և պատասխանատվության ենթարկելուն խոչընդոտող այն հանգամանքները, անտառաշերտերի պահպանության և ծառահատումների ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում առկա բացերը լրացնելուն առնչվող խնդիրները:

Նշվել էր, որ պետք է էապես ակտիվացնել այս ոլորտում դատախազական հսկողությունը, և հետևողական պայքար ծավալվել այս բնույթի հանցագործությունների ինչպես կանխարգելման, այնպես էլ բացահայտման և հանցագործություն կատարած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով այդ գործերով նախաքննության պլանավորաման, ապօրինի անտառահատման հանցակազմ պարունակող բոլոր դեպքերում ներգրավված, շատ հաճախ միտումնավոր թաքցվող հանցակիցների ամբողջական շրջանակի բացահայտման, անտառահատումների փաստերին առնչություն ունեցող իրավասու բոլոր պատասխանատու պաշտոնատար անձանց արարքներին քրեաիրավական գնահատականներ տալու վրա:

Խորհրդակցության ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը տվել էր ապօրինի ծառահատումների դեմ պայքարում իրավապահ մարմինների կողմից շոշափելի արդյունքներ ապահովելուն խոչընդոտող հանգամանքները հնարավորինս կարճ ժամանակահատվածում վերացնելուն ուղղված կոնկրետ հանձնարարություններ: Նրա կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարին, ՀՀ բնապահպանության նախարարին, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության պետին ուղարկվել էին գրություններ այդ խոչընդոտները վերացնելուն ուղղված համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազի այս նախաձեռնության հիման վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ում, ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչների մասնակցությամբ, քննարկվել է «Պետական անտառների օգտագործման՝ անտառահատման և անտառային տոմսերի ձևերը և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012թ. սեպտեմբերի 5-ի հրամանի հավելվածում դատախազության նկատառումների ու առաջարկությունների հիման վրա լրացումներ կատարելու հարցը:

ՀՀ բնապահպանության նախարարին և ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված ՀՀ գլխավոր դատախազի գրությունները ևս կոնկրետ քայլեր են հաջորդել: Մասնավորապես մշակվել ու շրջանառության մեջ է դրվել ապօրինի ծառահատումների կանխարգելման ու տեղափոխման դեմ ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող համատեղ միջոցառումների պլան, որում տեղ են գտել նաև ՀՀ գլխավոր դատախազի շեշտադրած ուղղություններով ձեռնարկվելիք միջոցառումները:

Այդ պլանը ՀՀ գլխավոր դատախազության կողմից ուղարկվել է ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններ՝ դրանով նախատեսված միջոցառումների իրականացումն ամենօրյա ուշադրության կենտրոնում պահելու համար:

ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված վերլուծության արդյունքում քրեական հետապնդման մարմինների կողմից ձևավորվել է միասնական իրավական դիրքորոշում առ այն, որ ապօրինի ծառահատմամբ որպես շրջակա միջավայրին պատճառված վնաս պետք է գնահատել բուսական աշխարհին պատճառված վնասի սակագների բազմապատիկներով հաշվարկվող՝ հատուցման ենթակա արժեքը:

Բացի դրանից, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից վեր են հանվել անտառների և անտառային հողերի օգտագործման, ապօրինի ծառահատման հետևանքով բնությանը պատճառված վնասի արձանագրման և հաշվարկման վերաբերյալ հարաբերությունները կարգավորող, համապատասխան պատասխանատվություն նախատեսող իրավական ակտերը: Մշակվել է

առաջարկությունների փաթեթ՝ ուղղված այդ իրավական ակտերում առկա էական հակասությունները և անհստակությունները շտկելուն:

Արդյունքում բարելավվել է ծառահատումների և փայտանյութի տեղափոխման վերահսկողության, ապօրինի անտառահատումների կանխարգելման, այս հանցատեսակի դեմ պայքարի արդյունավետությունը:

Այսպես, եթե 2011-2016թթ. ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է 153 քրեական գործ, և նույն հոդվածի մեղադրանքով դատարան է ուղարկվել 58 քրեական գործ, ապա 2017թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է 110 քրեական գործ, որից 21 քրեական գործ՝ 27 անձի վերաբերյալ, նույն հոդվածի մեղադրանքով ուղարկվել է դատարան:

Փաստորեն, միայն 2017թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործերի ընդհանուր թիվը կազմում է 2011-2016թթ. հարուցված քրեական գործերի ընդհանուր քանակի շուրջ 62%-ը, իսկ նույն հոդվածի մեղադրանքով 2017թ. ընթացքում դատարան ուղարկված քրեական գործերի ընդհանուր թիվը կազմում է 2011-2016թթ. ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի մեղադրանքով դատարան ուղարկված քրեական գործերի ընդհանուր քանակի շուրջ 32%-ը:

2017թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հարուցված քրեական գործերով ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի հատկանիշներով որպես մեղադրյալ է ներգրավվել 49 անձ, նշված անձանցից 9-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Ապօրինի ծառահատման հետ կապված՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու կամ պաշտոնեական անփութություն թույլ տալու համար 2017թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում որպես մեղադրյալ է ներգրավվել 23 պաշտոնատար անձ, որոնցից 11-ի նկատմաբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2017թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի ծառահատման և անտառներ ոչնչացնելու, վնասելու արդյունքում պետությանը պատճառվել է 3.236.351.009 ՀՀ դրամի վնաս, որից նույն ժամանակահատվածում, որպես պատճառված վնասի հատուցում, վերականգնվել է 9.147.432 ՀՀ դրամ գումար:

2017թ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել նաև հանրապետությունում անցկացված ընտրությունների ընթացքում ընտրական իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման, դրանց հիման վրա նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ պատշաճ դատախազական հսկողության ապահովման ուղղությամբ:

Այսպես.

2017թ. ապրիլի 2-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների հրապարակումները, քաղաքացիների հաղորդումները և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերն ուսումնասիրելու, ըստ ենթակայության ուղարկելու, այդ հաղորդումների քննարկման, դրանց հիման վրա նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և այդ ոլորտում ՀՀ դատախազության գործունեությունը համակարգելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբին հանձնարարվել է ապահովել դիտորդական առաքելություն իրականացնող և շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ սերտ համագործակցությունը և աշխատանքի հրապարակայնությունը:

Աշխատանքային խումբը ստուգման առարկա է դարձրել 2017թ. ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված 923 ընտրական իրավախախտումների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները և ՀՀ ոստիկանության տարածքային բաժիններում ստացված նույն բնույթի ահազանգերը:

Նշված 923 հաղորդումից 68-ը միացվել է նույն դեպքի վերաբերյալ մամուլի հրապարակումների և ստացված ահազանգերի հիման վրա նախապատրաստվող նյութերին և ընթացքը լուծվել է համատեղ:

Մնացած 855 հաղորդումից 835-ով ձեռնարկված՝ օրենքով նախատեսված միջոցների արդյունքում այդ հաղորդումներում նշված հանգամանքները հերքվել են, քրեական գործ հարուցելու հիմքեր ձեռք չեն բերվել:

Հանցագործության մասին հաղորդում տված անձանց կողմից քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների դեմ բերվել է յոթ բողոք, որոնք մերժվել են վերադաս դատախազի կողմից: Երկու դեպքում վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին և վերադաս դատախազի՝ բողոքը մերժելու մասին որոշումների դեմ բողոք է բերվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ, որոնք ևս մերժվել են:

20 դեպքով առերևույթ ընտրական բնույթի հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումներով ձեռնարկված անհետաձգելի քննչական, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածի (մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու փորձ), 154-րդ հոդվածի (քվեարկության գաղտնիությունը խախտելը), 149-րդ հոդվածի (լրագրողի, դիտորդի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը) և 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի (թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), հանրաքվեի

քարոզչական նախաձեռնությունների կողմից ընտրողներին կաշառք տալը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը) հատկանիշներով հարուցվել է նույնքան քրեական գործ:

Դրանցից՝

- 1-ը նախաքննության ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով միացվել է մեկ այլ քրեական գործի.
- 6-ով քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով.
- 1 քրեական գործ 1 անձի վերաբերյալ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան: Դատարանի որոշմամբ անձի նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց:
- 12 քրեական գործ 13 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դրանցից 10-ով արդեն կայացվել են մեղադրական դատավճիռներ, որոնցից 8-ով անձի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է որոշակի ժամկետով ազատազրկում և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակվել է որոշակի ժամկետով փորձաշրջան: Նշված դատավճիռներից հինգի դեմ հսկող դատախազների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման մասով բերվել է վերաքննիչ բողոք, որոնցից մեկը վերաքննիչ դատարանի կողմից մերժվել է, մեկով վերաքննիչ դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ, երկուսով բավարարել է դատախազի բողոքը, բեկանել առաջին ատյանի դատարանների դատավճիռները քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման մասով և անձանց դատապարտել երկու տարի ժամկետով ազատազրկման: Մեկ վերաքննիչ բողոք (Վայոց ձոր) դեռևս գտնվում է քննության փուլում: Մեկ գործով մեկ անձի նկատմամբ նշանակվել է տուգանք, մեկ գործով մեկ անձ դատապարտվել է 2 տարի ազատազրկման, իսկ երկու քրեական գործով դատաքննությունը դեռևս շարունակվում է:

ՀՀ գլխավոր դատախազությունում ձևավորված աշխատանքային խումբը ստուգման առարկա է դարձրել նաև 2017թ. մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված 124 ընտրական իրավախախտումների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները և ՀՀ ոստիկանության տարածքային բաժիններում ստացված նույն բնույթի ահազանգերը:

Ձեռնարկված օրենքով նախատեսված միջոցների արդյունքում նշված ընդհանուր 124 հաղորդումից 8-ը միացվել է նույն դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության տարածքային բաժիններում ստացված ահազանգերի հիման վրա նախապատրաստվող նյութերին, 106-ով դրանցում նշված հանգամանքները հերքվել են, քրեական գործ հարուցելու հիմքեր ձեռք չեն բերվել:

Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրված և առերևույթ ընտրական բնույթի հանցագործության հատկանիշներ պարունակող բոլոր հաղորդումներով ձեռնարկված անհետաձգելի քննչական, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի (առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիք), 149-րդ հոդվածի (լրագրողի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը), 153-րդ հոդվածի (այլ անձի փոխարեն քվեարկելը), 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի (ընտրակաշառք տալը) և 309-րդ հոդվածի (պաշտոնական լիազորություններն անցնելը) հատկանիշներով հարուցվել է 10 քրեական գործ: Դրանցից՝

- 2-ը նախաքննության լրիվությունը, բազմակողմանիությունը և օբյեկտիվությունն ապահովելու նպատակով միացվել են համանման փաստական հանգամանքներով երկու այլ քրեական գործի.
- 5 քրեական գործով վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով: Մեկ դեպքում վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերվել է բողոք, որը մերժվել է վերադաս դատախազի կողմից: Բողոքը մերժելու մասին վերադաս դատախազի որոշումը բողոքարկվել է դատարան և գտնվում է դատաքննության փուլում.
- 1 քրեական գործով վարույթը կասեցվել է.
- 2 քրեական գործ երկու անձի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածով մեղադրանքով մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, որոնց վերաբերյալ կայացվել են մեղադրական դատավճիռներ, որոնցով անձինք դատապարտվել են տուգանքի, իսկ առաջին դեպքում նաև լրացուցիչ պատժի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև ընտրական հանձնաժողովներում աշխատանքի իրավունքից զրկելով երկու տարի ժամկետով:

ՀՀ դատախազությունում քննարկման առարկա են դարձել նաև 2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ դիտորդական առաքելությունների զեկույցները, որի արդյունքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության 10.07.2017թ. վերջնական զեկույցում արձանագրված խնդիրների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարություն:

Մասնավորապես, առաջարկվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ կետը շարադրել այնպիսի խմբագրությամբ, որ դրանով նախատեսված նախընտրական քարոզչության արգելքը տարածվի «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-5-րդ հոդվածների իմաստով «հանրային ծառայության պաշտոն» զբաղեցնող բոլոր անձանց վրա:

Բացի դրանից, առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի վերնագիրը և 2-րդ մասը շարադրել այնպիսի խմբագրությամբ, որ այն իր մեջ ներառի նաև հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ընտրողներին կաշառելը և ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը, ինչպես նաև առավել խստացնել ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հանրորեն

վտանգավոր արարք կատարելու համար քրեական պատասխանատվությունը, որի արդյունքում նշված հանցագործությունը կդառնա ծանր, ինչն էլ, իր հերթին, նախ կունենա կանխարգելիչ նշանակություն, ապա վարույթ իրականացնող մարմնին կտա իր բնույթով լատենտային համարվող այս հանցագործության բացահայտմանն ուղղված առավել լայն գործիքակազմից օգտվելու հնարավորություն:

2017թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է 2014-2015թթ. ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ քննված քրեական գործերով նախաքննության վիճակը: Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ.

2014թ. ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվել է 78 քրեական գործ, որոնցից՝

- 1 քրեական գործ՝ 3 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

- 44 քրեական գործի վարույթը կարճվել է, որոնցից 2-ը՝ հանցագործության դեպքի, իսկ մնացած 42-ը՝ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Հանցագործության դեպքի բացակայության հիմքով վարույթը կարճված քրեական գործերով սուտ մատնություն կատարելու դեպքերի առթիվ հարուցվել է 2 քրեական գործ:

2014թ. ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացված 103 հաղորդումից 99-ը եղել է ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, 4-ը՝ ՀՀ ԱՆ ՔԿ վարչության աշխատակիցների վերաբերյալ:

2015թ. ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվել է 106 քրեական գործ, որոնցից՝

- 1 քրեական գործ 1 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան,

- 68 քրեական գործի վարույթը կարճվել է, որոնցից 2-ը՝ հանցագործության դեպքի, իսկ մնացած 66-ը՝ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Հանցագործության դեպքի բացակայության հիմքով վարույթը կարճված քրեական գործերով սուտ մատնություն կատարելու դեպքերի առթիվ հարուցվել է 2 քրեական գործ:

2015թ. ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացվել է 108 հաղորդում, որոնցից 97-ը՝ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, 3-ը՝ քննչական կոմիտեի, 8-ը՝ ՔԿ վարչության աշխատակիցների վերաբերյալ:

Ուսումնասիրությամբ պարզվել են խոշտանգումների վերաբերյալ գործերով քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերի փոքրաթիվ լինելու հետևյալ պատճառները.

Մի շարք դեպքերում հանցագործության մասին հաղորդում տված անձի հայտնած հանգամանքներն իրենց հաստատումը չեն ստանում այլ ապացույցներով, օրինակ, դիմողի մոտ բացակայում են մարմնական վնասվածքները, կամ դրանց առկայության պայմաններում հնարավոր չի լինում ապացույցների բավարար համակցությամբ հաստատված համարել, որ դրանք առաջացել են բռնության հետևանքով և ոչ թե այլ հանգամանքներում, օրինակ, բերման ենթարկելիս ոստիկանների օրինական պահանջներին չենթարկվելու պատճառով ֆիզիկական ուժի գործադրման արդյունքում կամ ենթադրյալ խոշտանգմանը նախորդած իրադարձությունների ժամանակ և այլ հանգամանքներում:

Խոշտանգումների դեպքերի ապացուցման կամ դրանց լիարժեք հերքման բարդությունը շատ դեպքերում պայմանավորված է այն հանգամանքով, որ գործնականում հազվադեպ է տեսաձայնագրվում կասկածյալների և մեղադրյալների հարցաքննությունը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կատարվող քննչական այլ գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը:

Նկատի ունենալով, որ խոշտանգումների մասին հաղորդումների հիմնական մասը վերաբերում է խոշտանգման կիրառմամբ խոստովանական ցուցմունքներ կորզելուն, ուստի կասկածյալների և մեղադրյալների (հատկապես, անազատության մեջ գտնվող) հարցաքննությունների տեսաձայնագրումը հնարավորություն կտա իրական պատկերացում կազմելու, թե խոստովանական ցուցմունք տվող անձը ցուցմունքը տվել է իր կամքո՞վ, թե՞ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ազդեցության տակ, ինչպես նաև պարզելու այդ պահին հարցաքննվող անձի դեմքի և մարմնի տեսանելի այլ մասերի վրա հնարավոր խոշտանգման հետքերի առկայության հանգամանքը: Կասկածյալների և մեղադրյալների հարցաքննությունների այդօրինակ ամրագրումը հնարավորություն կտա նաև հստակ պարզելու այն հաղորդումների հավաստիությունը, որոնցով կասկածյալները և մեղադրյալները հայտնում են ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց խոշտանգելու մասին քննիչին հարցաքննության ժամանակ հայտնելու, սակայն վերջինիս կողմից այդ հանգամանքը չարձանագրելու վերաբերյալ:

Հատկանշական է, որ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի ձևերի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջների կատարման մասին Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն, վերահաստատելով իր նախորդ հանձնարարականը, նշել է, որ. «Մասնակից պետությունը պետք է նախաձեռնի օրենսդրական ու այլ անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու համար քրեական գործերով բոլոր հարցաքննությունների պարտադիր տեսաձայնագրումը, և զինի ոստիկանական բաժանմունքներում ու անազատության մեջ

պահելու համար նախատեսված այլ վայրերում հարցաքննության համար նախատեսված բոլոր սենյակները տեսաձայնագրման սարքերով»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մինչև օրենսդրական մակարդակով հարցի լուծումը, ՀՀ նախաքննական մարմինների ղեկավարներին ուղարկվել են հաղորդումներ՝ առաջարկելով համապատասխան միջոցներ ձեռնարկել (օրինակ՝ տալ հանձնարարականներ, հրամաններ, ցուցումներ), որպեսզի քննչական պրակտիկայում կասկածյալների և մեղադրյալների (հատկապես, անազատության մեջ գտնվող) հարցաքննությունը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կատարվող այլ քննչական գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, անձնական խուզարկությունը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը, տեսագրվի բոլոր այն դեպքերում, երբ կասկածյալը կամ մեղադրյալը չունի պաշտպան, միևնույն ժամանակ, քննչական գործողության ընթացքում տեսագրում կիրառելու հնարավորության մասին պարզաբանում ստանալուց հետո նման ցանկություն է հայտնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ քննումը զուգորդվում է անձին մերկացնելու, իսկ հետազոտման համար նմուշներ ստանալը կապված է անձի մարմնի ինտիմ մասերից այդպիսիք ստանալու հետ:

Բացի դրանից, խոշտանգումների և վատ վերաբերմունքի մասին հաղորդումների մի մասի ստուգմամբ պարզվել է, որ դրանք տրվել են ենթադրյալ խոշտանգման դեպքից տևական ժամանակ անց, երբ մինչև նման հաղորդում ներկայացնելն անձինք ունեցել են իրական հնարավորություն՝ հայտնելու այդ մասին:

Մի շարք դեպքերում այլ քրեական գործերով քննության ընթացքում կասկածյալները և մեղադրյալները հաղորդումներ են տվել ոստիկանների կամ քննության մարմինների կողմից խոշտանգման ենթարկվելու արդյունքում խոստովանական ցուցմունքներ տալու մասին՝ նպատակ ունենալով խուսափել քրեական պատասխանատվությունից:

Առանձին դեպքերում քրեական գործ հարուցելու առիթ է հանդիսացել ոչ թե ենթադրաբար խոշտանգման ենթարկված անձի հաղորդումը, այլ այն անձանց հաղորդումները, որոնց իսկությունը երբեմն հերքվել է հենց այն անձանց կողմից, որոնց խոշտանգելու վերաբերյալ ներկայացվել է հաղորդումը, և քննության ընթացքում չեն հայտնաբերվել խոշտանգման փաստի մասին վկայող օբյեկտիվ այլ փաստական տվյալներ:

ՀՀ կողմից խոշտանգումը պատշաճ քրեականացնելու հարցը բարձրացվել է դեռևս 2012թ. մայիսին, երբ Հայաստանի Հանրապետությունը քննարկման էր ներկայացրել ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման հերթական զեկույցը: ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում նշել էր, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է պատշաճ քրեականացնի խոշտանգումը՝ ապահովելով արարքի հանրային վտանգավորությանը համապատասխան խիստ պատիժ:

Դրան համապատասխան, 2015թ. հուլիսի 18-ին ուժի մեջ մտած օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվեց ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածին համահունչ, խոշտանգման համար քրեական պատասխանատվություն նախատեսող 309.1-րդ հոդվածով:

2015թ. ընթացքում խոշտանգումների դեպքերի վերաբերյալ քննված քրեական գործերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առանձին դեպքերում բարդություններ են առաջանում ՀՀ քրեական օրենսգրքի 309.1 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու հարցում: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու համար քրեական հետապնդման մարմնին քրեական գործ հարուցելու փուլում պետք է հայտնի լինեն տեղեկություններ անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու վերաբերյալ, որպիսի հանգամանքի մասին տեղեկություններ չունենալու, սակայն առերևույթ բռնության կիրառման մասին տվյալների առկայության պայմաններում, քրեական հետապնդման մարմինները ստիպված են եղել քրեական գործ հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ բռնության գործադրմամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ:

Այս կապակցությամբ հանձնարարվել է խոշտանգումների վերաբերյալ հաղորդումների հիման վրա քրեական գործ հարուցելու մասին հարցը լուծելիս արարքը որպես խոշտանգում որակել և ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով քրեական գործ հարուցել բոլոր այն դեպքերում, երբ ձեռք բերված փաստական տվյալները կվկայեն առնվազն ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի դիսպոզիցիայով նկարագրված նպատակներով կամ դրանցից որևէ մեկով պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելու վերաբերյալ՝ անկախ այն հանգամանքից, թե քննության այդ փուլում ձեռք բերված տվյալները բավարար կլինե՞ն գնահատելու, որ պատճառվել է ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք:

Ընդ որում, անհրաժեշտություն կա քննչական ենթակայության առարկայական հատկանիշով ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների ենթակայությանը վերապահել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը՝ նկատի ունենալով, որ հիշյալ հոդվածով նախատեսված հանցագործությունը կարող է կատարվել ինչպես պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի, այնպես էլ պետական մարմնի

անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ:

Մինչև օրենսդրական մակարդակով հիշյալ խնդրի լուծումը հանձնարարվել է, որ բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ կհարուցվի ոչ թե պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի, այլ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ խոշտանգում կատարելու ենթադրաբար դեպքի առթիվ, քրեական գործ հարուցելուց անմիջապես հետո քրեական գործն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կարգով քրեական գործը ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնելու հարցը քննարկելու համար:

Ուսումնասիրությամբ վերհանվել և ամփոփվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի դեմ կայացված՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի ու Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրված՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտումները: Դրանք հաշվի առնելով՝ դատախազներին տրվել են մի շարք հանձնարարություններ: Մասնավորապես, հանձնարարվել է ձերբակալված անձանց պահելու վայրերում պահվող անձանց նկատմամբ հնարավոր վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման նպատակով, ապահովել, որ խստագույնս պահպանվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջն այն մասին, որ կալանավորված անձը չի կարող 3 օրից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով:

Խիստ կարևորելով այն սկզբունքը, որ խոշտանգման դեպքերով փորձաքննությունը պետք է անցկացվի փակ դռների հետևում, բժշկական փորձագետի վերահսկողությամբ և իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց բացակայությամբ, միևնույն ժամանակ, նկատի ունենալով ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում նշված հանձնարարականն առ այն, որ մասնակից պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ երաշխավորելու համար կալանավորված անձանց՝ անմիջապես կալանավորման սկզբից անկախ բժշկի կողմից բժշկական հետազոտության ենթարկվելու իրավունքը, որը պետք է իրականացվի ոստիկանության աշխատակիցների լսելու և, եթե բժիշկը

ակնհայտորեն չի առարկում, տեսնելու հնարավորությունից դուրս, կոլեգիայի որոշման համաձայն՝ հաղորդումներ են ներկայացվեն ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ արդարադատության նախարարին, ինչպես նաև դատաբժշկական փորձաքննություններ կատարող հիմնարկների ղեկավարներին՝ ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և փորձագիտական հիմնարկներում բժշկական զննության հատուկ սենյակներ առանձնացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ, որոնք կահավորված կլինեն միակողմանի տեսանելիություն ապահովող ապակիներով և հնարավորություն կտան իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից լսողական վերահսկողությունը բացառող պայմաններում, զննում իրականացնող բժշկի չառարկելու դեպքում, իրականացնելու միայն զննման գործընթացի տեսողական դիտարկում՝ բժշկի անվտանգությունն ապահովելու նպատակով:

Անկախ բժշկի կողմից բժշկական հետազոտության ենթարկվելու իրավունքը երաշխավորելու համար որոշվել է ՀՀ արդարադատության, առողջապահության նախարարությունների և ՀՀ ոստիկանության ներկայացուցիչների հետ քննարկել այնպիսի ընթացակարգ ներդնելու հնարավորությունը, որի պայմաններում ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրեր, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ մարմնական վնասվածքներով անձանց ընդունելիս, հերթապահի կողմից անհապաղ շտապ բուժօգնության ահազանգ կատարվի, այդպիսի ահազանգերի դեպքերում շտապ բուժօգնության բրիգադի կազմում մեկնի մասնագիտացված բրիգադ, որի կազմում ընդգրկված մասնագիտացված բժիշկը ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնի բժշկական զննման արդյունքներն արձանագրի Ստամբուլյան արձանագրությամբ սահմանված նմուշի բժշկական զննման ձևաթղթում:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումներից է ենթադրյալ խոշտանգման հանգամանքների շուրջ դիմումատուի փաստաբանին չհարցաքննելը, որը ներկա է եղել դեպքի գիշերը դիմումատուի հարցաքննության ժամանակ, կոլեգիայի որոշմամբ հանձնարարվել է իրավակիրառ պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված՝ իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ փաստաբանին հայտնի դարձած հանգամանքների շուրջ վերջինիս որպես վկա հարցաքննելու օրենսդրական արգելքի մեկնաբանությունը չտարածել այն դեպքերի վրա, երբ փաստաբանին իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում հայտնի

են դառնում խոշտանգման կամ ցանկացած այլ հանցագործության հանգամանքների մասին տեղեկություններ:

3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտ

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններն ավանդաբար համարվում են լատենտայնության բարձր աստիճան ունեցող հանցագործություններ: Դրանց հայտնաբերումը, բացահայտումը, ինչպես նաև պաշտոնատար անձանց մեղավորության հիմնավորումը հաճախ մեծ բարդություն է ներկայացնում և պահանջում է քրեական հետապնդման մարմինների կողմից հետևողական, գրագետ պլանավորված, արդյունավետ և համագործակցված գործողությունների իրականացում:

Նշվածով պայմանավորված՝ այս հանցատեսակների թվի աճը, ի տարբերություն վերը նշված հանցանքների, դրական է գնահատվում. այդպիսի դինամիկան խոսում է ոչ թե իրականում այդ հանցանքների ծավալների ընդլայնման, այլ դրանց դեմ տարվող հատկապես քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացման մասին:

2017թ. ընթացքում միայն կաշառք ստանալու, կաշառք տալու և կաշառքի միջնորդության 163 դեպք է արձանագրվել, որը 92 դեպքով կամ 130%-ով գերազանցում է 2016թ. տվյալը (71 դեպք): Ընդ որում, վերջին 10 տարիներին, որպես կանոն, նկատվել է այս հանցագործությունների կտրուկ աճ՝ 2007թ.՝ 7, 2017թ.՝ 163:

2017թ. ընթացքում կաշառք ստանալու մեղադրանքով դատի է տրվել 43 պաշտոնատար անձ՝ 17-ով կամ 65%-ով ավելի, քան 2016 թվականին(26 անձ):

Ինչպես նշվեց, 2017 թվականին հանրապետությունում արձանագրվել է կաշառք ստանալու, կաշառք տալու և կաշառքի միջնորդության 163 դեպք, այսինքն՝ 100.000 բնակչին բաժին է ընկնում 5.6 դեպք: Պետք է փաստել, որ այս ցուցանիշով մեր երկիրը էական դրական պատկեր է ապահովել այնպիսի երկրների շարքում, ինչպիսիք են Մոլդովան, որտեղ այդ ցուցանիշը 0.3 է, Ադրբեջանը՝ 0.33, Ղրղզստանի Հանրապետությունը՝ 0.9, Լիտվայի Հանրապետությունը՝ 1.2, Վրաստանը, Իսպանիայի Թագավորությունը՝ 1.8, Բուլղարիայի Հանրապետությունը՝ 2.6:

2017թ. աճել են նաև պաշտոնեական դիրքի չարաշահման, պաշտոնեական լիազորությունները սահմանազանցելու դեպքերը: 2017թ. ընթացքում արձանագրվել է այս բնույթի 150 դեպք՝ 14-ով կամ 10%-ով ավելի քան 2016 թվականին: Համեմատության համար նշենք, որ 2007 թվականին դրանք եղել են 26-ը:

2017 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 500 նյութ, որից 403-ով հարուցվել են քրեական գործեր, 96-ով՝ քրեական գործ հարուցելը մերժվել է, որից 90-ը՝ արդարացման, 6-ը՝ ոչ արդարացման հիմքով: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին 1 որոշում դատախազի կողմից վերացվել և հարուցվել է քրեական գործ: Բացի հարուցված 403 քրեական գործից հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել 357 քրեական գործ, որից 57-ը՝ նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված, 224-ը՝ այլ մարմնից

ստացված, 2-ը՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված և 74-ը՝ քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում են գտնվել նախորդ տարվանից փոխանցված 245 քրեական գործեր:

2017թ. ընթացքում հարուցված 403 քրեական գործերից 272-ը հարուցվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումների հիման վրա, 8-ը՝ ՀԼՄ-ների հաղորդումների հիման վրա, իսկ 123-ը՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատավորի կողմից իրենց լիազորությունները իրականացնելիս հանցագործությունների մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերման հիմքով:

Հաշվետու ժամանակաշրջանում քննված ընդհանուր 1005 քրեական գործից ավարտվել է 520 գործի վարույթ, որից 309-ի վարույթը կարճվել է արդարացման, իսկ 62-ինը՝ ոչ արդարացման հիմքերով: Վարույթը ավարտված մնացած 149 քրեական գործից 148-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, իսկ 1 քրեական գործ ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

Նշված ժամանակահատվածում վարույթում գտնվող 1005 քրեական գործից 79-ի վարույթը կասեցվել է, որոնցից 51-ը՝ անձը հայտնի չլինելու, 27-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 1-ը՝ այլ հիմքով: 72 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 98 գործ՝ միացվել է, 236 գործի նախաքննություն փոխանցվել է 2018թ.:

2017թ. ընթացքում քննված կոռուպցիոն բնույթի 1005 քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 599 անձ:

Տեսանելիորեն փոխվել է քրեական հետապնդման ենթարկված սուբյեկտների կազմը, մասնավորապես՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում 2017թ. ընթացքում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 101 պաշտոնատար անձ, որոնցից.

1. Ոստիկանության աշխատակիցներ՝ 45 անձ,
   այդ թվում՝
   ա) բաժնի պետի տեղակալ – 4,
   բ) անձնագրային բաժանմունքի պետ – 1,
   գ) ՔՀ բաժանմունքի պետ – 1,
   դ) ՔՀԲ օպերլիազոր – 2,
   ե) ՀՈԲ պետ – 2,
   զ) ՀՈԲ տեսուչ (ավագ տեսուչ) – 2,
   է) ՃՈ տեսուչ (ավագ տեսուչ) – 13,
   ը) ՊՊԾ տարածքային բաժանմունքի պետ – 1,
   ը) ոստիկան – 19,

2. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության պաշտոնատար անձինք՝ 4 անձ,
այդ թվում՝
ա) բաժանմունքի պետ – 1 անձ,
բ) ԴԱՀԿ հաշվապահ – 1 անձ,
գ) հարկադիր կատարող – 2 անձ,
3. ՀՀ ՊԵԿ պաշտոնատար անձինք՝ 10 անձ,
այդ թվում՝
ա) մաքսակետի պետ – 1 անձ,
բ) մաքսային տեսուչ – 5 անձ,
գ) հարկային տեսուչ – 4 անձ,
4. Ընդհանուր իրավասության դատարանի նախագահ՝ 1,
5. Ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ 2,
6. Դատախազության դատախազ՝ 1, դատախազության նախկին դատախազ՝ 1,
7. ՀՀ ՔԿ քննիչ (ավագ քննիչ)՝ 3,
8. ԱԱԾ և Զինված ուժեր՝ 5 անձ,
այդ թվում՝
ա) ԱԱԾ սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության բաժնի պետ, հերթափոխի պետ, հսկիչ և ավագ հսկիչ – 4,
բ) Տարածքային զինկոմիսարիատի բաժնի պետ – 1,
9. ՀՀ ԱՆ ՔԿՎ աշխատակիցներ՝ 8 անձ,
այդ թվում՝
ա) ՔԿՀ պետ, պետի տեղակալ – 2,
բ) ՔԿՀ օպերատիվ խմբի պետ – 1,
գ) ՔԿՀ անվտանգության ապահովման բաժնի պետ – 1,
դ) հերթապահ – 1,
ե) մասնագետ – 3,
10. Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 անձ,
այդ թվում՝
ա) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բաժնի պետ – 1,
բ) Աբովյանի քաղաքապետարանի աշխատակազմի բաժնի պետ – 1,
11. Կրթության ոլորտի աշխատակիցներ՝ 5 անձ,
այդ թվում՝
ա) Դպրոցի տնօրեն – 1,
բ) ԲՈՒՀԻ ռեկտոր – 4,
12. Սոցիալական ապահովության ոլորտի աշխատակիցներ՝ 10 անձ,

այդ թվում՝

ա) ՀՀ սոցապ և աշխատանքի նախարարության աշխատակազմի ԲՍՓ գործակալության պետ - 1,

բ) ԲՍՓ գործակալության բաժնի պետ - 1,

գ) ԲՍՓ գործակալության տարածքային հանձնաժողովի նախագահ - 7,

դ) ԲՍՓ գործակալության հանձնաժողովի անդամ– 1,

13. Առողջապահության ոլորտի աշխատակիցներ՝ 2 անձ,

այդ թվում՝

ա) ՀՀ ԱՆ <<Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն>> ՊՈԱԿ տնօրեն– 1,

բ) ՀՀ ԱՆ <<Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն>> ՊՈԱԿ գլխավոր հաշվապահ– 1,

14. Տրանսպորտի և կապի ոլորտի աշխատակիցներ՝ 2 անձ,

այդ թվում՝

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տրանսպորտի տեսչության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ-տեսուչ - 2:

2017թ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 191 պաշտոնատար անձ, որոնցից 1-ը՝ բարձրաստիճան պաշտոնատար անձ, 8-ը՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք:

2017թ. ընթացքում իրականացվել են նաև իրավական, ինչպես նաև ինստիտուցիոնալ, կազմակերպական բնույթի լուրջ բարեփոխումներ, որոնք էապես կնպաստեն ինչպես կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կանխարգելմանը, այնպես էլ հայտնաբերմանը, քրեական հետապնդման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես՝ կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված չափանիշներին համապատասխանեցնելու, նշված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության որակը բարձրացնելու նպատակով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017թ. հունվարի 19-ի թիվ 3 հրամանով սահմանվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված արարքները կոռուպցիոն հանցագործություններ համարելու չափանիշները և հրամանի հավելվածով հաստատվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը, որում ներառվել են ՀՀ քրեական օրենսգրքի 67 հոդվածներով նախատեսված հանցագործություններ:

Ըստ այդմ՝ կոռուպցիոն է համարվել այն հանցավոր արարքը, որը կատարվել է ոչ իրավաչափ առավելություն ստանալու նպատակով՝ շահադիտական կամ անձնական այլ

շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, հատուկ սուբյեկտի՝ պաշտոնատար անձի կամ առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ իրականացնող կամ առևտրային կազմակերպություններում այլ պաշտոն զբաղեցնող անձի կողմից ծառայողական դիրքի ընձեռած հնարավորություններն օգտագործելով:

Բացի դրանից, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության որակը բարձրացնելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի 2017թ. մարտի 13-ի թիվ 26 հրամանով սահմանվել են ՀՀ դատախազության համակարգում դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրության, ինչպես նաև դրա փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ կարգադրության օրինակելի ձևերը:

Նշված հրամանով Երևան քաղաքի և մարզերի դատախազներին հանձնարարվել է աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրություններով, որպես կանոն, ապահովել դատախազությունների դատախազների մասնագիտացումը՝ ըստ առանձին հանցատեսակների, այդ թվում՝ պետական իշխանության դեմ ուղղված և կոռուպցիոն հանցագործություններով:

2017թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում պարբերաբար անցկացվել են քննարկումներ կոռուպցիոն բնույթի քրեական գործերով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների և նախաքննություն իրականացնող քննիչների մասնակցությամբ: Իրենցից որոշակի բարդություն ներկայացնող կոռուպցիոն հանցագործություններ բացահայտած քննիչներն ու օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցները ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի միջնորդությամբ պարգևատրվել են, իսկ նրանց գործունեության ընթացքում հայտնաբերված թերացումների ու բացթողումների դեպքում՝ համապատասխան գրություններով ուշադրության են հրավիրվել հետաքննության և քննչական բաժինների ղեկավարությանը, որոնք էլ յուրաքանչյուր դեպք քննարկել են օպերատիվ խորհրդակցություններում:

ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումներից պահանջվել է «Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների մասին» ներկայացնել ամսական հաշվետվություն, որն իր մեջ պարունակում է նշված բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստված նյութերի, հարուցված քրեական գործերի, գործերով անցնող մեղադրյալների, ընտրված խափանման միջոցների, պատճառված նյութական վնասի և դրա վերականգնման, ինչպես նաև քննված քրեական գործերի ընթացքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է միջոցներ ձեռնարկել համակարգային կոռուպցիայի դեպքերը, կոռուպցիոն հանցանքի կատարման մեջ ներգրավված անձանց ողջ շրջանակը բացահայտելու ուղղությամբ: Այդ նպատակին հասնելու համար կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը չպետք է սահմանափակվի միայն կոնկրետ փաստի քննությամբ, այլ պարտադիր քննության առարկա պետք է դարձնի նշված քրեական գործով անցնող պաշտոնատար անձի որոշակի ժամանակահատվածի գործունեությունը, իսկ այն դեպքերում, երբ նման քրեական գործերով անցնող անձը, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, հանդիսանում է հայտարարագիր ներկայացնող, պարտադիր քննության առարկա դարձնի նաև ապօրինի հարստացման հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդված):

2017թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ գլխավոր դատախազության և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որով նախատեսվում են միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, հակակոռուպցիոն ոլորտում իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության զարգացմանը, քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության և այդ պայքարի միջոցների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի ու իրավունքների պաշտպանության ապահովմանը և այլն:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, անանուն հաղորդումների ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակ ստեղծվելու կապակցությամբ մշակվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից իրականացվելիք գործողությունների աշխատանքային ծրագիր-քարտեզ:

4. Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ

2017թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 2747 գործ՝ 3508 անձի վերաբերյալ (2016թ.՝ 2810 գործ՝ 3583 անձի վերաբերյալ), որոնցից 2686-ը 3447 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 61-ը 61 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար:

Դատարաններում քննվել և ավարտվել է 2394 քրեական գործ՝ 2949 անձի նկատմամբ (2016թ.՝ 2339 գործ՝ 2905 անձի վերաբերյալ, 2015թ.՝ 2282 քրեական գործ՝ 2834 անձի նկատմամբ): Նշված քրեական գործերից 2047-ով դատապարտվել է 2509 անձ (2016թ.՝ 1969 գործով՝ 2464 անձ, 2015թ.՝ 1934 գործով 2400 անձ): 50 քրեական գործով 50 անձի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց (2016թ.՝ 46 քրեական գործով՝ 46 անձի նկատմամբ, 2015թ.՝ 49 քրեական գործով՝ 52 անձի նկատմամբ):

2017թ. դատարաններում քննված և ավարտված՝ 2949 անձի վերաբերյալ 2394 քրեական գործից 1001-ը (41.8%) եղել է ոչ մեծ ծանրության՝ 1139 անձի նկատմամբ (38.6%), 876-ը՝ միջին ծանրության (36.6%)՝ 1112 անձի նկատմամբ (37.7%), 470-ը՝ ծանր (19.6%)՝ 643 անձի նկատմամբ (21.8%) և 47-ը՝ առանձնապես ծանր (2.0%)՝ 55 անձի նկատմամբ (1.9%):

2016թ. ընթացքում դատարաններում քննված և ավարտված՝ 2905 անձի վերաբերյալ 2339 քրեական գործից 837-ը եղել է ոչ մեծ ծանրության (35.8%)՝ 935 անձի նկատմամբ (32.2%), 923-ը՝ միջին ծանրության (39.5%)՝ 1169 անձի նկատմամբ (40.2%), 541-ը՝ ծանր (23.1%)՝ 755 անձի նկատմամբ (26.0%) և 38-ը՝ առանձնապես ծանր (1.6%)՝ 46 անձի նկատմամբ (1.6%):

2017թ. ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 21.8%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածների թիվը նվազել է 4.9%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը՝ 14.8%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվն աճել է 19.6%-ով:

Դատապարտված անձանցից 93-ը եղել են անչափահասներ (2016թ.՝ 77 անձ, 2015թ.՝ 82 անձ), 233-ը՝ կին (2016թ.՝ 236 կին, 2015թ.՝ 227 կին), 301-ը՝ նախկինում դատված (2016թ.՝ 296 անձ, 2015թ.՝ 308 անձ), 49-ը՝ օտարերկրացի (2016թ.՝ 51 անձ, 2015թ.՝ 30 անձ): 18 գործով 24 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2016թ.՝ 22 գործ՝ 28 անչափահաս, 2015թ.՝ 13 գործ՝ 14 անչափահաս):

2016թ. դատապարտված անչափահասների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 20.8%-ով, իսկ դատապարտված կանանց թիվը նվազել է 1.3%-ով, նախկինում հանցանք կատարած անձանց թիվն աճել է 1.7%-ով:

2017թ. ՀՀ դատարանների կողմից կայացվել է լրիվ կամ մասնակի արդարացման 143 դատական ակտ 180 անձի (4.7%) վերաբերյալ, որոնցից 142-ը (78.9%) ձեռք է բերել լրիվ արդարացվածի կարգավիճակ, իսկ 38-ը (21.1%)՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ: 2016թ. կայացվել է լրիվ կամ մասնակի արդարացման 160 դատական ակտ 187 անձի (5%) վերաբերյալ, որոնցից 140-ը ձեռք է բերել լրիվ արդարացվածի կարգավիճակ, իսկ 47-ը՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ: 2015 թվականի ընթացքում ՀՀ դատարանների կողմից կայացվել է կայացվել է լրիվ կամ մասնակի արդարացման 136 դատական ակտ 157 անձի վերաբերյալ, որոնցից 110-ը ձեռք է բերել լրիվ արդարացվածի կարգավիճակ, իսկ 47-ը՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ:

Այսինքն՝ 2015 թվականի համեմատությամբ 2016 թվականին արդարացման դատավճիռների թիվն աճել է 24-ով, արդարացվածների թիվը՝ 30-ով (19.1%), իսկ 2017թ. արդարացման դատավճիռների թիվը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 17-ով, իսկ արդարացված անձանց թիվը՝ 7-ով:

2017թ. կայացված 143 լրիվ կամ մասնակի արդարացման դատական ակտերից 47 դատական ակտ՝ 63 անձի վերաբերյալ 2017 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մտել է օրինական ուժի մեջ:

2017թ. ընթացքում բեկանվել է նույն ժամանակահատվածում կայացված 8 անձի վերաբերյալ 7 գործով արդարացման դատավճիռ և նշված գործերով կայացվել են մեղադրական դատավճիռներ:

Արդարացված 180 անձից 156-ը (86.7%) արդարացվել է ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից, 23-ը (12.8%)՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից, իսկ 1-ը (0.5%)՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից:

Արդարացված անձանց մեղսագրված հանցագործությունների մեջ առավել շատ տարածված են միջին ծանրության և ծանր հանցագործություններով առաջադրված մեղադրանքների դեպքերը, մասնավորապես՝ ոչ մեծ ծանրության հանցագործության մեղադրանքով արդարացվել է 34 անձ (18.9%), միջին ծանրության հանցագործության մեղադրանքով՝ 67 անձ (37.2%), ծանր հանցագործության մեղադրանքով՝ 59 անձ (32.8%), իսկ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով՝ 7 անձ (3.9%):

Արդարացված 180 անձից 112-ի (62.2%) նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է եղել ստորագրություն չհեռանալու մասին, 5-ի (2.8%) նկատմամբ՝ հրամանատարության հսկողությանը հանձնելը, 4-ի (2.2%) նկատմամբ՝ ծնողների հսկողությանը հանձնելը, 1-ի (0.6%) նկատմամբ՝ անձնական երաշխավորությունը, 3-ի (1.7%)

նկատմամբ խափանման միջոց չի ընտրվել, 55-ի (30.5%) նկատմամբ կալանքը, որոնցից 12-ի (6.7%, 21.8%) նկատմամբ կիրառվել է գրավ:

Այսինքն՝ կալանքի տակ է գտնվել լրիվ կամ մասնակի արդարացված 43 (23.9%) անձ, որոնցից լրիվ արդարացված՝ ընդամենը 19-ը (13.4%):

2017թ. ավարտված՝ 2949 անձի վերաբերյալ 2394 քրեական գործից 8 անձի վերաբերյալ 4 գործով մեղադրողները դատարանում մասնակի հրաժարվել են մեղադրանքից, և այդ հիմքով դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ, որը կազմում է մեղադրվող անձանց 0.2%-ը: 2016 թվականի ընթացքում ավարտված 2339 գործից՝ 2905 անձի վերաբերյալ մեղադրանքից հրաժարվելու հիմքով 12 քրեական գործով արդարացվել է 12 անձ, որը կազմում է մեղադրվող անձանց 0.3%-ը: Այսինքն՝ մեղադրողների կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքերը հաշվետու տարում նվազել են 4 անձով կամ 33.3%-ով:

Մեղադրանքի պաշտպանության ոլորտում աշխատանքի արդյունավետության կարևոր չափանիշ համարելով արդարացման դատավճիռների, մեղադրանքը վերաորակող մեղադրական դատավճիռների վիճակագրությունն ու բովանդակությունը, դրանց հիմքում ընկած օրինաչափությունների բնույթը, ՀՀ գլխավոր դատախազությունում հատուկ ուսումնասիրվել են նշված դատավճիռները՝ դրանց հիմքում ընկած՝ օրենքի մեկնաբանության և կիրառության օրինաչափ խնդիրները վեր հանելու և լուծելու նպատակով: Արդարացման դատավճիռների վերաբերյալ վիճակագրական տվյալների դինամիկան արդեն իսկ վկայում է, որ մեղադրանքի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքը դրական արդյունքներ ունի: Բանն այն է, որ 2017թ. արդարացման դատավճիռների թվաքանակի, այսինքն՝ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքը դատարանների կողմից անհիմն դիտելու դեպքերի աճի կայուն միտումը խախտվել է և 2017թ. կայացվել են նախորդ տարվա համեմատությամբ ավելի քիչ արդարացման դատավճիռներ:

Նկատի ունենալով, որ արդարացման դատավճիռների թիվը միջազգային պրակտիկայում դիտվում է որպես դատական համակարգի անկախության չափանիշ, անհրաժեշտ ենք համարում առանձին անդրադառնալ արդարացման դատավճիռների նվազող վիճակագրությանը:

Ինչպես նշվել է ՀՀ դատախազության 2016թ. գործունեության մասին հաղորդման մեջ, նշված ժամանակահատվածում ուսումնասիրվել և ամփոփվել են 2015թ. կայացված արդարացման դատավճիռները, վեր են հանվել ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի մեկնաբանության և կիրառության բազմաթիվ խնդիրներ, որոնք էլ ընկած են եղել արդարացման դատական ակտերի հիմքում: Ամփոփման արդյունքների հիման վրա ՀՀ դատախազության կոլեգիայի 2016թ. դեկտեմբերի 16-ի նիստում ընդունված որոշմամբ տրվել են վեր հանված խնդիրների

լուծումներ, որոնք վերաբերել են վիճելի իրավամեկնաբանություններին, իրավական թերկարգավորումների կամ այլ գործնական խնդիրների պատճառով առկա խնդրահարույց իրավիճակներում օրենքի այս կամ այն կերպ կիրառությանը, ուղղված են եղել օրինաչափություն դարձած խախտումների բացառմանն ու չեզոքացմանը: Դատախազության կոլեգիայի նշված որոշումը, աշխատանքային ուղեցույց ծառայելով դատախազական աշխատանքում, կիրառության մեկ տարվա ընթացքում հաջողությամբ էականորեն լուծել է իր առջև դրված խնդիրը: Դրա վկայությունը ոչ միայն արդարացման դատավճիռների քանակի նվազումն է, այլև 2017թ. կայացված արդարացման դատավճիռների հիմքերի որակական առանձնահատկությունները:

Այսպես, 2017թ. կայացված արդարացման դատավճիռների ուսումնասիրությամբ կարելի է վստահաբար փաստել, որ 2015թ. համեմատությամբ՝ 2017թ. կայացված արդարացման դատավճիռների հիմքում քրեական օրենսգրքի կամ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի խախտումների տեսակարար կշիռն էականորեն նվազել է: 2017թ. կայացված արդարացման դատավճիռների մեծամասնությունը պայմանավորված է մեղադրանքը հիմնավորելու համար քրեական գործով ձեռք բերված ապացույցների բավարարության կապակցությամբ քրեական հետապնդման մարմնի և դատարանի հետևությունների տարբերությամբ: Ավելի պարզ, նշված դեպքերում, երբ քրեական հետապնդման մարմնի կողմից մեղադրանքը հիմնավորելու համար բավարար դիտված ապացույցներն, դրանց գնահատմամբ դատարանի կողմից նույն գնահատականին չեն արժանանում: Հաշվի առնելով այն անհերքելի իրողությունը, որ ապացույցների բավարարության սահմանային իրավիճակներում ընդունելին մեղադրանքի հիմնավորվածության հենց դատական գնահատումն է, որն ապահովում է քրեական վարույթում մասնավոր շահեր հետապնդող սուբյեկտների, այդ թվում՝ տուժողի համար արդարադատության մատչելիությունը, ապա այս իրավիճակն ինքնին խնդրահարույց չէ: Հարկ է շեշտել, որ արդարացման որևէ դատավճռի վերլուծություն հիմք չի տալիս խոսելու որևէ գործով մեղադրանքի հիմքում դրված ապացույցների ակնհայտ անբավարարության մասին: Իսկ ապացույցների բավարարության սահմանային իրավիճակները ենթակա են հենց դատական գնահատման և այդ դեպքերում է, որ մեղադրյալն ու տուժողը պետք է ունենան արդարադատության մատչելիություն, վերջիններիս շահերը շոշափող մեղադրանքի հիմնավորվածության հարցը պետք է քննարկվի արդարադատության գործառույթի շրջանակներում:

Այսպիսով, 2017թ. արձանագրված դրական վիճակագրական տվյալները 2016թ. վերջին կատարված համակողմանի վերլուծության հիման վրա տրված հանձնարարականների ընդամենը մեկ տարվա գործողության արդյունք են: Ընդ որում՝ այդ հանձնարարականները վերաբերել են ոչ միայն իրավամեկնաբանության կամ կիրառության կոնկրետ իրավիճակի լուծմանը, այլև ունեն պրակտիկայի հստակության և

միասնականության ապահովման ուղղվածություն: Օրինակ՝ 2017թ. կայացված արդարացման դատական ակտերը, որոնցում իրավունքի նորմերին տրված մեկնաբանություններն ընդունվել են, և դատական ակտերը չեն բողոքարկվել, ուղարկվել են դատախազության բոլոր ստորաբաժանումներին, քննարկվել են օպերատիվ խորհրդակցություններում՝ խնդրի մասին անհապաղ իրազեկելու և հետագայում բացառելու համար:

Բացի դրանից, նշված բոլոր դեպքերում դատախազի դատավարական գործողությունները պարտադիր դարձել են քննարկման առարկա և ընդհանուր առմամբ մեղադրանքի պաշտպանության ոլորտում թույլ տրված խախտումների կապակցությամբ իրականացվել է 14 ծառայողական ուսումնասիրություն, որոնցից 2-ով խախտումներ թույլ տված դատախազները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով 2 դատախազի նկատմամբ նշանակվել է արտահերթ ատեստավորում, իսկ թույլ տրված 10 խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ հրավիրված օպերատիվ խորհրդակցություններում:

Նկատի ունենալով դատական քննության փուլի, հետևաբար նաև դրա շրջանակներում մեղադրանքի պաշտպանության գործառույթի անկյունաքարերից մեկը հանդիսացող հակընդդեմ հարցման կոնվենցիոնար իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունը, 2017թ. ուսումնասիրվել է այդ իրավունքը սահմանող իրավակարգավորումների կիրառման պրակտիկան և արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայի օգոստոսի 4-ի նիստում: Քննարկումը հիմնվել է հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման չափանիշների վերաբերյալ ՄԻԵԴ-ի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումների և դրանց համատեքստում ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների վերլուծության վրա, որի շրջանակներում հատուկ ուշադրության են արժանացել Հայաստանի դեմ գործերով ՄԻԵԴ-ի արձանագրած, ինչպես նաև քննության դատավարական ղեկավարման և մեղադրանքի պաշտպանության գործառույթների իրականացման շրջանակներում ի հայտ եկած խնդիրները՝ դրանց լուծումներ տալու նպատակով:

Դատախազության կոլեգիայի որոշմամբ սահմանվել են դեռևս մինչդատական վարույթում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքն ապահովելուն ուղղված դատավարական քայլեր, որոնցում հստակ արտահայտվում է այդ հարցում ներպետական իրավունքի զարգացումն ու եվրոպական չափանիշներին դրա համապատասխանեցումը: Օրինակ՝ սահմանվել է հակընդդեմ հարցումն ապահովելու նպատակով առերեսում կատարելու պահանջ՝ անկախ մեղադրյալի և այլ անձանց ցուցմունքներում էական հակասությունների առկայությունից, տրվել են հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման չափանիշների մեկնաբանություններ, սահմանվել են նաև անձին դատի տալու

հարցը լուծելիս հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման համատեքստում ապացույցների թույլատրելիության և գործի լուծման համար դրանց բավարարության գնահատման պարզ, գործնականում կիրառելի չափանիշներ, ինչպես նաև դատական քննության փուլում հակընդդեմ հարցման իրավունքը երաշխավորելու, այդ համատեքստում մեղադրական դիրքորոշման հիմնավորվածությունն ապահովելու համար մեղադրողի դատավարական վարքագծի կանոններ, որոնք իրենց համակցության մեջ ապահովում են մի կողմից՝ քննության դատավարական շահի, մյուս կողմից՝ մեղադրյալի պաշտպանության իրավունքի գործնական իրացումը:

2017թ. 202 քրեական գործ՝ 247 անձի վերաբերյալ կարճվել է (2016թ.՝ 218 քրեական գործ՝ 257 անձի նկատմամբ), որոնցից 151-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 2-ը՝ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված 1-ին մասի 13-րդ կետով, 26-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով, 51-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 17-ը՝ այլ հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում ամբաստանյալի կողմից դատական քննությունից խուսափելու հիմքով 14 գործով 14 անձի նկատմամբ քրեական գործի վարույթը կասեցվելու մասին որոշումներ են կայացվել (2016թ. 0 գործ, 0 անձ):

2017թ. դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 7.361.824.077 ՀՀ դրամ, որից 430.717.815 ՀՀ դրամը՝ պետությանը պատճառված, 6.931.106.262 ՀՀ դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված վնաս (2016թ.՝ 2.979.386.421 ՀՀ դրամ):

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 337.692.962 ՀՀ դրամ (2016թ.՝ 1.540.888.469 ՀՀ դրամ), որից 77.098.393 ՀՀ դրամը՝ պետությանը, 260.594.569 ՀՀ դրամը՝ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց պատճառված վնասներից:

Հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման և քաղաքացիական հայցի լուծման ոլորտում դատախազական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի 2017թ. հունիսի 19-ի թիվ 47 հրամանով սահմանվել են հանցագործությամբ պատճառված վնասի տեսակն ու չափը պարզելու և բավարար ապացույցներով հաստատելու, քաղաքացիական հայցը ապահովելու և պատճառված վնասի հատուցումը հնարավորինս երաշխավորելու ուղղությամբ կոնկրետ դատավարական լիազորությունների իրականացման իրավիճակային հանձնարարականներ:

2017թ. դատարաններում քննված քրեական գործերից 1063 գործով 1219 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ, որը կազմում է քննված գործերի 44.4%-ը (2016թ. ընթացքում՝ 949 գործով, որը կազմում է քննված գործերի 40.6%-ը):

2017թ. դատական քննության ընթացքում 19 գործով 26 անձի նկատմամբ մեղադրողները որոշում են կայացրել առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին (2016թ.՝ 10 գործ, 16 անձ), որոնցից 15 գործով 22 անձի (2016թ.՝ 8 գործ, 8 անձ) նկատմամբ մեղադրողները որոշում են կայացրել մեղմացման առումով առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, իսկ խստացման առումով՝ 4 գործով 4 անձի նկատմամբ (2016թ.՝ 2 գործ 8 անձ):

2017թ. դատապարտված 2509 անձից 974-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 38.8%-ը: 2016թ.՝ 2464 անձից ազատազրկման է դատապարտվել 951-ը կամ 38.6%-ը: Ինչպես 2016 թվականին, այնպես էլ 2017 թվականին ցմահ ազատազրկման որևէ անձ չի դատապարտվել:

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի է դատապարտվել 65 անձ (2016թ.՝ 59 անձ): Այսինքն՝ կալանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտված անձանց մեջ կազմում է 2.6%:

Տուգանքի է դատապարտվել 802 անձ (2016թ.՝ 841 անձ): Այսինքն՝ տուգանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտված անձանց մեջ կազմում է 32.0%:

663 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 26.4%-ը, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2016թ.՝ 613 անձի կամ 24.8%-ի նկատմամբ): ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտված 663 անձից 334-ի (50.3%) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել մեղադրողների միջնորդության հիման վրա (2016թ.՝ 613 անձից 342-ի նկատմամբ (55.7%): Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 219-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 254-ը՝ միջին ծանրության, 190-ը՝ ծանր հանցագործության կատարման մեջ:

2017թ. դատապարտված 13 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (2016թ.՝ 9 անձի, 2015թ.՝ 4 անձի նկատմամբ) և նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, որոնցից 6 անձի նկատմամբ՝ դատարանների նախաձեռնությամբ, 7 անձի նկատմամբ՝ մեղադրողի միջնորդությամբ:

2017թ. դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների է դատապարտվել նախնական կալանքի տակ գտնվող 43 անձ (2016թ.՝ 56), որոնք ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճից: Դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 426 անձ դատապարտվել է ազատազրկման (2016թ.՝ 349):

Պատժողական քաղաքականությունն արտահայտող վիճակագրական տվյալների վերլուծությունը ոչ միայն հաստատում է դրա մեղմացման ընդհանուր և կայուն միտումը, այլև հատկապես վկայում է, որ ազատության սահմանափակումն ու ազատազրկումը քրեադատավարական գործընթացում նվազում են: Առնվազն անհրաժեշտ է փաստել, որ

կայուն նվազում են դրսևորում, ի վերջո, ազատազրկման չդատապարտված անձանց նախնական կալանքի տակ գտնվելու դեպքերը, և աճում այն դեպքերը, երբ ազատազրկման դատապարտված անձը նախնական կալանքի տակ չի գտնվել:

Պատժողական քաղաքականության ոլորտում ամենակարևորն ու, միաժամանակ, ամենաբարդը կոնկրետ հանցագործությունների դեպքում դրա դրսևորումների միասնականացման խնդիրն է: Այն օբյեկտիվորեն գոյություն ունեցող խնդիր է և պայմանավորված է պատիժ նշանակելու հարցերի իրավակարգավորման առանձահատկություններով, կատարված արարքի և այն կատարող անձանց բնութագրող՝ չկրկնվող անհատական առանձնահատկությունների գնահատման սուբյեկտիվ բաղադրիչով: Այդուհանդերձ, 2017թ. մեղադրանքի պաշտպանության ոլորտում վերահսկողության աշխատանքի ընթացքում պատժողական քաղաքականության վրա ազդեցության դատախազական լիազորությունների սահմաններում հաջողվել է ապահովել հատկապես տարածված հանցագործությունների վերաբերյալ գործերով պատժողական քաղաքականության միասնականությունը: Բացի դրանից, մինչ օրս ուսումնասիրության և քննարկման առարկա դարձած հանցագործությունների վերաբերյալ այն քրեական գործերով, որոնցով սահմանվել են պատժողական քաղաքականության որոշակի ուղղություններ, յուրաքանչյուր դեպքում պատիժ միջնորդելիս դրա տեսակը, չափը, այն կրելու նպատակահարմարությունը գնահատելու չափանիշներ, արձանագրվել է պրակտիկայի միասնականացման միտում: Դատախազության աշխատանքի ծրագրի շրջանակներում առանձին հանցագործությունների վերաբերյալ գործերով մեղադրանքի պաշտպանության վիճակի ուսումնասիրության արդյունքներով սահմանվել են, օրինակ, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, ՃԵԿ-ի կանոնները խախտելու, սուտ մատնության, բնակարան ապօրինի մուտք գործելով գողությունների համար պատժողական քաղաքականության ընդհանուր մոտեցումները, յուրաքանչյուր գործով մեղադրական ճառում պատիժ միջնորդելիս արժևորման ենթակա հանգամանքները:

Պատժողական քաղաքականության ոլորտում խնդիրները շարունակական են և որոշակի տևական ժամանակահատվածում դրանց դրսևորումների հաշվառմամբ շարունակվելու են գնահատվել կոնկրետ տարածքում այդ քաղաքականության հիմնավորվածությունը՝ անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնելու և, ի վերջո, մի կողմից՝ համապատասխան տեղային առանձնահատկություններին, մյուս կողմից ընդհանուր պատժողական քաղաքականությանը դրանց համապատասխանությունն ապահովելու համար:

Միասնական պատժողական քաղաքականության ձևավորման վրա դատախազի դատավարական դիրքորոշման ազդեցության սահմաններում միջոցներ են ձեռնարկվում նաև այդ կապակցությամբ միջազգային-իրավական պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար: Այս տեսանկյունից հատկապես կարևորվել

և կարևորվում է կյանքի դեմ ուղղված, ինչպես նաև կյանքը վտանգի տակ դնող հանցագործությունների համար պատժի համաչափության ապահովումը:

Աշխատանքում կարևորվել է դատական քննության արդյունքում ամբաստանյալների նկատմամբ նշանակվող ոչ միայն պատժի, այլև օրենքով նախատեսված ներգործության այլ միջոցների արդյունավետ կիրառությունը, որի ապահովման համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով սահմանվել է ամբաստանյալների նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում նրանց վրա օրենքով սահմանված և նրանց ուղղմանը նպաստող պարտականություններ դնելու հարցը քննարկելու պարտականություն:

Բացի դրանից, քրեադատավարական գործունեության գլխավոր խնդիրներից մեկը համարելով հանցագործության կատարման պատճառներն ու դրան նպաստող պայմանները վեր հանելն ու դրանց չեզոքացումը, առանձին հանցատեսակների վերաբերյալ գործերով մեղադրանքի պաշտպանության վիճակի ուսումնասիրությունների արդյունքներով սահմանվել է հատկապես մասնագիտական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ կապված հանցագործությունների վերաբերյալ գործերով իրավասու պաշտոնատար անձանց առջև խախտում թույլ տված անձանց (բժիշկ և այլն) մասնագիտական վերապատրաստման կամ առհասարակ պաշտոնավարման նպատակահարմարության հարցը բարձրացնելու պարտականություն:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի անթույլատրելիության պահանջով բերվել է 33 վճռաբեկ բողոք, որոնցից 22-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին, 9-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 2-ով որոշում է կայացվել բողոքը վարույթ ընդունելու մասին, որոնցից 1-ը բավարարվել է, 1-ն ընթացքի մեջ է:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի անթույլատրելիության պահանջով բերվել է 2 վճռաբեկ բողոք, որոնք ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վարույթ չեն ընդունվել:

2017 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 369 վերաքննիչ բողոք, որոնցից 3-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, իսկ 2 բողոք հետ է վերցվել վերադաս դատախազի կողմից: Բերված բողոքներից 79-ը կամ 21.4%-ը եղել են արդարացման, 11-ը կամ 2.9%-ը՝ կարճման, 209-ը կամ 56.6%-ը՝ պատժի մեղմության, 2-ը կամ 0.5%-ը՝ պատժի խստության, 31-ը կամ 8.4%-ը՝ արարքի վերաորակման դեմ, իսկ 32-ը կամ 8.6%-ը՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 81-ը կամ 22.2%-ը բավարարվել է, 195-ը կամ 53.5%-ը՝ մերժվել է, 88-ով կամ 24.1%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2017թ. արդարացման դատական ակտերի դեմ մեղադրողների կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան է ներկայացվել 79 վերաքննիչ բողոք, որոնցից 35-ը մերժվել է, 6-ը՝ բավարարվել, իսկ 38-ը ընթացքի մեջ է:

Դատարանների նախաձեռնությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման դեմ մեղադրողների կողմից 120 ամբաստանյալի նկատմամբ բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնցից 70-ը մերժվել է, 25-ը բավարարվել է, 25 բողոքի քննությունն ընթացքի մեջ է: 3 գործով 3 անձի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ դատավճիռների դեմ մեղադրողների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնք մերժվել են:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերված և նախորդ տարվանից փոխանցված վերաքննիչ բողոքները 636-ն են, որոնցից 4-ը հետ է վերցվել, 3-ը վարույթ չի ընդունվել, 4-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 1-ը կամ 0.1%-ը եղել է արդարացման, 6-ը կամ 0.9%-ը՝ կարճման դեմ, 20-ը կամ 3.1%-ը՝ պատժի մեղմության դեմ, 503-ը կամ շուրջ 79.1%-ը պատժի խստության դեմ, 11-ը կամ 1.7%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 77-ը կամ 12.1%-ը՝ այլ հիմքով, 7-ը կամ 1.1%-ը՝ քաղաքացիական հայցի մասով:

Հիշյալ բողոքներից բավարարվել է 73-ը կամ 11.5%-ը, 36-ը կամ 5.7%-ը բավարարվել է մասնակի, 377-ը կամ 59.3%-ը մերժվել է, 9-ով կամ 1.4%-ով կայացվել է այլ որոշում, 130-ով կամ շուրջ 20.4%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2017 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների կողմից դատական ակտերի դեմ բերված 101 վճռաբեկ բողոքից և նախորդ տարվանից փոխանցված 22 բողոքից 20-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 88-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ներկայացված բողոքներից 15-ն ընդունվել է վարույթ, որոնցից 9-ը բավարարվել է, 5-ի քննությունն ընթացքի մեջ է, 1-ը մերժվել է:

2017 թվականի ընթացքում բերված 101 բողոքից 29-ը կամ 28.7%-ը եղել է արդարացման, 46-ը կամ 45.5%-ը՝ պատժի մեղմության դեմ, 13-ը կամ 12.8%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 13-ը կամ 12.8%-ը՝ այլ հիմքով:

Արդարացման դատական ակտերի դեմ բերված 29 վճռաբեկ բողոքից 17-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին, 6-ով լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 2-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին, որոնցից մեկը բավարարվել է, մյուսը ընթացքի մեջ է:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ բերված բողոքներն ուղղված են եղել տարբեր իրավակիրառական դիրքորոշումների միասնականացմանը և ուղղակիորեն արտահայտում են այդ ուղղությամբ կատարված աշխատանքը: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների կողմից բերված վճռաբեկ բողոքներն ուղղված են եղել ոչ միայն տվյալ կոնկրետ գործով

առկա խնդրի լուծմանը, այլև դրանցով բարձրացվել են իրավունքի զարգացման՝ քրեական և քրեադատավարական օրենսդրության կիրառման ոլորտում տարիներ ի վեր առկա խնդիրների չեզոքացման ու միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու խնդիրներ: Դրանք վերաբերել են ինչպես առանձին հանցակազմերը սահմանող քրեաիրավական նորմերի մեկնաբանություններին, այնպես էլ կոնկրետ հանցագործությունների համար կոնկրետ դեպքերում նշանակվող պատժի արդարացիությանը, մասնավորապես՝ ՀՀ-ում քրեական գործ քննելիս այլ պետության դատարանի կողմից կայացված դատավճռի նշանակությանը, հանրորեն վտանգավոր արարքի անզգույշ, այսինքն՝ անձի դիտավորությունից դուրս հետևանքների նվազ վտանգավորության գնահատմանն ու դրա չափանիշներին, ֆիզիկական ցավ պատճառված լինելը որպես ծեծի օբյեկտիվ կողմի հատկանիշ դիտելուն՝ փաստարկելով, որ այն ապացուցել և հաստատել հնարավոր չէ դրա բացարձակ սուբյեկտիվ բնույթի պատճառով, կաշառք ստանալու օբյեկտիվ կողմի այն դրսևորմանը, երբ պաշտոնատար անձը կաշառք տվողի օգտին իր իրավասության սահմաններում գործողություն է անում՝ կաշառքի գումարն ստանալով այդ գործողության հետ կապված ձևական գործարքի միջոցով (դասախոսը գումարի դիմաց անձամբ գրում է ավարտական աշխատանքը և դրական գնահատում այն), շորթման և ինքնիրավչության, խարդախության և կեղծ վճարային փաստաթղթեր իրացնելու հանցակազմերի սահմանազատման հարցերին, մեղադրական եզրակացությունը հաստատելիս մեղադրանքը մեղմացման առումով վերաորակելու, դատարանում մեղադրողի կողմից մեղադրանքը փոփոխելու և լրացնելու լիազորության սահմաններին և, ի վերջո, վերաքննիչ ու վճռաբեկ բողոքարկման ժամկետների և բաց թողնված ժամկետների վերականգնման մեխանիզմների վերաբերյալ հարցին և այլն:

Ներկայացված բողոքներում հետևողականորեն առաջ են քաշվել նշված հարցերում ՀՀ դատախազության՝ որպես հանցավորության դեմ պայքարի քաղաքականության և կոնկրետ գործերով վարույթներում հիմնարար դատավարական գործառույթ իրականացնող սուբյեկտի, դիրքորոշումները: Բերված բողոքների մի մասի քննարկման արդյունքում դատական իրավունքը միասնականացրել է առանձին հարցերում իրավակիրառ պրակտիկան, թեև մի շարք հարցերում դիրքորոշումների տարբերությունները պահպանվել են և իրավակիրառ մոտեցումների հստակեցման ու միասնականացման խնդիրները դեռևս լուծված չեն:

ՀՀ դատախազությունը, որպես քրեական հետապնդման ոլորտում ղեկավար դատավարական լիազորություններ իրականացնող և մրցակցային քրեական դատավարությունում մեղադրանքի հիմնարար գործառույթի իրականացումն ապահովող միասնական համակարգ, օրենքի տարբերակված կիրառություններն իսպառ բացառելու, քրեադատավարական գործունեությունը կարգավորող իրավունքի ճյուղերի՝ երբեմն տասնամյակներ գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծման մեջ բարձր

շահագրգռվածությամբ դրանք համարելով քրեադատավարական գործունեության արդյունավետության ապահովման գրավականը, կարևորում է առկա խնդիրների սկզբունքային, կոնկրետ հայեցակարգի վրա հիմնված լուծումները և իր լիազորությունների սահմաններում նպաստել և նպաստելու է իրավունքի զարգացմանը:

Այդպիսի հատուկ ուղղվածություն ունի ոչ միայն վճռաբեկ բողոք բերելու՝ ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների դատավարական լիազորությունը, այլև դատախազության աշխատանքն ընդհանրապես: Դրան են ուղղված եղել ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված՝ ՀՀ գլխավոր դատախազի երկու դիմումները, որոնք սահմանադրական արդարադատության գործիքակազմի միջոցով ապահովել են գործնական կարևոր խնդիրների լուծումները:

Այսպես, ՀՀ գլխավոր դատախազը, նկատի ունենալով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը, դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների բարձր նշանակությունը իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ իրավակարգավորումների միասնականության ապահովման համար, ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով վիճարկել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.1-րդ մասի 2.2-րդ կետի 2-րդ ենթակետի, 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 69-րդ հոդվածներին, ինչպես նաև 93-րդ և 103-րդ (2005 թվականի խմբագրությամբ) հոդվածներին համապատասխանությունն այնքանով, որքանով դրանք հնարավորություն չեն տալիս նոր հանգամանքի հիմքով վերանայել դատական ակտերն, ինչպես նաև նույն հիմքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով (բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունել այն դեպքում, երբ այդ գործով կիրառված նորմը Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասից բացի այլ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը, Սահմանադրական դատարանը գտել է, որ տվյալ նորմը կիրառվել է այլ մեկնաբանությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով դրանցով նախատեսված դատավարական հետևանքները կապում են ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման բացառապես եզրափակիչ մասում արտահայտված՝ կոնկրետ նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումների հետ:

ՀՀ Սահմանադրական դատարանը, ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա քննության առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետի և 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի

1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, 2017թ. մարտի 28-ի ՍԴՈ-1359 որոշմամբ՝

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետում և 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «եզրափակիչ մասում» բառակապակցությունները ճանաչել է ՀՀ Սահմանադրության (2015թ փոփոխություններով) 1-ին, 3, 4, 61, 63, 75, 79 և 80-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 93-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր, քանի որ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված բովանդակության շրջանակներում նման ձևակերպման առկայությունը, նոր հանգամանքի հետ չկապված վճռաբեկ բողոք բերելիս, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձին հնարավորություն չի տալիս իր դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչել Սահմանադրական դատարանի որոշման այլ մասերում (բացի եզրափակիչ մասից) արտահայտված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները, ինչը հաշվի պետք է առնվի բողոքը քննելիս:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ» դրույթում «եզրափակիչ մասում» բառակապակցությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 93-րդ և 103-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով դրա առկայության պայմաններում ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքի շրջանակներում Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում ամրագրված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները դատական պրակտիկայում հիմք չեն ընդունվում բողոքի ընդունելության և քննության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների իրավաբանական բնույթի վերաբերյալ մոտեցումները, արձանագրել է, որ այդ դիրքորոշումների իրավական հետևանքը պայմանավորված չէ դրանց՝ Սահմանադրական դատարանի որոշման այս կամ այն մասում ամրագրված լինելու փաստով:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը դիմում է ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի նորմերի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 103-րդ հոդվածին համապատասխանությունը որոշելու վերաբերյալ: Դիմումով փաստարկվել է, որ վիճարկվող նորմերը դատարաններին

հնարավորություն են տալիս քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մեղադրական եզրակացության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված այնպիսի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, որոնք ենթադրում են քրեական գործով ձեռք բերված ապացույցների մեղադրող կամ արդարացնող բնույթի, վերաբերելիության և ընդհանրապես ապացուցողական արժեքի գնահատում քրեական գործը դատական քննության նախապատրաստելու փուլում, այսինքն՝ նախքան դրանց հետազոտումը: Նշվել է նաև, որ վիճարկվող նորմերը, դատախազի համար սահմանելով մեղադրական եզրակացության թերությունները շտկելու դատավարական պարտականություն, չեն սահմանում դրա կատարման դատավարական կարգն այն դեպքում, երբ դատախազը մեղադրական եզրակացություն կազմելու, ուստի և վերակազմելու լիազորություն չունի, ինչը հանգեցնում է դատարանի որոշմամբ սահմանված պահանջի կատարման անհնարինության: Բացի դրանից, վիճարկվող դրույթները հնարավորություն չեն տալիս բողոքարկելու քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին դատարանի անհիմն և անօրինական, ուստի և կատարման ոչ ենթակա կամ կատարումն անհնարին, բայց վերացված չլինելու պատճառով դատական քննությունը բացառող որոշումը, ինչը հանգեցնում է դատական քննության նախապատրաստելու փուլում քրեական գործով վարույթի արգելափակման:

Վերոգրյալի հիման վրա փաստարկվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի նորմերը չեն համապատասխանում արդար դատաքննության հիմնարար իրավունքի՝ դատարանի անկողմնակալության, մատչելիության և ողջամիտ ժամկետի բաղադրիչներին, չեն ապահովում դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը և խոչընդոտում են ՀՀ դատախազության՝ մեղադրանքի պաշտպանության սահմանադրական լիազորության իրականացմանը: ՀՀ Սահմանադրական դատարանը 2017թ. դեկտեմբերի 5-ի նիստում քննել է ՀՀ գլխավոր դատախազի դիմումը, որով վիճարկվել էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունն այնքանով, որքանով այն թույլ է տալիս դատարանին քրեական գործը մեղադրողին վերադարձնել մեղադրական եզրակացության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին այնպիսի անհամապատասխանությունների հիմքով, որոնք ենթադրում են գործով ձեռք բերված ապացույցների գնահատում՝ նախքան պատշաճ իրավական ընթացակարգի պայմաններում դրանց հետազոտումը, ինչպես նաև ամրագրելով մեղադրական եզրակացության թերությունները շտկելու դատախազի պարտականությունը, չի սահմանում դրա կատարման դատավարական կարգը և չի նախատեսում գործը մեղադրողին վերադարձնելու մասին դատարանի անհիմն և կատարման ոչ ենթակա որոշումը վիճարկելու հնարավորություն՝ այդ կերպ հանգեցնելով մեղադրողին վերադարձված քրեական գործի ընթացքի արգելափակման:

ՀՀ Սահմանադրական դատարանը, համաձայնելով ՀՀ գլխավոր դատախազի դիմումի փաստարկներին, ՍԴՈ-1393 որոշմամբ սահմանել է, որ քրեական գործը մեղադրողին վերադարձնելու հիմքը սահմանող՝ «մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին» արտահայտությունը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որը թույլ կտա դատարանին գնահատել ապացույցները կամ դրսևորել այլ վարքագիծ, որն այդ փուլում իրավասու չէ: Սահմանադրական դատարանը, ըստ էության, համաձայնելով, որ քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին անհիմն որոշումը, որը կատարման ենթակա չէ կամ որը կատարել հնարավոր չէ, խոչընդոտում է գործի ընթացքին և սահմանափակում վարույթի մասնակիցների դատավարական իրավունքները, լուծել է այդ որոշման բողոքարկման անհնարինությունից ծագող խնդիրը՝ սահմանելով. «հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում առկա իրավիճակը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանի կողմից գործը մեղադրողին մեկից ավելի անգամ վերադարձնելը վտանգում է ոչ միայն ողջամիտ ժամկետներում գործի քննության սկզբունքի իրացումը, այլև կարող է պարունակել գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու տարրեր /հակասելով ՀՀ Սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՍԴՈ-710 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին/, վտանգել դատարանի անաչառությունը, անհամատեղելի լինել իրավունքի գերակայության սկզբունքին»: ՀՀ Սահմանադրական դատարանը հիմնավոր է համարել նաև մեղադրական եզրակացության թերությունները շտկելու դատավարական մեխանիզմի բացակայության վերաբերյալ դիմումի փաստարկը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի նորմերի սահմանադրաիրավական մեկնաբանությամբ սահմանել նաև դրա հստակ կառուցակարգը:

2017թ. ուսումնասիրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված՝ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների վերաբերյալ գործերով մեղադրանքի պաշտպանության վիճակի ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ դատախազության կոլեգիայի 2017թ. հոկտեմբերի 27-ի նիստում և կայացված որոշումներով տրվել են քրեական իրավունքում տասնամյակներ ի վեր վիճելի՝ «բնակարան», «պահեստարան», «շինություն» հասկացությունների բնորոշումներն ու դրանց սահմանազատման չափանիշները, «ապօրինի մուտք գործել» հասկացության մեկնաբանությունները, սահմանվել են բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների քննությամբ պարտադիր պարզաբանման ենթակա հանգամանքները և այդ հանգամանքների գնահատմամբ հանցագործությունը որակելու հստակ կանոնները, հստակ սահմանվել են բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության համար նշանակվող պատժի և այն կրելու նպատակահարմարության կապակցությամբ միջնորդություն ներկայացնելիս գնահատման ենթակա հանգամանքները, կոնկրետ հերթականությամբ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունների

վերաբերյալ վիճակագրական, այդ թվում՝ կրկնահանցավորության վերաբերյալ տվյալների ամփոփմամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությանը ներկայացվել է այդ հանցագործության համար դատապարտված անձանց ուղղման միջոցների կատարելագործմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն:

5. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից ընդհանուր առմամբ իրականացվել է 1246 ստուգում և ուսումնասիրություն (2016թ.՝ 1547), որոնց արդյունքում հայտնաբերվել է 497 խախտում (2016թ.՝ 192), պատկան մարմիններին ուղարկվել է 19 հաղորդում (2016թ.՝ 39), ներկայացվել է ծառայողական քննություն անցկացնելու 54 միջնորդագիր (2016թ.՝ 61), որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 13 ակտ (2016թ՝ 22), որի արդյունքում վերականգնվել են կալանավորված անձանց և դատապարտյալների խախտված իրավունքները, իրականացվել է 24 ծառայողական քննություն, հարուցվել է 15 քրեական գործ (2016թ.՝ 28):

Վերը նշված 1246 ստուգումներից և ուսումնասիրություններից 904-ը կատարվել են ձերբակալվածներին պահելու վայրերում, 181-ը՝ քրեակատարողական հիմնարկներում, 132-ը՝ ՀՀ պրոբացիայի պետական ծառայությունում, 15-ը՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում, 12-ը՝ ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատություններում, 1-ը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովում:

Քրեակատարողական հիմնարկներում իրականացված ստուգումների արդյունքներով պարբերաբար հայտնաբերվել են պատժի կրման կարգի բազմաթիվ խախտումներ, այդ թվում՝ տեսակցություններ տրամադրելու սահմանված կարգը խախտելու, խցերում արգելված իրեր պահելու, խցերից անարգել մուտք ու ելք կատարելու դեպքեր, որոնցով ծառայողական քննություններ անցկացնելու միջնորդագրեր են ներկայացվել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին: 2017թ. ընթացքում ներկայացված նման բնույթի միջնորդագրերով կարգապահական պատասխանատվության է ենթարկվել ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկների 10 աշխատակից: Այդ միջնորդագրերում բազմիցս բարձրացվել է նաև կոնկրետ քրեակատարողական հիմնարկներում արգելված իրերի ներթափանցման ուղիները, առանձին դատապարտյալներին առերևույթ արտոնություններ տրամադրելու պատճառները, հանգամանքները պարզելու, այդպիսիք վերացնելու անհրաժեշտության հարցը, սակայն, փաստացի, իրականացված ծառայողական քննություններով, նաև օպերատիվ միջոցառումներ իրականացնելու հնարավորության պայմաններում, այդպիսիք, ըստ էության, լիարժեք չեն բացահայտվել, պատշաճ կանխարգելում չի իրականացվել:

Ըստ էության, երբեմն ակնհայտորեն ձևական բնույթ են կրել, նպատակին չեն ծառայել նաև համապատասխան աշխատակիցների նկատմամբ կիրառված կարգապահական

ներգործության միջոցները, ինչի վկայությունն են արդեն քրեական գործերով բացահայտված փաստերը:

Ընդ որում, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների, նախնական կալանքի տակ գտնվող անձանց, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների պաշտոնատար անձանց կողմից հանցագործություններ կատարելու դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննությամբ պարզված հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու, նմանատիպ դեպքերը հետագայում բացառելու նպատակով համապատասխան գործնական միջոցներ ձեռնարկելու համար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով ևս ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության, քրեակատարողական հիմնարկների պետերին ներկայացվել են բազմաթիվ միջնորդագրեր:

Այդ միջնորդագրերը ևս թեև քննարկվել են, սակայն, փաստացի, խախտումները վերացնելու ուղղությամբ բավարար միջոցներ չեն ձեռնարկվել, ճիշտ հետևություններ չեն արվել, ինչը հանգեցրել է նույնատիպ խախտումների կրկնմանը, նոր հանցագործությունների կատարմանը: Ավելին, քրեական գործերով պարզվել է, որ ծառայողական քննության, կարգապահական պատասխանատվության ենթարկված աշխատակիցները անարգել շարունակել են իրենց սխեմավորված, «հստակ կանոնակարգված» հանցավոր վարքագիծը՝ որպիսի փաստերը ոչ մի դեպքում չեն բացահայտվել իրականացված ծառայողական քննություններով, ամենօրյա վերահսկողական մեխանիզմների գործադրմամբ:

Նշվածի վառ օրինակ է «Վանաձոր» ՔԿ պետի ղեկավարմամբ 2017թ. ընթացքում իրականացված հանցագործությունների շղթայի բացահայտումը ՀՀ ԱԱԾ-ի ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ, այն դեպքում, երբ նույն ՔԿ-ում ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից կատարված ստուգումներով ի հայտ բերված մի շարք խախտումների արդյունքում նախաձեռնած միջնորդագրի հիման վրա ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունում իրականացվել էր «ծառայողական քննություն», իսկ նույն պետը ենթարկվել էր կարգապահական տույժի:

Հարկ է նշել, որ բազմաթիվ քրեական գործեր են քննվել նաև այլ քրեակատարողական հիմնարկների պաշտոնատար անձանց կողմից հանցագործություններ կատարելու, արգելված իրեր, այդ թվում՝ բջջային հեռախոսներ, թմրամիջոցներ քրեակատարողական հիմնարկներ մտցնելու, սահմանված կարգի խախտմամբ տեսակցություններ թույլատրելու և այլ դեպքերի առթիվ:

Նշված խնդիրների վերլուծության արդյունքում միջոցներ են ձեռնարկվել պատիժների կիրառման նկատմամբ դատախազական հսկողության մեխանիզմների արդյունավետությունը, հայտաբերված խախտումների վերացման նկատմամբ

հետևողականությունը բարձրացնելու ուղղությամբ: Միջոցներ են ձեռնարկվել նաև ՔԿՀ-ներում արձանագրված հանցագործությունների փաստերով քննվող քրեական գործերով խորը և բազմակողմանի նախաքննությամբ յուրաքանչյուր դեպքով պատճառները, նպաստող պայմանները լիարժեք բացահայտելու, հնարավոր հանցավոր սխեմաներում ընդգրկված բոլոր անձանց պատասխանատվության հարցը լուծելու ուղղությամբ:

Պետք է նշել, որ 2017թ. ընթացքում քննված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման է ենթարկվել ՀՀ ԱՆ ՔԿՎ 8 աշխատակից, այդ թվում՝

- ՔԿՀ պետ, պետի տեղակալ – 2 անձ,
- ՔԿՀ օպերատիվ խմբի պետ – 1 անձ,
- ՔԿՀ անվտանգության ապահովման բաժնի պետ – 1 անձ,
- հերթապահ - 1 անձ,
- մասնագետ – 3 անձ:

Միաժամանակ, վերը նշված խախտումների վերաբերյալ ընդգրկուն ուսումնասիրության արդյունքներով 25.10.2017թ. հաղորդում է ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարին՝ անհրաժեշտ իրավական, կազմակերպական բարեփոխումներ իրականացնելու առաջարկությամբ:

ՀՀ դատախազության նախաձեռնությամբ 2017 թվականին առաջին անգամ ստուգվել է ՀՀ առողջապահության նախարարության հարկադիր բուժում իրականացնող հաստատություններում (հոգեբուժարան) հարկադիր բուժման մեջ գտնվող անձանց հիմնական իրավունքների պահպանման վիճակը: Կատարված ստուգումների արդյունքում հայտնաբերված մի շարք խախտումներով նախապատրաստվել են նյութեր, հարուցվել է 1 քրեական գործ, ներկայացվել են ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդագրեր: Իրականացված ծառայողական քննությունների արդյունքում հոգեբուժարանների՝ խախտումներ և թերացումներ թույլ տված 9 աշխատակից ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, իսկ տեղ գտած թերությունները և խախտումները վերացվել են:

ՀՀ դատախազության ուշադրության կենտրոնում է գտնվում նաև ՔԿՀ-ներում պահվող անձանց անձնական անվտանգության իրավունքի ապահովման ոլորտը: 2017թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ դատախազության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության առջև բարձրացվել է կալանավորված անձանց և դատապարտյալների անձնական անվտանգության իրավունքի ապահովման ոլորտում աշխատանքների ակտիվացման, մասնավորապես՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ից 30-ն ընկած ժամանակահատվածում ՔԿՀ-ներ ներթափանցած արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի հայտնաբերման նպատակով չնախատեսված խուզարկություններ անցկացնելու, ինչպես նաև հանձնուքների ընդունման գործընթացի նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու հարցը:

Դատախազության նախաձեռնությամբ 2017 թվականի դեկտեմբերի 27-ից 30-ն ընկած ժամանակահատվածում ՔԿՀ-ներում անցկացված միջոցառումների արդյունքում հայտնաբերվել և առգրավվել են մի շարք արգելված իրեր և առարկաներ:

Մասնավորապես՝ 144 միավոր կտրող-ծակող առարկաներ, 351 լիտր ինքնաշեն ոգելից խմիչք, արգելված դեղահաբեր և այլն:

2017թ. ՀՀ դատախազության՝ ոլորտը սպասարկող դատախազների կողմից, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց դիմումների համաձայն, հարցման է ենթարկվել 74 անձ, որոնցից 29-ի կողմից բարձրացված հարցերին տրվել է լուծում դատախազական ներգործության արդյունքում: Հարցման արձանագրություններից 19-ը ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչություն, իսկ մյուսները՝ ՀՀ գլխավոր դատախազության այլ ստորաբաժանումներ, որտեղ, նույնպես, պահվող անձանց կողմից բարձրացված բոլոր հարցերին տրվել են լուծումներ:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազները դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են 3000 դատական գործի քննության (2016թ.՝ 803):

2017 թվականի ընթացքում դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցի վերաբերյալ դատախազները մասնակցել են 1082 դատական գործի քննարկման, որոնց արդյունքում պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 365 դատապարտյալ: Մյուս բոլոր դատական գործերով դատախազների կողմից ներկայացված առարկության կամ կայացված դատական ակտերի բողոքարկման արդյունքում դատապարտյալներին պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունները մերժվել են: 2016 թվականի ընթացքում վերը նշված հարցի վերաբերյալ դատախազները մասնակցել են ընդամենը 178 դատական գործի քննարկման, որոնց արդյունքում պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 115 դատապարտյալ:

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու որոշումների դեմ բերվել է 104 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 51), որոնցից 27-ը բավարարվել է (2016թ.՝ 19), 3-ով բերվել է վճռաբեկ բողոք, որոնց վերաբերյալ որոշումներ դեռ չեն կայացվել: Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու գործերից 4-ով բերվել է վերաքննիչ բողոք (2016թ.՝ 3), հարկադիր բուժումը փոփոխելու կամ դադարեցնելու վերաբերյալ ՝ 10 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 11), որոնցից 1-ը բավարարվել է (2016թ.՝ 4):

Ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու վերաբերյալ որոշումների դեմ բերվել է 1 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 7): Տուգանքը կամ դրա չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ բերվել է 27 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 2), որոնցից 2-ը բավարարվել է (2016թ.՝ 0), իսկ 1-ով բերվել է վճռաբեկ բողոք, որն ընթացքում է: Հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ բերվել է 1 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 1), որը բավարարվել է: Այլ գործերից 19-ով բերվել է վերաքննիչ բողոք (2016թ.՝ 28), որոնցից 4-ը բավարարվել է (2016թ.՝ 8):

2017թ. ապրիլ ամսից ՀՀ դատախազությունը մասնակցել է տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու 867 միջնորդության քննարկմանը, որի արդյունքում տուգանք պատժատեսակի դատապարտված դատապարտյալների կողմից կատարվել է մոտ 183 մլն դրամ տուգանքի վճարում:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ քննված գործերի և կայացված դատական ակտերի աճը, 2016 թվականի հետ համեմատած, պայմանավորված է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացի ոլորտում 2017 թվականի մարտի 1-ին կատարված օրենսդրական բարեփոխումներով, որի արդյունքում էլ առավել երաշխավորվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ոլորտում դատապարտյալների դատական պաշտպանության իրավունքը: 2017 թվականին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից պատժից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալների թիվը 250-ով ավելի է եղել նախորդ տարվա ընթացքում ազատված դատապարտյալների թվից (365-115):

ՀՀ Սահմանադրական դատարանը 2013 թվականի ապրիլի 23-ին ընդունած որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր էր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներ պատժատեսակով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում համարժեքորեն չէր երաշխավորվում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տևողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավորություն, ինչով արգելափակվում էր նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբերակում չէր դրվում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու հանգամանքների միջև:

2016թ. Հայաստանի Հանրապետության դատախազությունն ուսումնասիրություն էր կատարել ազատազրկման հետ չկապված պատժատեսակների գործնականում կիրառման ոլորտում և, ի թիվս այլ խնդիրների, պարզել, որ Սահմանադրական դատարանի մատնանշած որոշմամբ պայմանավորված՝ տուգանք պատժատեսակի կատարումը գործնականում դարձել է անհնարին, քանի որ կամովին տուգանքը չվճարելու դեպքում այդ

պատժատեսակի կատարումն ապահովելու մեխանիզմներ գոյություն չունեին: Նշված իրավիճակը հանգեցրել էր նրան, որ դատապարտյալների կողմից տուգանքը կամովին չէր վճարվում, այսինքն, ըստ էության, դատական ակտերը չէին կատարվում:

Ելնելով դրանից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 51-րդ և 54-րդ հոդվածներում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ՝ ինչպես տուգանք, այնպես էլ հանրային աշխատանքներ պատիժների նպատակների և պատժի անխուսափելիության սկզբունքի հստակ ապահովման նպատակով:

Այս գործընթացի արդյունքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2017թ. մարտի 1-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համապատասխան օրենքը: Դրանով հստակեցվեցին դատապարտյալների կողմից տուգանքը վճարելու անհնարինության և տուգանքը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքերի իրավական հետևանքները՝ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու իրավակարգավորումները: Հստակեցվեցին նաև հանրային աշխատանքներ պատժատեսակի կիրառման ընթացակարգերը:

Դրանից անմիջապես հետո Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից ուժեղացվեց հսկողությունը վերը նշված գործընթացների, այդ թվում՝ հանրային աշխատանքներ պատժատեսակի գործնական կիրառման նկատմամբ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության մարմինների գործունեության շրջանակներում Հայաստանի Հանրապետության դատախազության ստորաբաժանումների կողմից ուժեղացվել է հսկողությունը համապատասխան դատապարտյալների պատժի կատարման օրինականության նկատմամբ: Փաստացի ապահովվել է օրենսդրական փոփոխությունների կենսագործումը, որը գործնականում դրական արդյունքներ է ապահովել:

Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության ստորաբաժանումների կողմից, օրենքում կատարված վերոնշյալ փոփոխության՝ ուժի մեջ մտնելուց հետո, 867 միջնորդություն է ներկայացվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ՝ դատավճռով նշանակված տուգանք պատժատեսակը հանրային աշխատանքներ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ: Արդյունքում տուգանք պատժատեսակի դատապարտված դատապարտյալների կողմից կատարվել է 183.365.300 ՀՀ դրամ գումարի վճարում:

Բացի դրանից, հանրային աշխատանքներ պատժատեսակով Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է մի շարք ստուգումներ՝ ինչպես

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայությունում, այնպես էլ հանրային աշխատանքների դատապարտված անձանց աշխատավայրերում, այդ թվում՝ կատարվել են այցելություններ հանրային աշխատանքների կատարման կոնկրետ վայրեր՝ պարզելու դատապարտյալների փաստացի ներգրավվածությունը հանրային աշխատանքներում: Ստուգումների արդյունքում հարուցվել է 3 քրեական գործ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 308-րդ և 325-րդ հոդվածներով, ինչպես նաև ծառայողական քննություն անցկացնելու միջնորդություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

2017թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունն ուսումնասիրել է դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում կայացնելիս դատապարտյալների վրա որոշակի պարտականություններ դնելու իրավակարգավորումների և դրանց ռեալ իրականացման պրակտիկան: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ համապատասխան իրավական նորմերը գործնականում չեն կիրառվում: Դատարանները, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ և 76-րդ հոդվածների իրավակարգավորումներով, հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս կամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելիս, վերջիններիս նկատմամբ պարտականություն սահմանելու հարցը չեն քննարկում, և արդյունքում այդպիսիք չեն սահմանում: Որպես հետևանք՝ այդ դատապարտյալների համար սահմանվող փորձաշրջանը վերածվում է բացառապես ժամանակի պարզ ընթացքի՝ առանց դատապարտյալի ուղղմանը, նրա կողմից նոր հանցանք կատարելը կանխելուն նպաստող որևէ գործողության:

Խնդիրն այն է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու և դատապարտյալին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտների նշանակությունը ոչ միայն նշանակված պատիժը կամ դրա մի մասը անձի կողմից ռեալ չկրելն է, այլև նրա վրա այնպիսի պարտականություններ դնելը, որոնց կատարումը նպաստում է հանցագործության պատճառի և դրան նպաստող հանգամանքների վերացմանը, դատապարտյալի ուղղմանը: Այսինքն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքերում դատապարտյալի վարքագիծը պետք է վկայի նրա ուղղման մասին:

Ելնելով կատարված ուսումնասիրության և վերլուծության արդյունքներից՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից դատախազներին տրվել է հանձնարարական՝ միջոցներ ձեռնարկել նմանատիպ դեպքերում քրեական օրենքով նախատեսված՝ ուղղմանը նպաստող այլ պարտականությունները դատապարտյալի վրա դնելն ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, հանձնարարվել է, որ այն դեպքերում, երբ ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվում կամ

դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեմ առարկություն չի ներկայացվում, դատարանին առաջարկել դատապարտյալի վրա դնել քրեական օրենսգրքով նախատեսված, նրա ուղղմանը նպաստող պարտականություններ: Խոսքը վերաբերում է, օրինակ, որոշակի վայրեր չհաճախելուն, աշխատանքի բնույթի կամ տեղի փոփոխության մասին վերահսկողություն իրականացնող մարմնին տեղեկացնելուն, հանրօգուտ աշխատանքներում ներգրավվելուն, տուժողի և նրա ընտանիքի անդամների հետ չշփվելուն, հոգեբանական-վերականգնողական կուրսեր անցնելուն, կրթական ու մշակութային ծրագրերի մասնակցելուն և այլն: Բացի դրանից, հանձնարարվել է բողոքարկել այս առումով անհիմն և անօրինական դատական ակտերը:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազը դիմել է նաև Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախագահին, ելնելով վերոնշյալ հանգամանքներից, քննարկման առարկա դարձնելու դատարանների կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքերում դատապարտյալների վրա ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված, ինչպես նաև դատապարտյալի ուղղմանը նպաստող այլ պարտականություններ դնելն ապահովելու ուղղությամբ միասնական մոտեցում որդեգրելու հարցը:

6.Պետական շահերի պաշտպանության ոլորտ

Պետական շահերի պաշտպանության գործառույթի շրջանակում Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից 2017 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ կատարվել է 479 ուսումնասիրություն (2016թ.՝ 333 ուսումնասիրություն): Դրանց արդյունքում հայտնաբերվել է 546 իրավախախտում (2016թ.՝ 327 իրավախախտում), հարուցվել է 71 քրեական գործ (2016թ.՝ 60 քրեական գործ), որոնցից 12 քրեական գործ 15 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան: Քրեական գործերի նախաքննության ընթացքում վերականգնվել է պետությանը պատճառված 28 մլն. 762 հազ. դրամի վնաս:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական գործեր են հարուցվել սոցիալական ապահովության, կրթության և գիտության, գյուղատնտեսության, պետական գույքի և ֆինանսների կառավարման, հարկերի և պետական տուրքերի գանձման, կապի և տրանսպորտի, բնապահպանության ոլորտներում:

2017թ. ընթացքում դատախազության մարմինները դատարան են հարուցել 81 հայց՝ 676 մլն 430 հազ. դրամի բռնագանձման պահանջով (2016թ.՝ 50 հայց՝ 4 մլրդ 730 մլն 921 հազ. դրամի բռնագանձման պահանջով):

Դատարաններում քննվել է 56 հայց, որոնցից բավարարվել է 489 մլն 563 հազ. դրամի հայցապահանջով 46 հայց, մերժվել՝ 18 մլն 863 հազ. դրամ հայցապահանջով 8 հայց, կարճվել է 8 մլն 569 հազ. Դրամ հայցապահանջով 2 հայց, ևս 1 հայց կարճվել է մինչև դատաքննությունը վնասը փաստացի վերականգնելու հիմքով՝ դեռևս դատարանի կողմից քննության չառնված, ընթացքում է 5 մլրդ 830 մլն 437 հազ. դրամի հայցապահանջով 92 հայց:

Նախորդ նույն ժամանակաշրջանում դատարաններում քննվել է 42 հայց, որոնցից բավարարվել է 187 մլն 646 հազ. դրամի հայցապահանջով 38 հայց, մերժվել է 3 մլն 174 հազ. դրամի հայցապահանջով 4 հայց:

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում բավարարված հայցերով փաստացի վերականգնվել է 11 մլն 395 հազ. դրամ:

2017թ. ընթացքում դատախազության մարմինները, պետական շահերի պաշտպանության գործառույթի շրջանակում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և ՀՀ Վճռաբեկ դատարաններ են ներկայացրել համապատասխանաբար՝ 7 վերաքննիչ և 5 վճռաբեկ բողոքներ: 7 վերաքննիչ բողոքից 3-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել, 2-ը՝ վերադարձվել, իսկ 1-ը ընթացքի մեջ է: 5 վճռաբեկ բողոքից 1-ը բավարարվել է, 1-ը՝ մերժվել, 2-ը՝ վերադարձվել (բողոքը վարույթ ընդունելը մերժելու որոշմամբ), իսկ 1-ը ընթացքի մեջ է:

Դատախազության մարմինների կողմից վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 261 անձ (2016թ.՝ 105 անձ): Դատախազների նախազգուշացումներով

կամ ուսումնասիրությունների ընթացքում կամովին վերականգնված վնասի չափը կազմել է 149 մլն 266 հազ. դրամ (2016թ.՝ 12 մլն 682 հազ. դրամ):

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականների հիման վրա մեծածավալ ուսումնասիրություններ են նախաձեռնվել տարբեր ոլորտներում պետության գույքային շահերի պաշտպանության հայցեր հարուցելու գործընթացում.

Այսպես,

Անշարժ գույքի գրանցված իրավունքների հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկությունները, ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1775-Ն որոշմամբ հաստատված կարգով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնելու գործընթացի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում ներդրված ARPIS էլեկտրոնային համակարգում չեն վերծանվել 2013-2017 թվականների հաշվետու եռամսյակների վերջին օրերի գործարքները (համակարգը վերծանել է մինչև եռամսյակի վերջին օրվա գործարքները): Արդյունքում, հանրապետության տարածքում կատարված անշարժ գույքի 3204 գործարքի վերաբերյալ տեղեկությունները չեն արտացոլվել եռամսյակային հաշվետվություններում և չեն ներկայացվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին:

Մասնավորապես՝ նշված էլեկտրոնային համակարգում չեն վերծանվել տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարված՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա ընդհանուր 1 մլրդ 108 մլն 058 հազ. դրամ կադաստրային և 3 մլրդ 258 մլն 931 հազ. դրամ պայմանագրային արժեքով թվով 110 գործարքի և ֆիզիկական անձանց կողմից կատարված՝ 76 հասարակական, արտադրական նշանակության՝ ընդհանուր 1 մլրդ 092 մլն 450 հազ. դրամ կադաստրային և 1 մլրդ 073 մլն 993 հազ. դրամ պայմանագրային արժեքով անշարժ գույքի նկատմամբ գործարքները, ինչի հետևանքով պետական լիազոր մարմինը տարիներ շարունակ զրկվել է հարկերի գանձման գործառույթներն օրենքով սահմանված կարգով պատշաճ իրականացնելու հնարավորությունից:

Ուսումնասիրությունների ընթացքում արդեն իսկ ստացված փաստական տվյալների համաձայն՝ հասարակական, արտադրական նշանակության անշարժ գույքի նկատմամբ տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարված 3 և ֆիզիկական անձանց կողմից կատարված 5 գործարքներ չէին հայտարարագրվել և պետական բյուջե չէր վճարվել շուրջ 79 մլն դրամ ԱԱՀ-ի գումար՝ (առանց տույժ-տուգանքի):

Նկատի ունենալով, որ արդեն իսկ հայտնաբերված խախտումներն առերևույթ պարունակել են հանցագործության հատկանիշներ՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ:

Միաժամանակ, անշարժ գույքի գրանցված իրավունքների հետ կապված գործարքների վերաբերյալ տվյալները տրամադրվել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին և հանձնարարվել է պարզել հարկման ենթակա այն գործարքները, որոնցով չեն հաշվարկվել և չեն գանձվել հարկման ենթակա գումարները:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ձեռնարկած հետագա միջոցառումների արդյունքում պարզվել է, որ հասարակական, արտադրական նշանակության անշարժ գույքի նկատմամբ տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարված 5 և ֆիզիկական անձանց կողմից կատարված 3 գործարքներ նույնպես չեն հայտարարագրվել և պետական բյուջե չեն վճարվել ընդհանուր, շուրջ 570 մլն դրամի հարկային պարտավորություններ, որոնցից շուրջ 360 մլն դրամը՝ հարկ, իսկ 210 մլն 540 հազ. դրամը՝ հաշվարկված տույժ-տուգանքներ:

Ստացված տվյալներն ուղարկվել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչություն՝ հարուցված քրեական գործի հետ համատեղ ընթացքը լուծելու համար:

Հընթացս ուսումնասիրություններ են կատարվում նաև.

- գյուղատնտեսության ոլորտում՝ հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար աջակցության ծրագրով մատչելի գներով պարարտանյութերի տրամադրման, սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրով սերմերի գնման և բաշխման գործընթացներում պետական շահերի պաշտպանության վիճակի վերաբերյալ,
- աշխատանքի և սոցիալական հարցերի ոլորտում՝ զբաղվածության պետական գործակալության կողմից իրականացվող «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» և «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման» ծրագրերով հատկացված բյուջետային միջոցների ծախսման գործընթացներում պետական շահերի պաշտպանության վիճակի վերաբերյալ,
- էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ոլորտում՝ ընդերքօգտագործողների հետ կնքված պայմանագրերով նախատեսված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման համար ներդրումների իրականացման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակի վերաբերյալ,
- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառման և գանձման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակի վերաբերյալ:

Ձեռք բերված արդյունքներով արդեն իսկ հարուցվել է 8 քրեական գործ, ներկայացվել է 250 հաղորդում և նախազգուշացում, որի արդյունքում կամովին վերականգնվել է շուրջ 215 մլն. ՀՀ դրամ:

Համայնքների ղեկավարների կողմից հարուցվել են 47 մլն 857 հազ. դրամի 166 վարչական վարույթներ, 41 դեպքերով 1 մլն 138 հազ. դրամի վարչական ակտեր ներկայացվել են կատարման ԴԱՀԿ մարմիններ, բերվել են 31 մլն. 427 հազ. դրամի 60 հայցեր (200 հազ. դրամը գերազանցող հայցապահանջներով):

Այսպիսով, կարող ենք փաստել, որ 2017թ. ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության բնագավառում իրենց լիազորությունների շրջանակներում ձեռնարկված դատախազական ներգործության միջոցառումների արդյունքում պետական և համայքային բյուջեներ են վերականգնվել շուրջ 364 մլն ՀՀ դրամի վնաս:

7.Միջազգային-իրավական համագործակցության ոլորտ

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ և 54.1-րդ գլուխներով ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների՝ իրեն վերապահված գործառույթների իրականացումը՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների՝

1. Քրեական գործերով իրավական օգնություն (ներառյալ՝ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ուղարկվող և ստացվող հարցումների կատարման ապահովում).

2017 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից պետությունների դատախազություններ ուղարկվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 176 միջնորդություն (2016թ.՝ 185), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 277 միջնորդություն (2016թ.՝ 181), ընդամենն ուղարկվել է 453 միջնորդություն, նախորդ տարվա 366 միջնորդության փոխարեն:

2017 թվականի ընթացքում ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 167 միջնորդություն (2016թ.՝ 206), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 18 միջնորդություն (2016թ.՝ 10), ընդհանուր առմամբ ստացվել է 185 միջնորդություն, նախորդ տարվա 216-ի փոխարեն:

2. Քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին միջնորդություններ.

2017 թվականի ընթացքում ուղարկվել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող անձանց հանձնելու մասին 66 միջնորդություն (2016թ.՝ 76), որոնցից 50-ն ուղարկվել է ԱՊՀ մասնակից պետությունների (2016թ.՝ 64), իսկ 16-ը՝ այլ օտարերկրյա պետությունների (2016թ.՝ 12) իրավասու մարմիններին:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազների կողմից ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության քրեական հետապնդման մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված տեղեկությունների հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթները, անճշտությունների, թերությունների առկայության դեպքում պահանջվել են դրանց լրամշակված տարբերակները, իսկ անհրաժեշտության դեպքում, օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հանձնման միջնորդությունների քննարկման ընթացքում, միջազգային պայմանագրերի համաձայն, հայցվել ու տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ ու փաստաթղթեր:

Այս գործընթացի ճիշտ կազմակերպման արդյունքում նվազագույնի են հասցվել հանձնման միջնորդությունների անհիմն մերժման դեպքերը:

Այսպես.

Հաշվետու ժամանակահատվածում ուղարկված 66 հանձնման միջնորդությունից 27-ը բավարարվել է (2016թ.՝ 27), 11-ը՝ մերժվել (2016թ.՝ 8), 28-ը քննարկման փուլում են: 2017թ. ընթացքում բավարարվել է նաև նախկինում ներկայացված 38 հանձնման միջնորդություն:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 12 միջնորդությունից (2016թ.՝ 11) բավարարվել է 7-ը, մերժվել՝ 1-ը, 1-ն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 3-ը քննարկման փուլում են:

ՀՀ գլխավոր դատախազությունում հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 140 անձի վերաբերյալ (2016թ.՝ 79):

2017թ. ընթացքում աննախադեպ աճել է օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված ու կալանավորված անձանց թիվը: 2018թ. հունվարի դրությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության տարբեր քրեակատարողական հիմնարկներում պահվել է դատախազների միջնորդությամբ կալանավորված 15 հետախուզվող:

3. Քրեական գործերով վարույթների փոխանցում (ստացված և ուղարկված քրեական գործեր և նյութեր).

2017թ. ընթացքում այլ պետությունների իրավասու մարմիններին ուղարկվել է 16 քրեական գործ (2016թ.՝ 13), որոնցից 12-ն ուղարկվել է ԱՊՀ իրավասու մարմիններին (2016թ.՝ 12), իսկ 4-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին (2016թ.՝ 1):

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 9 քրեական գործ (2016թ.՝ 9):

Քրեական գործերով իրավական օգնություն հայցելու և տրամադրելու, ինչպես նաև հանձնման և քրեական գործերով վարույթների փոխանցման գործընթացում խստորեն պահպանվում են ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերի, ինչպես նաև ներպետական օրենսդրության դրույթները:

2017թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության դատախազությունը շարունակել է համագործակցությունը ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի, Դատախազների միջազգային ասոցիացիայի ու Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

Նշված համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը մասնակցել է արտերկրում կազմակերպված մի շարք միջազգային միջոցառումների, մասնավորապես՝

1. 2017թ. սեպտեմբերի 11-ից 15-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մայրաքաղաք Պեկինում կայացած Դատախազների միջազգային ասոցիացիայի 22-րդ տարեկան համաժողովին և գլխավոր ժողովին:

«Դատախազության դերը հանրային շահերի պաշտպանության ոլորտում. փոփոխվող հասարակություններում մարտահրավերների և հնարավորությունների առջև» խորագիրը կրող համաժողովը նվիրված է եղել առանցքային երեք հիմնահարցի՝ թվային դարաշրջանում հանցագործությունների քրեական հետապնդման արդյունավետության բարձրացման կառուցակարգերին, աշխարհում նկատելի՝ քաղաքային բնակչության աճի տենդենցների պայմաններում քրեական հետապնդման առջև ծառացող մարտահրավերներին, ինչպես նաև միջազգային-իրավական համագործակցության նոր եղանակներին:

Մոտ 90 երկրի դատախազությունների, միջազգային ու ազգային համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչներն այս հիմնահարցերի շրջանակներում քննարկել են այնպիսի արդիական խնդիրներ, ինչպիսիք են՝ միջազգային ցանցի մաս կազմող երկրների դատախազական համակարգերի միջև փորձի փոխանակման և գործակցության ժամանակակից մեթոդների կիրառումը, փոխադարձ իրավական օգնության գործիքների հասանելիությունն ու դրա հետ կապված կարիքները, էլեկտրոնային հանցագործությունների, ահաբեկչության, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում դատախազների միջազգային ցանցի դերակատարման մեծացումը: Հատուկ ուշադրության առարկա են դարձել ապացույցների պահպանման, շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման, կոռուպցիայի հակազդման ոլորտներում միջազգային համագործակցությունը և փորձի փոխանակման հիմնահարցերը:

Համաժողովի ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը հանդես է եկել կիբեռհանցագործությունների դեմ պայքարի և այդ համատեքստում, թվային ապացույցների օգտագործման ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ ելույթով:

ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է կիբեռհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը միտված միջազգային իրավական օգնության՝ Հայաստանի իրավապայմանագրային դաշտը:

Նշելով, որ ընթացող համաժողովը կնպաստի դատախազների միջազգային ցանցում ընդգրկված երկրների իրավասու մարմինների միջև իրավական համագործակցության արդյունավետության բարձրացմանը, ՀՀ գլխավոր դատախազը շեշտադրում է կատարել հատկապես առկա խնդիրների, մասնավորապես, ազգային օրենսդրություններում առկա

հակասությունների վերացման, դատախազությունների ղեկավար մարմինների դերակատարման ուժեղացման անհրաժեշտության վրա: ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ սրանք առանցքային խնդիրներ են 21-րդ դարում, երբ հանցավորությունն այլևս սահմաններ չի ճանաչում, երբ, օրինակ, հանցագործությունների միջոցով ստացած եկամուտները բանկային օպերացիաների միջոցով փոխանցվում են այլ երկրներ, երբ երկրաչափական պրոգրեսիայով աճում է համացանցի միջոցով իրականացվող հանցագործությունների քանակը: Այս երևույթներն ունեն գլոբալ բնույթ և իրենց մեջ ներառում են անդրազգային տարրեր, ինչը առանցքային է դարձնում կիբեռհանցագործությունների հակազդման արդյունավետ միջոցների կիրառման առումով միջազգային համագործակցությունը:

Ելնելով ուժգնացող մարտահրավերներից՝ ՀՀ գլխավոր դատախազը անհրաժեշտ է համարել համակարգչային հանցագործությունների բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու համար միջազգային համագործակցության կարևոր ուղղություն դարձնել քրեական գործերով համատեղ ապացույցների ձեռքբերումը: Նաև այդ նպատակով Հայաստանի կողմից առաջարկվել է ստեղծել համացանցային on-line ընդհանուր ռեսուրս, որի միջոցով, ինչպես կիբեռհանցագործությունների դեմ պայքարի բուդապեշտյան պայմանագրին միացած, այնպես էլ չմիացած երկրները, կարող են ստեղծել համապատասխան հարցումների համար անհրաժեշտ տեղեկություններ և տվյալներ պարունակող անհատական բազաներ:

Համաժողովի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը մի շարք երկկողմ հանդիպումներ է ունեցել տարբեր երկրների գլխավոր դատախազների, պատվիրակությունների ղեկավարների, մասնավորապես, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Էստոնիայի, Լիտվայի, Ռումինիայի և Հունաստանի Հանրապետությունների գլխավոր դատախազների, ինչպես նաև Դատախազների միջազգային ասոցիացիայի նախագահի հետ: Դրանց ընթացքում քննարկվել են իրավական փոխգործակցության ակտիվացմանն ուղղված հնարավոր քայլերը և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր, ինչպես նաև ձեռք են բերվել երկկողմ հարաբերությունների զարգացմանն ուղղված կոնկրետ պայմանավորվածություններ:

2. 2017թ. սեպտեմբերի 27-ին Ռուսաստանի Դաշնության Կազան քաղաքում կայացած ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նիստին:

Նիստի ընթացքում քննարկվել են Միջպետական խորհրդի նախորդ նիստին ընդունված որոշումների իրականացման արդյունքները, կոռուպցիայի հակազդման ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության համաձայնագրի նախագիծն ու դրանից բխող հակակոռուպցիոն պայքարի կոնցեպցիայի մշակման ընթացքը: Վերջիններս ուղղված են ԱՊՀ-ի շրջանակում կոռուպցիայի հակազդման

իրավական և կազմակերպական հիմքերի զարգացմանը, անդամ երկրների միջև այս ոլորտում փոխգործակցության սկզբունքների, խնդիրների և ձևաչափերի հստակեցմանը:

Նիստի ընթացքում որոշվել է ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի հաջորդ տարվա հերթական նիստն անցկացնել Հայաստանում, իսկ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընտրվել է Խորհրդի համանախագահ:

3. 2017թ. նոյեմբերի 29-ին Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաքում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի 27-րդ նիստին:

Նիստի ընթացքում մասնակից երկրների դատախազությունների միջև տեղի է ունեցել փորձի փոխանակում թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությանը հակազդեցության, խոշտանգումների դեմ պայքարի, պատմամշակութային ժառանգության պաշտպանության և արժեքային շրջանառության օրինականության պահպանման, քաղաքացիների իրավունքների պաշտպանության և այլ ոլորտներում: Քննարկվել է Խորհրդի 2016թ. աշխատանքային պլանի իրականացման ընթացքը, հաստատվել ահաբեկչության և բռնության այլ դրսևորումներով ուղեկցվող ծայրահեղականության դեմ պայքարի 2017-2019թթ., ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող հանցագործությունների դեմ պայքարի 2017-2020թթ. պլանները: Անդրադարձ է կատարվել 2016թ. ընթացքում հանցավորության դեմ պայքարի շրջանակներում միջազգային պայմանագրերի իրականացման արդյունավետությանը:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը հանդես է եկել համապատասխան միջազգային համաձայնագրերի և ազգային օրենսդրությունների անլիարժեք ներդաշնակության պատճառով իրավական փոխօգնության ցուցաբերման ոլորտում առաջացող գործնական հիմնախնդիրների, ստանձնած իրավապայմանագրային պարտավորությունների համատեքստում Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության առանձնահատկությունների մասին ելույթով: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը նշել է, որ արդյունավետ քրեական հետապնդման տեսանկյունից շարունակում են խնդրահարույց մնալ իրավական օգնության ցուցաբերման շրջանակում համապատասխան միջնորդագրերի հիման վրա մասնակից շատ երկրների քաղաքացիներին կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում հարցաքննության ենթարկելու, կամ նրանց հետ հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման հիմնախնդիրները: Առանձին անդրադարձ է կատարվել դատաքննության ընթացքում գտնվող քրեական գործերի՝ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով ստացման հետ կապված դժվարություններին:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազն այս հիմնախնդիրների մեծ մասը պայմանավորել է հիմնականում մասնակից երկրներից շատերում քրեական գործերով

միջազգային փոխօգնության ոլորտում ներպետական օրենսդրությունը միջազգային համաձայնագրերին լիարժեք համապատասխանեցրած չլինելու հանգամանքով: Նա առաջարկել է հնարավորինս արագ միջոցներ ձեռնարկել այս ուղղությամբ՝ դրանում առանցքային համարելով ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի դերը՝ հատկապես անհրաժեշտ մեթոդաբանական և տեղեկատվական աջակցության ցուցաբերման իմաստով:

Նիստի ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից, ի թիվս այլ հարցերի, բարձրացվել են իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների շրջանակներում առկա խնդրահարույց մի շարք հարցեր, որոնց լուծումը ներկայումս ընթացքի մեջ է:

Այցի ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազն երկկողմ հանդիպումներ է ունեցել Ռուսաստանի Դաշնության, ԱՊՀ անդամ մի շարք այլ պետությունների գլխավոր դատախազների, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր դատախազի հետ, որոնց ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

ԻԻՀ գլխավոր դատախազի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների կատարման ժամկետները հնարավորինս կրճատելու վերաբերյալ:

Այցի շրջանակներում, 2017թ. նոյեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազների կողմից ստորագրվել է 2018-2020 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև համագործակցության ծրագիրը, որով, մասնավորապես, նախատեսվում են համատեղ աշխատանքներ ԵԱՏՄ տարածքում հանցավորության դեմ պայքարի և հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների վերադարձման ուղղությամբ:

Երկու երկրների դատախազությունների միջև 2006թ.-ից առ այսօր ստորագրվող համագործակցության՝ թվով 5-րդ ծրագրով նախատեսված միջոցառումները կարևոր նշանակություն կունենան երկու երկրների դատախազությունների միջև հետագա իրավական համագործակցության խորացման համար:

Բացի դրանից, հաշվետու ժամանակահատվածում Տաջիկստանի Հանրապետության գլխավոր դատախազության հետ համագործակցության արդյունքում նախապատրաստվել և 2017թ. հունիսի 14-ին Երևանում Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության գլխավոր դատախազների կողմից ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Տաջիկստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին» համաձայնագիրը:

Ստանձնած միջազգային պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մասով կատարման ընթացքը ներկայացնելու, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և գլխավոր դատախազի տեղակալները հանդիպումներ են ունեցել նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, մասնավորապես՝

1. 2017թ. մարտի 2-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ապրիլի 2-ին խորհրդարանական ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Հայաստան ժամանած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ առաքելության ղեկավարի տեղակալի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը քննարկվել են ապրիլի 2-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ մամուլի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները, քաղաքացիների հաղորդումները ուսումնասիրելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի գործառույթները, նույն դեպքերով հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմինների գործունեության նկատմամբ դատախազական հսկողության իրականացմանն առնչվող հարցեր:

2. 2017թ. ապրիլի 14-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկիին: Հանդիպմանը կողմերը քննարկել են ապրիլի 2-ին տեղի ունեցած ՀՀ ԱԺ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արձանագրված ընտրախախտումների քննությանն առնչվող հարցեր: Միաժամանակ, պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակելու արդեն իսկ ձևավորված համագործակցությունը:

3. 2017թ. նոյեմբերի 21-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) տնօրենին:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են վերջին շրջանում քաղաքացիների հիմնարար, կոնվենցիոնալ իրավունքների պաշտպանության քրեադատավարական մեխանիզմները կատարելագործելու ուղղությամբ ՀՀ դատախազության կողմից իրականացված աշխատանքները, մտքեր են փոխանակվել նաև մի քանի կոնկրետ ուղղություններով համագործակցությունը սերտացնելու և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

4. 2017թ. նոյեմբերի 23-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Համաշխարհային բանկի հանրային հատվածի արդիականացման ծրագրի առաքելության պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են Համաշխարհային բանկի

կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի շրջանակում ՀՀ դատախազության հետ համագործակցությանն առնչվող խնդիրներ:

5. 2017թ. մարտի 22-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Հայաստան ժամանած ԱՊՀ դիտորդական խմբի ղեկավարի տեղակալին:

Ներկայացվել են ընտրական իրավախախտումների վերաբերյալ մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների հրապարակումները, քաղաքացիների հաղորդումները և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերն ուսումնասիրելու նպատակով դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի իրականացրած աշխատանքները:

Անդրադարձ է կատարվել նաև խորհրդարանական ընտրությունների կազմակերպման ու անցկացման խնդիրներին, ինչպես նաև Ընտրական օրենսգրքով ամրագրված փոփոխություններին:

6. 2017թ. ապրիլի 11-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազն ընդունել է Եվրոպայի խորհրդի գրասենյակի ներկայացուցիչներին և փորձագիտական խմբին: Փորձագիտական խմբի ներկայացուցիչները ՀՀ զինվորական դատախազին են ներկայացրել Զինված ուժերում մարդու իրավունքների՝ եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդման և մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրության կատարելագործմանն ուղղված զեկույցի նախագիծը: Կողմերը քննարկել են զեկույցում մատնանշված խնդիրները, կարևորել դրանց վերաբերյալ պարբերական քննարկումները:

7. 2017թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Հոգեկան և ֆիզիկական առողջության բարձրագույն ստանդարտներից օգտվելու յուրաքանչյուրի իրավունքների հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողին:

Հանդիպման ընթացքում ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողին ներկայացվել է ՔԿՀ-ներում և ձերբակալվածների պահման վայրերում գտնվողների առողջության իրավունքի երաշխավորման դատախազական ներգործության, պարբերաբար իրականացվող ստուգումներով խախտումներ, հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում իրավասու պաշտոնատար անձանց համարժեք պատասխանատվության ենթարկելու կառուցակարգերը:

8. 2017թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ԵԽ-ին անդամակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերահսկման գործընթացի շրջանակներում Հայաստանում գտնվող ԵԽ քաղաքական տնօրինության ղեկավարի գլխավորած՝ ԵԽ Գլխավոր քարտուղարության պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում պատվիրակության անդամներին

հանգամանալից ներկայացվել են Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ ՀՀ դատախազության կողմից ձեռնարկած միջոցառումները, այդ թվում՝ ուղղված խոշտանգումների կանխարգելման և քննության, անձի ազատության, անձնական անձեռնմխելիության ապահովման և արդար դատաքննության կոնվենցիոնալ իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած չափանիշների ներդրմանն ու կենսագործմանը:

9. 2017թ. դեկտեմբերի 18-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) պատվիրակությանը: Քննարկվել են ավելի վաղ ՀՀ դատախազությունում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ տնօրենի և ՀՀ գլխավոր դատախազի հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններից բխող համագործակցությանն առնչվող խնդիրներ:

ՀՀ գլխավոր դատախազը հանդիպումներ է ունեցել նաև Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են փոխգործակցության հնարավոր նոր եզրեր գտնելու հեռանկարները, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա՝ առավել արդյունավետ համագործակցության ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների շուրջ:

8.Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում իրավական ապահովման ոլորտում ՀՀ դատախազության կողմից, դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունների հիման վրա, մշակվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծեր, որոնց նպատակն է կատարելագործել ՀՀ օրենսդրությունը և բարելավել ՀՀ դատախազության գործունեությունը, ամփոփվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքները, գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին ներկայացվել են դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ամփոփ կարծիքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավաստեղծ գործունեության ոլորտում իրականացվել են իրավական ակտերի մշակման և լրամշակման աշխատանքներ, որոնց արդյունքում ներկայացվել է 10 (2016թ.՝ 3) օրենսդրական նախաձեռնություն, այդ թվում՝ 6 (2016թ.՝ 2) օրենքի նախագիծ:

Մասնավորապես,

Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու առավել վտանգավոր տեսակների համար քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիության սկզբունքի պատշաճ իրացմանը, խոսքի ազատության հիմնարար իրավունքի երաշխավորմանն ուղղված հասարակական հարաբերությունները պաշտպանելու անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասում քրեական պատասխանատվություն է նախատեսվում լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելու, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում՝ նույն արարքները պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելու համար: Հոդվածի երրորդ մասում քրեական պատասխանատվություն է նախատեսվում հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված արարքները լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարելու համար:

Այսինքն՝ օրենսդիրը քրեական պատասխանատվություն է նախատեսում միայն այն դեպքում, եթե լրագրողի կամ նրա մերձավորի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով վերջինիս մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ

տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը կատարվել է պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով:

Նկատի ունենալով նշված հանցատեսակի հանրային վտանգավորության առավել բարձր աստիճանը, հետևաբար նաև նման արարքների համար պատասխանատվության առավել խիստ միջոցներ նախատեսելու անհրաժեշտությունը՝ ՀՀ դատախազության ներկայացրած նախագծով առաջարկվում է քրեական պատասխանատվություն նախատեսել նաև այն դեպքում, եթե վերոնշյալ հանցավոր արարքները կատարվում են պաշտոնատար անձ չհանդիսացող սուբյեկտի կողմից:

Բացի դրանից, մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (28-րդ, 53-րդ, 184-րդ, 185-րդ հոդվածներ) ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է սահմանել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք.

- հնարավորություն կտան առանց քրեական գործ հարուցելու վերացնել հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին չպատճառաբանված, թերի կամ սխալ պատճառաբանված որոշումները,
- առանց քրեական գործ հարուցելու վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին այն որոշումները, որոնք կայացվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 3-րդ մասի խախտմամբ,
- առանձին վարույթում առանձնացնել քրեական գործի՝ անչափահասին առնչվող մասը, եթե վարույթն իրականացնող մարմնի կարծիքով դա բխում է անչափահաս մեղադրյալի լավագույն շահերից և չի վնասում քրեական գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությանը,
- քրեական գործից առանձնացված քրեական նոր վարույթում օգտագործել սկզբնական քրեական գործի վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները՝ առանց խախտելու քրեական դատավարության մասնակիցների իրավունքները:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի մեկ այլ նախագծով (204-րդ, 259-րդ հոդվածներ) առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածի դիսպոզիցիայից հանել «առաջադրված» բառը, ինչը հնարավորություն կտա, անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում, փոփոխելու կամ լրացնելու հետախուզման մեջ գտնվող անձին չառաջադրված մեղադրանքը, ինչպես նաև վերաձևակերպել 259-րդ հոդվածը՝ քննիչի և հետաքննության մարմնի դատավարական բնույթի պարտականությունները նախատեսելով քրեական դատավարության օրենսգրքում՝ այդպիսով բարձրացնելով հետախուզական աշխատանքի կազմակերպման և դրա նկատմամբ օրենքով նախատեսված հսկողության արդյունավետությունը:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծով (355-րդ հոդված) առաջարկվել է հստակեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածի դիսպոզիցիան և ձերբակալված, կալանավորված կամ դատապարտված անձի փախուստի հանրային վտանգավորությունը պայմանավորելով ոչ թե այն օբյեկտների ցանկով, որտեղից փախուստի է դիմում անձը, այլ տվյալ անձի կարգավիճակով, իսկ «**ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի մեկ այլ նախագծով (327[1] հոդված)** առաջարկվել է հստակեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 327[1] հոդվածի դիսպոզիցիան՝ քրեորեն պատժելի համարելով առանց հարգելի պատճառի այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայության վայր չներկայանալն առհասարակ՝ առանց հոդվածի ներկայիս խմբագրությունում նշված սահմանափակումների:

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի մեկ այլ նախագծով էլ (226[1] հոդված) առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքում կատարել լրացում՝ քրեականացնելով ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու հրապարակային կոչերը, որի նպատակն է խստացնել հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների ոլորտում պետության քրեական քաղաքականությունը, նպաստել այլ հանցագործությունների կանխմանը և պետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը:

2017թ. ընթացքում կազմակերպվել և անցկացվել է ՀՀ դատախազության կոլեգիայի 4 և Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության դատախազությունների համատեղ կոլեգիայի 1 նիստ:

2017թ. դեկտեմբերի 2-ին Ստեփանակերտում անցկացվել է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատախազությունների կոլեգիայի համատեղ նիստ, որի օրակարգում եղել են շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով նախաքննության նկատմամբ հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակին առնչվող հարցերը:

Նիստի ընթացքում քննարկվել են հայկական երկու պետություններում շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, այս գործերով նախաքննության նկատմամբ հսկողության ու դատարաններում մեղադրանքի պաշտպանության պրակտիկան և այդ ընթացքում ի հայտ եկող գործնական խնդիրները: Նկատի ունենալով և՛ Արցախում, և՛ Հայաստանում անտառային ֆոնդերի առկայությունը՝ հիմնական ուշադրություն է դարձվել ապօրինի անտառահատումների կանխարգելման, հանցագործությունների բացահայտման, հարուցված քրեական գործերով օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննության անցկացման, պետությանը հասցված վնասի վերականգնման, այս հանցագործություններում ներգրավված անձանց ամբողջական շրջանակի բացահայտման և պատասխանատվության ենթարկելու խնդիրներին, վարվող պատժողական

քաղաքականությանը: ՀՀ դատախազության ներկայացուցիչները Արցախի իրենց գործընկերներին են ներկայացրել այս ուղղություններով ՀՀ դատախազության կուտակած փորձն ու վերջին նախաձեռնությունների արդյունավետությունը:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազությունում ուսումնասիրվել են տարբեր գերատեսչություններից ստացված՝ **օրենքի 170** (2016թ.՝ 50), **կառավարության որոշման 22** (2016թ.՝ 21), **ՀՀ Նախագահի հրամանագրի 1 նախագծեր**, որոնց վերաբերյալ կարծիքներ են ներկայացվել :

Բացի դրանից, հաշվետու ժամանակահատվածում տարբեր պետական մարմիններին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին (Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ, Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար և այլն), վերջիններիս կողմից ներկայացված ազգային զեկույցների, տարբեր հարցաշարերի, տեղեկատվական բնույթի այլ փաստաթղթերի՝ Հայաստանի Հանրապետության դատախազության իրավասությանն առնչվող հարցադրումների վերաբերյալ, տրամադրվել է **50** վերլուծական բնույթի տեղեկություն (տեղեկանք), նախորդ տարվա 30-ի փոխարեն:

Մասնավորապես՝

- «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրենին հասցեագրված՝ կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների՝ Եվրոպայի խորհրդի խմբի («ԳՐԵԿՈ») կողմից 2016 թվականի հոկտեմբերին հրապարակված՝ Գնահատման 4-րդ փուլի զեկույցի 13-15-րդ հանձնարարականների կատարման վերաբերյալ,

- ՀՀ արտաքին գործերի նախարարին ներկայացված՝ ԱՄՆ աշխատանքային դեպարտամենտի 2016թ.՝ երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին զեկույցի պատրաստման վերաբերյալ,

- ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալին հասցեագրված՝ ԱՄՆ դեսպանության կողմից կազմված՝ Հայաստանում մարդու իրավունքների և կրոնական ազատությունների իրավիճակի հարցաշարի վերաբերյալ,

- ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարին ներկայացված՝ 2016 թվականի ընթացքում Եվրոպական Միության հետ համատեղ իրականացված ծրագրերի կատարման վերաբերյալ,

- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալին ներկայացված՝ ԵՄ «GSP+» առևտրային ռեժիմի դիտանցման գործընթացի չորրորդ փուլի շրջանակներում պատրաստված հայկական կողմի զեկույցի նախագծի վերաբերյալ,

- ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալին ներկայացված՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ համաշխարհային զեկույցի նախապատրաստման նպատակով ստացված՝ ՄԱԿ-ի՝ թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի հարցաշարի վերաբերյալ,

- ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալին ներկայացված՝ 2016 թվականի ընթացքում ատելության հողի վրա կատարված հանցագործությունների վերաբերյալ ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից մշակված հարցաշարի՝ ՀՀ դատախազության իրավասությանն առնչվող հարցադրումների վերաբերյալ,

- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալին ներկայացված՝ «Լրացում N 1-Աջակցություն ՀՀ կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին՝ Փուլ II» ԵՄ բյուջետային առաջարկության ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության իրավասությանն առնչվող հատուկ պայմանի իրականացման վերաբերյալ,

- ՀՀ արդարադատության նախարարին՝ կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) հանձնարարականների իրականացման վերաբերյալ:

Մասնավորապես, Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից 4-րդ գնահատման փուլի արդյունքում ընդունված զեկույցով ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ Հայաստանին տրվել էր 4 հանձնարարական. որոնց կատարման ուղղությամբ ձեռնարկվել են հետևյալ քայլերը.

ՀՀ Սահմանադրության 177-րդ հոդվածում, «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքի 63-րդ հոդվածում, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 13-րդ, 153-րդ և 162-րդ հոդվածներում ամրագրվել են համապատասխան երաշխիքներ՝ ուղղված ՀՀ գլխավոր դատախազի ընտրության, նշանակման և պաշտոնից ազատման գործընթացների թափանցիկությունը բարձրացնելուն և քաղաքական ազդեցությունը նվազագույնի հասցնելուն, այդ թվում՝ հիշյալ գործընթացներում արհեստավարժ, չեզոք (ոչ քաղաքականացված) փորձագետներ ներգրավելու ուղղությամբ:

«Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքի 23-րդ հոդվածում վերանայվել է էթիկայի հանձնաժողովի ձևավորման և անդամների ընտրության կարգը, համաձայն որի՝ դատախազ-անդամները մեծամասնություն են կազմում հանձնաժողովում՝ 4-3 հարաբերակցությամբ: Ընդ որում, էթիկայի հանձնաժողովի նախագահ հանդիսացող գլխավոր դատախազի տեղակալին և էթիկային հանձնաժողովի անդամ երեք իրավաբան-գիտնականի նշանակում է ՀՀ գլխավոր դատախազը, իսկ մյուս երեք դատախազ-անդամներն ընտրվում են վերադաս դատախազների կողմից:

Դատախազների նշանակման և առաջխաղացման ընթացակարգերը բարեփոխելու, այդ թվում՝ ՀՀ գլխավոր դատախազի հայեցողական լիազորությունները սահմանափակելու և դատախազի թեկնածուների հավակնորդներին հատուկ ու հստակ իրավական նորմերի հիման վրա դատարան դիմելու հնարավորություն տալու նպատակով, «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքի 38-րդ հոդվածում ամրագրվել է դրույթ, համաձայն որի՝ ցուցակում հայտատուին չընդգրկելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հայտատուի կողմից կարող է բողոքարկվել դատական կարգով:

Դատախազության համակարգում վարքագծի կանոնների, անաչառության և անկախության, շահերի բախման և կոռուպցիայի կանխարգելման ոլորտներում խորհրդատվական մեխանիզմի ներդրմամբ, որը հնարավորություն կտա դատախազներին բարձրացնելու իրենց իրազեկվածությունը հիշյալ ոլորտներում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում և «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքում ամրագրվել են համապատասխան դրույթներ: Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը համապատասխան մարմինների էթիկայի հանձնաժողովներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն: Իսկ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դատախազը կարող է դիմել էթիկայի հանձնաժողովին՝ դատախազի վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի մեկնաբանություններ ստանալու խնդրանքով:

Ընդ որում, այս դեպքում էթիկայի հանձնաժողովը հանդես է գալիս ոչ թե որպես կարգապահական, այլ խորհրդատվական մարմին: Արդյունքում, կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից ՀՀ դատախազության գործունեությանն առնչվող 4 հանձնարարականից 2-ը գնահատվել է որպես ամբողջությամբ կատարված, իսկ 2-ը՝ մասամբ կատարված:

Դատախազության կողմից արդեն իսկ քայլեր են ձեռնարկվել մասամբ կատարված հանձնարարականների լրիվ կատարումն ապահովելու ուղղությամբ:

2017թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվել է 58 ծառայողական ուսումնասիրություն՝ 64 դատախազի նկատմամբ: 16 դատախազի նկատմամբ հարուցվել է 16 կարգապահական վարույթ: Տույժի է ենթարկվել 13 դատախազ, որոնցից 6-ի նկատմամբ նշանակվել է «դիտողություն», իսկ 7-ի նկատմամբ՝ «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ:

Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի իրավակարգավորումների՝

- ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար 4 դատախազի նկատմամբ նշանակվել է «դիտողություն» տեսակի, իսկ 2 դատախազի նկատմամբ՝ «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ,

- իր լիազորություններն իրականացնելիս օրենքը կոպիտ կամ պարբերաբար խախտելու համար 2 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ,

- «Դատախազի վարքագծի կանոնագրքի» պահանջների էական խախտումներ թույլ տալու հիմքով 2 դատախազի նկատմամբ նշանակվել է «դիտողություն» տեսակի, իսկ 1 դատախազի նկատմամբ՝ «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ,

- օրենքով սահմանված՝ դատախազի պարտականությունները չկատարելու, այն է՝ պատշաճ կերպով մասնագիտական որակավորումը և գործնական հմտությունները չապահովելու համար 2 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ:

Համեմատության համար նշենք, որ 2014թ. իրականացվել է 22 ծառայողական ուսումնասիրություն՝ 32 դատախազի նկատմամբ, որոնցից տույժի է ենթարկվել 4-ը, 2015թ.՝ 30 դատախազի նկատմամբ կատարված 17 ծառայողական ուսումնասիրության արդյունքում տույժի է ենթարկվել 1 դատախազ: Իսկ 2016թ.-ին կատարված՝ 16 դատախազի նկատմամբ 14 ծառայողական ուսումնասիրության արդյունքում տույժի է ենթարկվել 1 դատախազ:

Նույն ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով անհատապես խրախուսվել է 73 դատախազ:

2017 թվականին դասային աստիճան է շնորհվել 62 դատախազի՝ այդ թվում, 21-ը արտահերթ՝ խրախուսման կարգով:

2017թ. ընթացքում ՀՀ դատախազության համակարգից իրենց անձնական դիմումների համաձայն ազատվել է 37 դատախազ, որոնցից 20-ը՝ կենսաթոշակի անցնելու կապակցությամբ:

Նույն ժամանակահատվածում դատախազի պաշտոնում նշանակվել է 42 անձ, որոնցից 22-ը ՀՀ արդարադատության ակադեմիայի շրջանավարտներ են, 19-ը՝ նախկին քննիչներ, իսկ 1-ը՝ 5 տարվա իրավաբանի ստաժով գիտությունների թեկնածու:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության դատախազությունում դատախազների հաստիքների թիվը եղել է 337, որոնցից թափուր՝ 6-ը:

9. ՀՀ զինվորական դատախազության գործունեության ոլորտ

2017թ. ընթացքում ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է **3416 դեպք**, նախորդ տարվա **3843-ի** դիմաց: Նվազում է արձանագրվել **427 դեպքով** կամ **11.1%**-ով: Արձանագրված դեպքերից 2207-ը կամ 64.6%-ը եղել են պատահարներ-զանցանքներ, 1207-ը կամ 35.3%-ը՝ հանցագործություններ, այդ թվում՝ 768-ը կամ 63.6%-ը՝ զինվորական, 439-ը կամ 36.4%-ը՝ այլ ընդհանուր, իսկ 2 դեպքի կամ 0.1%-ի հանգամանքները 2018թ. հունվարի 1-ի դրությամբ դեռևս պարզված չեն եղել:

Նախորդ տարվա համեմատ պատահարները նվազել են 233-ով կամ 9.5%-ով, հանցագործությունները՝ 187-ով կամ 13.4%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործություններն աճել են 87 դեպքով կամ 12.8%-ով, իսկ այլ հանցագործությունները նվազել՝ 274-ով կամ 38.4%-ով: Եթե 2016թ. ընթացքում արձանագրված 1394 հանցագործությունից 483-ը կամ 34.6%-ն են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 117-ը՝ ծանր, իսկ 366-ը՝ առանձնապես ծանր, ապա 2017թ. արձանագրված 1207 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել ընդամենը 191-ը կամ 15.8%-ը, որոնցից 111-ը՝ ծանր, իսկ 80-ը՝ առանձնապես ծանր: Այսինքն՝ նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործությունները նվազել են 6-ով կամ 5.1%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 286-ով կամ 78.1%-ով:

2017թ. արձանագրված 80 առանձնապես ծանր հանցագործություններից 21-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 4-ը՝ զինծառայողների կողմից կատարված սպանության, 53-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 1-ը՝ համածառայակցի կողմից կատարված սպանության փորձի, 1-ը՝ զենք-զինամթերքի առանձնապես խոշոր չափերի հափշտակության դեպքեր են:

2017թ. ընթացքում ծառայության հետ կապված մահացել է 56 զինծառայող, որոնցից՝ 23-ը՝ հակառակորդի կողմից սպանության, 3-ը՝ սպանության, 4-ը՝ ականի պայթյունի, 4-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման, 10-ը՝ ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու, 4-ը՝ հիվանդության, 4-ը՝ ավտովթարի, 4-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով:

2016թ. ընթացքում ծառայության հետ կապված մահացել է 140 զինծառայող, 23 աշխարհազորային:

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել 1813 զինծառայող (2016թ.՝ 1830), այսինքն՝ արձանագրվել է նվազում 17-ով կամ 0.9%-ով: Այդ թվում՝ 102 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք, 1539-ը՝ միջին ծանրության և թեթև, իսկ 11-ի մարմնական վնասվածքների ծանրության աստիճանն ամփոփումների պահին դեռևս պարզված չի եղել:

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում, զինվորական հանցագործությունների մեջ առավել տարածված են մնում զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված (ՀՀ քրեական օրենսգրքի 356-360-րդ հոդվածներ), ինչպես նաև զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված (ՀՀ քրեական օրենսգրքի 361-364 հոդվածներ) հանցագործությունները: Եթե 2016թ. ընթացքում արձանագրվել է նման հանցագործությունների 378 դեպք, ապա 2017թ. դրանց թիվը կազմել է 441:

Համեմատական վերլուծություն կատարելով և համադրելով նախորդ տարվա ընթացքում արձանագրված առանձնապես ծանր հանցագործությունների վիճակագրական տվյալները հաշվետու ժամանակաշրջանի հետ, կարելի է փաստել, որ առկա է առանձնապես ծանր հանցագործությունների կտրուկ՝ 78.1% նվազում:

Վիճակագրական այս տվյալները, սակայն, ըստ էության համադրելի չեն նախորդ տարվա ընթացքում արձանագրված առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերի արձանագրման վիճակագրության հետ, քանի որ նախորդ տարվա դեպքերը պայմանավորված են եղել ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին և դրան հաջորդող ժամանակահատվածում հակառակորդի կողմից կատարված հանցագործություններով:

Ինչ վերաբերում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների աճին, ապա հարկ է նշել, որ դա մեծապես պայմանավորված է դատախազական պատշաճ հսկողության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ինչպես հրամանատարական, այնպես էլ ստորադաս անձնակազմի հետ տարվող ամենօրյա բացատրական աշխատանքների արդյունքում ձևավորված փոխվստահության արդյունքում դեպքերը և պատահարները չթաքցնելու, դրանք բարեխղճորեն գրանցելու հանգամանքով: Յուրաքանչյուր դեպքին արագ արձագանքելը և համապատասխան ընթացք տալը կանխարգելիչ նշանակություն է ունեցել հատկապես այն առումով, որ հետագայում ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունները չվերաճեն ավելի ծանր հանցագործությունների:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2017թ. արձանագրված հանցագործության յուրաքանչյուր դեպքով զինվորական իրավապահ մարմինների կողմից (դատախազություն, քննչական և ՌՈ ստորաբաժանումներ) արվել է հնարավոր ամեն ինչ, որպեսզի կատարվի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն, կատարված հանցագործությունները բացահայտվեն ամբողջությամբ և մեղավոր անձինք ենթարկվեն քրեական պատասխանատվության ու պատժի:

Առանձնակի կարևորվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների և զորամասերի միջին ու բարձր հրամանատարական կազմի հետևողականությունը:

Սպանության, սպանության փորձի, ինքնասպանության, առողջությանը ծանր վնաս հասցնելու, ստորադասի նկատմամբ բռնի գործողության կամ դրա սպառնալիքի ցանկացած դեպքով քննության առարկա է դարձել նաև համապատասխան պաշտոնատար անձանց կողմից դրանք կանխելու հնարավորության և, առհասարակ, կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու հանգամանքը:

Նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների պահանջով հնարավորինս վերհանվել են նշված բնույթի հանցագործություններ ծնող պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները, ձեռնարկվել և ձեռնարկվում են դատախազական ներգործության միջոցներ (ներկայացվել են միջնորդագրեր, հաղորդումներ, դատախազները մասնակցել են դրանց քննարկումներին, ներկայացվել են գործնական առաջարկություններ՝ դրանց կանխարգելման ուղղությամբ և այլն):

Բացի դրանից, որպես քննարկվող խմբի հանցագործությունների կանխարգելման արդյունավետ միջոց, կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից հաճախ զորամասերում, ինչպես սպայական անձնակազմի, այնպես էլ ժամկետային զինծառայողների շրջանում անցկացվել են զրույց-զեկուցումներ, դասախոսություններ, տրվել են պարզաբանումներ, կատարվել են օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների, հրահանգների մեկնաբանություններ և վերլուծություններ:

Նախապատրաստված բազմաթիվ նյութերի և հարուցված քրեական գործերի վերլուծությունների համաձայն՝ եզակի չեն դեպքերը, երբ արձանագրված հանցագործությունները հետևանք են սպայական անձնակազմի կողմից կատարված հանցագործությունների ու այլ իրավախախտումների, ինչպիսիք են՝ զինծառայողների նկատմամբ համածառայակիցների, կրտսեր և ավագ սպայական կազմի ներկայացուցիչների կողմից դրսևորվող ոչ կանոնագրքային վարքագծի տարաբնույթ դրսևորումները, որոնք երբեմն հանգեցրել են զորամասը կամ ծառայության վայրը լքելուն, հետևաբար դրանց իրական պատճառներն ու կատարմանը նպաստող պայմանները բացահայտելու, վեր հանելու, հանցագործություն կատարած զինծառայողներին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու դեպքում զգալիորեն կկրճատվեն ու կնվազեն վերը հիշատակված բնույթի հանցագործությունները:

Հարկ է փաստել նաև, որ հաշվետու ժամանակահատվածում հանցավորության մակարդակը սպաների շրջանում նվազել է. եթե 2016թ. ընթացքում արձանագրվել է սպաների կողմից կատարված հանցագործության 268 դեպք, ապա 2017թ.՝ 258, այսինքն՝ նվազում է արձանագրվել 10-ով կամ 3.7%-ով:

Վերլուծությունը ցույց է տվել, որ 2017թ. արձանագրված հանցագործություն կատարած զինծառայողների թվաքանակում սպաների տեսակարար կշիռը կազմում է 23.7%

(2016թ.՝ 24.1%), ենթասպաներինը՝ 2.3% (2016թ.՝ 2.4%), պայմանագրային զինծառայողներինը՝ 18.7% (2016թ.՝ 21.7%), ժամկետային զինծառայողներինը՝ 55.2% (2016թ.՝ 51.8%):

Կատարված վերլուծություններով պարզվել է նաև, որ 2017թ. ընթացքում ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական մարմինների վարույթում քննվել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված 2367 քրեական գործ, որոնցից 275-ը փոխանցված է եղել նախորդ տարվանից, 1392-ը հարուցվել է 2017թ., 3-ը ստացվել է այլ մարմիններից, 697-ը՝ վերսկսվել է 2017թ.:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական գործերից 934-ի նախաքննությունն ավարտվել է: Դրանցից 26-ը մեղադրական եզրակացություններով ուղարկվել են դատարան, 908-ի վարույթները կարճվել են: Ընդ որում՝ 255-ի վարույթները կարճվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 451-ինը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի (իրադրության փոփոխման), իսկ 202-ինը՝ այլ հիմքերով: Իրադրության փոփոխման հիմքով վարույթները կարճված քրեական գործերից 236-ի վարույթները կարճվել են «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ, 191-ինը՝ զորակոչիկի զինված ուժեր զորակոչվելու կապակցությամբ, 24-ինը՝ այլ հիմքերով: 1123 քրեական գործերով վարույթները կասեցվել են, 5 քրեական գործ ուղարկվել է այլ մարմիններ, 303 քրեական գործերի նախաքննությունն ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակահատվածում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու վերաբերյալ նախապատրաստվել է 57 նյութ, որոնցով մերժվել է քրեական գործի հարուցումը: Դրանցից 43-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 14-ը՝ այլ հիմքերով:

Զինվորական դատախազության դատախազների ամենօրյա առանձնակի հսկողության տակ են գտվել հաշվետու ժամանակահատվածում արձանագրված կոռուպցիոն բնույթի հանցագործությունները և դրանց նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության իրականացումը:

Անդրադառնալով այդ հանցագործությունների դեպքերի շարժընթացին ու վիճակագրական տվյալներին՝ հարկ է նշել, որ 2017թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների 116 դեպք: ՀՀ զինվորական դատախազության դատախազների դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության բոլոր դեպքերի վերաբերյալ նախապատրաստվել են նյութեր (2016թ.՝ 57): Նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել 59 դեպքով, կամ 100 %-ով:

Նախապատրաստված նյութերից 1-ով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ ոչ արդարացնող հիմքով (2016թ.՝ 4), իսկ 115-ով հարուցվել են քրեական գործեր (2016թ.՝ 53):

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2017թ. ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական մարմինների վարույթ է ընդունվել նաև նախորդ՝ 2016թ. փոխանցված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով հարուցված, անավարտ մնացած 34 քրեական գործ (2016թ.՝ 31), վարույթը վերսկսված 8 քրեական գործ (2016թ.՝ 1), այլ մարմիններից ստացված 7 քրեական գործ (2016թ.՝ 12), քրեական գործերից անջատված մասեր՝ 7 (2016թ.՝ 8): Ընդհանուր առմամբ 2017թ. ընթացքում վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի 171 քրեական գործ (2016թ.՝ 105), որոնցից 88-ի նախաքննությունն ավարտվել է (2016թ.՝ 67): Դրանցից 52-ով վարույթները կարճվել են (2016թ.՝ 36), այդ թվում՝ 39-ով՝ արդարացնող (2016թ.՝ 13), 13-ով՝ ոչ արդարացնող (2016թ.՝ 23) հիմքերով:

36 քրեական գործ 72 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2016թ.՝ 31 գործ, 68 անձ):

4 քրեական գործով վարույթները կասեցվել են (2016թ.՝ 2), ընդ որում՝ 1-ով վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (2016թ.՝ 2), 3-ով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

4 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության (2016թ.՝ 2), 12-ը՝ միացվել են մեկ վարույթում (2016թ.՝ 1), 63 քրեական գործի նախաքննությունն ընթացքի մեջ է, և դրանք փոխանցվել են 2018թ. (2016թ.՝ 32):

Կատարված ուսումնասիրությունն ու վերլուծությունը վկայում են այն մասին, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների արձանագրման աճը պայմանավորված է ինչպես կոռուպցիոն դրսևորումների դեմ ձևավորվող հասարակական անհանդուրժողականությամբ, նմանօրինակ դեպքերի բացահայտմանն ուղղված տարրաբնույթ միջոցառումների իրականացմամբ, այնպես էլ կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը հստակեցնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի 2017թ. հունվարի 19-ի թիվ 3 հրամանով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների ցանկի սահմանմամբ:

Կոռուպցիոն հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել գործուն միջոցներ՝ զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում նյութական միջոցների ստացման, պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Բացի դրանից, անհրաժեշտ է ապահովել նյութական միջոցների սահմանված կարգերին համապատասխան հաշվառումը՝ զերծ մնալով ձևական փաստաթղթավորման արատավոր դրսևորումներից, ակտիվացնել համագործակցությունը շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, բաց հասարակության խնդրով մտահոգ անհատների հետ:

Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ 2017թ. ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են 57.458.594 դրամի նյութական վնասի պատճառման փաստեր (2016-54.734.419 դրամ), որից մինչդատական վարույթում վերականգնվել է 51.607.924 դրամը (2016թ.՝ 4.506.578դրամ):

2017 թվականին զինվորական դատախազության դատախազների կողմից էական աշխատանքներ են իրականացվել նաև նախորդ տարիներին կատարված հանցագործությունների բացահայտման և հետախուզական աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացման, առկա թերությունների հայտնաբերման և դրանց վերացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ՔԿ ԶՔԳՎ քննչական ստորաբաժանումների վարույթներում առկա է եղել նախորդ տարիներից փոխանցված, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցված 902 քրեական գործ: 2017թ. ընթացքում նույն հիմքով կասեցվել է ևս 56 քրեական գործ: Կատարված վերլուծությամբ պարզվել է, որ 2017թ. ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) հիմքով կասեցված քրեական գործեր չեն վերսկսվել, նախկինում կատարված հանցագործությունների բացահայտման դեպքեր չեն արձանագրվել:

2017թ. ընթացքում, ղեկավարվելով ՀՀ զինվորական դատախազի 2017թ. հունիսի 12-ի թիվ 13 կարգադրության և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, ՀՀ զինվորական դատախազության սպասարկման տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ ՌՈ բաժիններում և բաժանմունքներում ուսումնասիրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցված քրեական գործերով կազմված օպերատիվ-փնտրողական գործերը՝ հանցանք կատարած անձանց բացահայտման ուղղությամբ դատախազական գործունեության կազմակերպման միասնական կառուցակարգեր ձևավորելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ուսումնասիրության ընթացքում հետազոտման առարկա են դարձել հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզելու նպատակով իրականացված միջոցառումների՝ օպերատիվ հարցումների, օպերատիվ տեղեկությունների ձեռքբերման նպատակով տարբեր իրավասու մարմիններին հասցեագրված գրությունների իրավական հիմքերը, դրանց կատարման անհրաժեշտությունը, ժամանակին կատարված լինելը և դրանց արդյունքում ստացված տեղեկությունների հավաստիությունը:

Հարկ է նշել, որ ՀՀ գլխավոր դատախազի 2017թ. մայիսի 4-ի թիվ 39 հրամանի հիման վրա կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից

մեկ անգամ ևս ուսումնասիրվել է հետախուզական աշխատանքների կազմակերպման և իրականացման վիճակը:

Հայտնաբերված թերությունները, բացթողումներն ու խախտումները վերացնելու նպատակով հանձնարարություններ են տրվել ՀՀ ՊՆ ՌՈ և ՀՀ ՔԿ ԶՔԳՎ կայազորների քննչական բաժիններին՝ հետախուզական գործերը կազմելու և վարելու հետ առնչվող օրենսդրական և նորմատիվ այլ ակտերի պահանջների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով միջոցներ ձեռնարկելու համար:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.

2017թ. ընթացքում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումների և հաղորդումների ընդունման, գրանցման, հաշվառման ու լուծման մասին օրենքի և մյուս համապատասխան իրավական ակտերի, հանձնարարականների (ցուցումների) պահանջների կատարումն ապահովելու նպատակով կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից հետաքննության մարմիններում անցկացվել է 394 ստուգում և ուսումնասիրություն՝ նախորդ տարվա 494-ի դիմաց:

Կատարած ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում արձանագրվել է իրավախախտումների 4 դեպք (2016թ.՝ 4), 8 անձի վերաբերյալ դատախազի կողմից ներկայացվել են միջնորդություններ՝ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ: Արդյունքում՝ 2 անձ ենթարկվել է կարգապահական տույժերի:

2017թ. ընթացքում ՀՀ զինվորական դատախազության դատախազների հսկողությամբ նախապատրաստվել և ավարտվել է 5492 նյութ (2016թ.՝ 6334), որոնցից 3021-ը՝ քննչական (2016թ.՝ 3184), 2471-ը՝ ՌՈ ստորաբաժանումների և զորամասերի կողմից (2016թ.՝ 3150):

Հետաքննության մարմինների կողմից նախապատրաստված նյութերով կայացված մերժման 2321 որոշումից 6-ը վերացվել է և հարուցվել են քրեական գործեր (2016թ.՝ 4):

Հարուցված 6 քրեական գործից 4-ով վարույթները կարճվել են, 1-ը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 1-ով նախաքննությունն ընթացքի մեջ է:

2017թ. ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնի դատախազների կողմից վերահսկողություն է իրականացվել կայազորների զինվորական դատախազություններից ստացված 534 նյութով (2016թ.՝ 631) կայացված քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների օրինականության նկատմամբ: Բոլոր նյութերով կայացված որոշումների օրինականությունը վերստուգվել և հաստատվել է:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ զինվորական դատախազության մարմինների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ բաժինների վարույթում քննվող 4310 քրեական գործի նկատմամբ (2016թ.՝ 4818):

2006 քրեական գործի նախաքննությունն ավարտվել է (2016թ.՝ 2262/: Ավարտված քրեական գործերից 642-ը՝ 953 անձի նկատմամբ (2016թ.՝ 510 գործ՝ 807 անձի նկատմամբ) մեղադրական եզրակացությամբ, 2 գործ 2 անձի նկատմամբ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու որոշմամբ (2016թ.՝ 3 գործ՝ 3անձի նկատմամբ) ուղարկվել են դատարաններ, 1362 քրեական գործով վարույթները կարճվել են (2016թ.՝ 1749), 1328 քրեական գործով վարույթները կասեցվել են (2016թ.՝ 1463), 64 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության (2016թ.՝ 195), 162-ը միացվել է այլ գործերի (2016թ.՝ 265), 719-ը՝ փոխանցվել 2018թ. (2016թ.՝ 630):

2017թ. ընթացքում քրեական գործերով վարույթները կարճելու՝ 18 (2016թ.՝ 6) որոշում վերացվել է:

Դատարանում մեղադրանքի պաշտպանության և դատարանի դատավճիռների, վճիռների, որոշումների բողոքարկման ոլորտ.

Զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության դատախազների կողմից մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 642 քրեական գործ 953 անձի վերաբերյալ (2016թ.՝ 513 գործ 810 անձի վերաբերյալ): Դատարան ուղարկված բոլոր գործերն էլ ընդունվել են վարույթ:

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ ընդհանուր առմամբ 552 քրեական գործ 854 անձի վերաբերյալ քննվել է դատարանում, որոնցից 529 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 818 անձ (2016թ.՝ 451 գործ, 686 անձ):

Դատարանների որոշումներով 11 քրեական գործ 16 անձի վերաբերյալ կարճվել է (2016թ. 15 գործ, 21 անձ): Բացի այդ, 3 անձ պատժի կրումից ազատվել է համաներման ակտի կիրառմամբ (2016թ.՝ 1): 10 քրեական գործով 12 անձի վերաբերյալ և 2 առանձին քրեական գործով 6 անձի մասով կայացվել է արդարացման դատավճիռ (2016թ.՝ 7 գործ, 9 անձ), իսկ 2 քրեական գործով 2 անձի նկատմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ (2016թ.՝ 4 գործ 4 անձ):

Դատապարտված 818 անձից 750-ը եղել է զինծառայող (2016թ.՝ 610): Դատապարտված զինծառայողներից 177-ը եղել է սպա (2016թ.՝ 165), 573-ը՝ պայմանագրային և ժամկետային զինծառայող (2016թ.՝ 445): Նախորդ տարվա համեմատությամբ 140-ով ավելացել է դատապարտված զինծառայողների թիվը: Զինծառայողների հետ մեկտեղ դատապարտվել է նաև 68 քաղաքացիական անձ, որոնցից 2-ը կին (2016թ.՝ 76 քաղաքացիական անձ, որոնցից 4-ը՝ կին):

2017թ. ՀՀ զինվորական դատախազությունում ուսումնասիրվել և ամփոփվել են 2016թ. ընթացքում հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածների կիրառման դեպքերը՝ ինչպես մեղադրողների միջնորդությամբ, այնպես էլ դատարանների նախաձեռնությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սկսած 2013 թվականից հիմնականում աճել է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառման, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման դեպքերը: Եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառման աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման կտրուկ աճը պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքում «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների» բաժնում 2013թ. ապրիլի 30-ին ՀՀ ԱԺ-ի կողմից կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում որոշ զինվորական հանցագործությունների սանկցիաների խստացմամբ:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայից հանվել է «կալանք» պատժատեսակը, ինչն այդ հոդվածով հանցագործություն կատարած զինծառայողների արարքին համաչափ պատժատեսակ էր: Բացի դրանից, 2016թ. նոյեմբերից կազմալուծվել է կարգապահական գումարտակը, հետևաբար այդ պատժատեսակը ևս չի նշանակվում զինծառայողների նկատմամբ: Նշված հոդվածում մնացել է միայն ազատազրկում պատժատեսակը, ինչն անհամաչափ պատիժ է այդ արարքի համար և հանգեցնում է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերի աճի:

ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիաներով նախատեսված է միայն 4-8 տարի ժամկետով ազատազրկում, ընդ որում՝ նշված հոդվածների 3-րդ մասի դիսպոզիցիայով նախատեսված են նաև թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերը, ինչը խիստ անհամաչափ պատիժ է կատարված արարքի և դրա հանրային վտանգավորության աստիճանի ու բնույթի հետ համեմատած: Այդ է պատճառը, որ նշված հոդվածներով հանցանք կատարած անձինք, որպես կանոն, ենթարկվել են պայմանական դատապարտության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ:

Վերլուծությունը ցույց է տվել, որ 2013-2017թթ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ և 358.1-րդ հոդվածների 3-րդ մասերով դատարաններում 323 անձի նկատմամբ ավարտված քրեական գործերով 305 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և պատիժը պայմանականորեն չի կիրառվել, դրանցից 170-ի նկատմամբ՝ մեղադրողների միջնորդությամբ, 135-ի՝ դատարանների նախաձեռնությամբ:

Ընդ որում, դատարանների նախաձեռնությամբ կիրառված քրեական գործերով բերվել է 127 վերաքննիչ բողոք, որոնցից 3-ը բավարարվել է, 120-ը՝ մերժվել, 1-ը հետ է վերցվել, 3-ը ընթացքի մեջ է:

Նշված հոդվածներով ռեալ ազատազրկման է դատապարտվել ընդամենը 18 անձ:

Հարկ է փաստել նաև, որ դատարաններում քննված և ավարտված քրեական գործերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը ցույց է տվել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ, 358.1-րդ և 359-րդ հոդվածներով 2013թ. քննվել և ավարտվել է 262 քրեական գործ՝ 466 անձի վերաբերյալ, որոնցից 135-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենգրքի 70-րդ հոդվածը:

2014թ. քննարկվող բնույթի հանցագործությունների վերաբերյալ քննվել և ավարտվել է 296 քրեական գործ՝ 449 անձի վերաբերյալ, որոնցից 273-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված է կիրառվել 138-ով ավելի (100 %) անձանց նկատմամբ:

2015թ. դատարաններում ավարտվել է 289 քրեական գործ՝ 420 անձի վերաբերյալ, որոնցից 311-ի նկատմամբ կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

2016թ. դատարաններում ավարտվել է 184 քրեական գործ՝ 285 անձի վերաբերյալ, որոնցից 207-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

2017թ. դատարաններում ավարտվել է 254 քրեական գործ՝ 400 անձի վերաբերյալ, որոնցից 296-ի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013թ. համեմատ, 2017թ. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը ավելացել է 161-ով կամ 100%-ով, 2014թ. համեմատ՝ 23-ով կամ 0.4%-ով, 2016 թ. համեմատ՝ 89-ով կամ 43%-ով, 2015թ. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման նվազում է արձանագրվել 15-ով կամ 4.8%-ով:

Ավելին՝ կատարված վերլուծությամբ պարզվել է նաև, որ 2013-2017 թվականների ընթացքում արձանագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ, 358.1-րդ, 359-րդ հոդվածների հատկանիշներ պարունակող հանցագործությունների դեպքերի աճ:

Այսպես, եթե 2013 թվականին արձանագրվել է վերը նշված հանցագործությունների 290 դեպք, ապա 2014 թվականին դրանց թիվը կազմել է 353, այսինքն՝ աճ է արձանագրվել 63 դեպքով կամ 21.7 %-ով:

2015 թվականին արձանագրվել է 349, 2016 թվականին 348, 2017 թվականին 426 դեպք: 2017 թվականին արձանագրված դեպքերի քանակը համեմատելով նախորդ տարիների արձանագրված դեպքերի հետ, հարկ է փաստել, որ 2013 թվականի համեմատ, 2017 թվականին քննարկվող խմբի հանցագործություններն աճել են 136-ով, կամ 46.9%-ով, 2014 թվականի համեմատ՝ 73-ով կամ 20.7 %-ով, 2015 թվականի համեմատ՝ 77-ով կամ 22.1%-ով, 2016 թվականի համեմատ՝ 78-ով կամ 22.4%-ով:

Պետական շահերի պաշտպանության ոլորտ.

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից 2017թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով կատարվել է **384** ուսումնասիրություն (2016թ.՝ 541/, որոնցից 255-ը՝ թիկունքային, 59-ը՝ սպառազինության, 25-ը՝ ռազմաբժշկական, 11-ը՝ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման, 3-ը՝ ֆինանսական ծառայությունների գծով, իսկ 31-ը՝ այլ ոլորտներում:

Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել է **253** խախտում (2016թ.՝ 326), ուղարկվել է **62** հաղորդում (2016թ.՝ 94): Պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու վերաբերյալ 2017թ. ընթացքում տրվել է **178** նախազգուշացում (2016թ.՝ 162):

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հարցումներ, պահանջվել են ՀՀ պաշտպանության նախարարության և մատակարար կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի ժամանակացույցերի խախտումների վերաբերյալ տվյալները: Գրություն է հասցեագրվել ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ՝ հաշվարկված տույժ-տուգանքները սահմանված կարգով գանձելու վերաբերյալ:

2017թ. ընթացքում մատակարար տնտեսվարող սուբյեկտների կողմից ՀՀ ՊՆ-ի հանդեպ ունեցած չկատարված կամ ժամանակացույցի խախտմամբ կատարված պայմանագրային պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է **1.264.422.953 ՀՀ դրամ:** Նույն ժամանակահատվածի համար ՀՀ ՊՆ-ի հանդեպ ունեցած պայմանագրային պարտավորությունները ժամանակին չկատարելու համար հաշվարկված տույժերի, տուգանքների և տուժանքների ընդհանուր գումարը կազմել է **228.664.930 ՀՀ դրամ**, որը վերականգնելու անհրաժեշտության մասին պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից գրավոր նախազգուշացումից հետո, 31.12.2017թ. ստացված տվյալների համաձայն, գանձվել է **190.026.890 ՀՀ դրամ**, իսկ մնացած 38.638.040 ՀՀ դրամը գտնվել է վերականգնման փուլում:

2017թ. ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված՝ պետությանը պատճառված վնասի չափը կազմել է համապատասխանաբար՝ **106.700.078** և **205.414.381 ՀՀ դրամ** (ընդհանուր՝ **312.114.459 ՀՀ դրամ),** որից դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ վերականգնվել է համապատասխանաբար՝ **13.365.775 ՀՀ դրամ** և **91.115.255 ՀՀ դրամ** (որից 4.249.381 ՀՀ դրամը նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված վնասներից**),** ընդհանուր՝ **104.481.030 ՀՀ դրամ:**

Այսպիսով, հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված՝ պետությանը պատճառված վնասի չափը կազմել է **1.805.202.342 ՀՀ դրամ** (2016թ.՝ 2.448.659.075 դրամ), իսկ վերականգնված վնասի չափը՝ **294.507.920 ՀՀ դրամ** (2016թ.՝ 354.011.881 դրամ):

2017թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրություններով նախապատրաստվել է **118** նյութ (2016թ. ՝ 169): Հարուցվել է **47** քրեական գործ (2016թ.՝ 70) և **8** հայց /2016թ.՝ 1):

2017թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցվել է **8** հայց, որոնցից 4-ը՝ քաղաքացիական և 4-ը՝ քրեական դատավարության կարգով: Հաշվետու ժամանակաշրջանում հարուցված հայցերով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 35.145.387 ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքացիական դատավարության կարգով հարուցվել է 4 հայց՝ 19.034.050, 625. 000, 918.000 և 1.448.010 ՀՀ դրամ վնաս բռնագանձելու պահանջների վերաբերյալ: Բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 22.025.060 ՀՀ դրամ:

Բոլոր չորս հայցադիմումները դատարանի կողմից ընդունվել են վարույթ: Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու նպատակով, երեք հայցադիմումով դատարան են ներկայացվել հայցագնի չափով պատասխանողներին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու վերաբերյալ միջնորդություններ, որոնք բավարարվել են: Հայցադիմումներից 2-ը՝ 19.034.050 և 625. 000 ՀՀ դրամ վնասը բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել են: Պատճառված վնասները դեռևս չեն վերականգնվել: 918.000 ՀՀ դրամ վնասը բռնագանձելու պահանջի մասին հայցադիմումը դեռևս չի քննվել: 1.448.010 ՀՀ դրամ վնասը բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով պատասխանող կողմն ամբողջությամբ կամովին վերականգնվել է պետությանը պատճառված 1.448.010 ՀՀ դրամ վնասը, իսկ քաղաքացիական գործը կարճվել է՝ դատախազի կողմից հայցից հրաժարվելու հիմքով:

Հաշվետու ժամանակաշրջանում քրեական դատավարության կարգով հարուցվել է 4 հայց՝ 1.911.122, 88.580, 8. 476. 000 և 2. 644. 625 ՀՀ դրամ վնաս բռնագանձելու պահանջների վերաբերյալ: Բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 13.120.327 ՀՀ դրամ:

1.911.122 և 88.580 ՀՀ դրամ վնասը բռնագանձելու պահանջի մասին հայցադիմումներն ամբողջությամբ բավարարվել են, սակայն դատական ակտերը պատժի մասով բողոքարկվել են վերաքննության կարգով և պատճառված վնասը դեռևս վերականգնված չէ: Առաջին հայցի դեպքում քրեական գործի նախաքննության ընթացքում, որպես հայցի ապահովման միջոց, մեղադրյալների գույքի վրա կալանք դնելու մասին որոշում է կայացվել: 8. 476. 000 ՀՀ դրամ վնասը բռնագանձելու հայցին դատարանը չի

անդրադարձել, իսկ քրեական գործը կարճվել է: 2. 644. 625 ՀՀ դրամ վնասը բռնագանձելու պահանջի մասին հայցադիմումը դեռևս չի քննվել:

10. Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման ոլորտ

Ֆիզիկական անձանց, իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների աշխատակիցների կողմից կատարված հանցագործությունների, պետության շահերի, օրենքով նախատեսված դեպքերում՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, օրինականության խախտումների մասին դիմումների, բողոքների և առաջարկությունների (այսուհետ՝ դիմում), պետական մարմինների պաշտոնատար անձանց գրագրության սահմանված ժամկետներում արդյունավետ քննարկման, ինչպես նաև ՀՀ դատախազությունում քաղաքացիների և այլ անձանց ընդունելության հետ կապված աշխատանքները կազմակերպվել են՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը և ղեկավարվել «Դատախազության մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը հաստատելու մասին» N 59 հրամանով հաստատված կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

2017թ. ՀՀ դատախազությունում ստացվել է 8967 դիմում-բողոք, որոնցից 1768-ը եղել է կրկնակի, 720-ը բավարարվել է, 1377-ը մերժվել է, 2747-ին տրվել է պարզաբանում, 275-ը թողնվել է անհետևանք, 10-ը վերադարձվել է դիմումատուին, 58 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է, 240 դիմումի քննարկում մնացել է անավարտ, 1 դիմումի քննարկման արդյունքում հարուցվել է քրեական գործ:

2017 թվականի ընթացքում դատախազների կողմից կազմակերպվել է քաղաքացիների 2051 ընդունելություն (2016թ.՝ 2204), որոնցից 952-ը (2016թ.՝ 155) **ՀՀ գլխավոր դատախազությունում:**

Այդ թվում՝

1) ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ կազմակերպվել է 64 (2016թ.՝ 15) ընդունելություն:

2) ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերի, վարչությունների պետերի տեղակալների, դատախազների մոտ՝ 144 ընդունելություն (2016թ.՝ 56):

3) 744 քաղաքացի (2015թ.՝ 84) ընդունվել է ՀՀ դատախազության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնում:

Ընդունելության ներկայացած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պատշաճ պարզաբանումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են ընդունելություններ դատավարական հսկողություն իրականացնող դատախազների և նրանց վերադասների մոտ, դիմումներն ուղարկվել են դատախազության

կառուցվածքային ստորաբաժանումներ կամ այլ մարմին՝ ըստ ենթակայության ընթացքը լուծելու և քաղաքացիներին պատասխանելու համար:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության թափանցիկությունն ու կանխատեսելիությունը, ինչպես նաև վարույթի մասնակիցների իրավունքների պատշաճ պաշտպանությունն ապահովելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով սահմանվել են քաղաքացիների ընդունելության կարգն ու պայմանները, հստակեցվել են դատախազների նախաձեռնությամբ քաղաքացիների ընդունելության ընթացակարգերը, դատախազներին հանձնարարվել է ավելի հաճախ կազմակերպել վարույթի մասնակիցների, նրանց ներկայացուցիչների ընդունելություն՝ անհրաժեշտության դեպքում անձամբ ցուցաբերելով նախաձեռնություն:

ՀՀ դատախազությունն էապես կարևորելով իր գործունեության հրապարակայնության ապահովումը, ակտիվացրել է աշխատանքները նաև դատախազության ամենօրյա գործունեության լուսաբանման ոլորտում:

Առաջնային համարելով հանցավորության դեմ պայքարում, ինչպես նաև քրեական հետապնդման և հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովման շրջանակներում ՀՀ դատախազության գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածության ապահովումն ու դատախազության նկատմամբ հանրային վստահության մակարդակի բարձրացումը, իրականացվել է լայն հասարակությանը և թիրախավորված մասնագիտական շրջանակներին ուղղված առավել նախաձեռնողական տեղեկատվական քաղաքականություն: Դրան համահունչ, քայլեր են ձեռնարկվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ գործընկերային հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Այս աշխատանքները բխել են 2017թ. ընթացքում ՀՀ դատախազության կողմից նախանշված առաջնահերթություններից:

Մասնավորապես՝ հանրության իրազեկվածության ապահովման առումով առաջնային է համարվել հանրապետությունում հանցավորության ընդհանուր վիճակի, դինամիկայի վերաբերյալ կիսամյակային կտրվածքներով վիճակագրական տվյալների անհրաժեշտ մեկնաբանություններով տրամադրումը՝ ինչպես պաշտոնական հաղորդագրությունների տարածման, այնպես էլ առանձին հեռուստատեսային ռեպորտաժների պատրաստմամբ և թողարկմամբ:

Հաղորդագրությունների միջոցով անհրաժեշտ տեղեկատվություն է փոխանցվել հանրային առավել մեծ վտանգավորություն և հնչողություն ունեցող հանցատեսակներով, ինչպես նաև սոցիալական նշանակության ոլորտներում կատարված հանցագործությունների դեպքերով կոնկրետ քրեական գործերի հարուցման, դրանց նախաքննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Դատախազության պաշտոնական հրապարակումներում հատուկ ուշադրություն է դարձվել հանցագործությունները ծնող պատճառների և պայմանների վերացման ուղղությամբ դատախազների կողմից պետական և համայնքային իշխանության մարմիններին հասցեագրված միջնորդագրերի, հաղորդումների, այդ նախաձեռնությունների հետևանքների, արդյունքների մասին հանրային իրազեկմանը:

Ընդ որում, ՀՀ դատախազությունը չի բավարարվել միայն օպերատիվ հաղորդագրությունները պաշտոնական կայք-էջում տեղադրելով, այլ դատախազության ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցել են ամենատարբեր ձևաչափերով, այդ թվում՝ նաև ԶԼՄ-ներով կազմակերպվող թեմատիկ քննարկումներին, բանավեճերին, հեռուստատեսային և ռադիոհաղորդումներին (մասնավորապես, դատախազության ներկայացուցիչները մասնակցել են համացանցային, հեռուստատեսային և ռադիոհեռարձակում ունեցող 37 հաղորդումների), որոնց ընթացքում հանդես են եկել քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ ՀՀ դատախազության դիրքորոշումներն արտահայտող և հիմնավորող համապատասխան մեկնաբանություններով:

Առավել թիրախավորված և հետևողականորեն լուսաբանվել են հատկապես կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, դրանց վերաբերյալ քննվող քրեական գործերով կոռուպցիոն հանցագործությունների առերևույթ կատարման մեջ մեղադրվող պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցված քրեական հետապնդումների՝ ինչպես կոնկրետ դեպքերը, այնպես էլ այս ոլորտում դատախազության և իրավապահ մյուս մարմինների կողմից իրականացված համագործակցված, ուղենիշային աշխատանքները:

Հրապարակայնության ապահովման տեսանկյունից առաջնահերթություն է համարվել մարդու հիմնարար ազատությունների պաշտպանության ապահովմանը միտված քրեադատավարական ընթացակարգերի նշանակալի փոփոխություններին վերաբերող՝ ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների, դրանց ընդունման պատճառահետևանքային կապերի հանրայնացումը: Այս համատեքստում ևս կազմակերպվել են տեղեկատվական-պարզաբանողական նշանակության նյութեր՝ ինչպես տպագիր և համացանցային, այնպես էլ էլեկտրոնային լրատվամիջոցների համար:

2017թ. հոկտեմբերի 7-ից 8-ը ՀՀ դատախազության ներկայացուցիչները ՀՀ գլխավոր դատախազի գլխավորությամբ մասնակցել են «ՀՀ դատախազության դերը դատաիրավական համակարգում՝ ՀՀ սահմանադրական փոփոխությունների, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի և Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախանշումների լույսի ներքո» թեմայով լրագրողների համար ՀՀ դատախազության նախաձեռնությամբ կազմակերպված սեմինար-քննարկմանը, որի ընթացքում քննարկվել են անմեղության կանխավարկածի սկզբունքին և նախնական քննության ընթացքում տեղեկատվության ազատության իրավունքի իրացմանը, մինչդատական վարույթում ձեռք բերվող փաստական տվյալների, անձնական և ընտանեկան կյանքին առնչվող

տեղեկությունների գաղտնիության և տեղեկատվության ազատության իրավունքների հարաբերակցությանը, քրեական գործի լուսաբանման ժամանակ ԶԼՄ-ներում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառմանը, ինչպես նաև արդար դատաքննության իրացման պահանջի համատեքստում դատական քննության հրապարակայնությանն առնչվող խնդրահարույց հարցեր:

ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների ղեկավարները տարբեր ձևաչափերով հրապարակային ընդարձակ տեղեկատվություն են տրամադրել համապատասխան վարչական տարածքում 2017թ. ընթացքում հանցավորության, քրեական հետապնդման ոլորտի աշխատանքների, հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ: